



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

17619-22





2278

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐՈՂՆԵՐ Նո 1


## ԳԱՐԵԳԻՆ ԲԵՍ

# ԿՅԱՆՔԻ ՅԵՐԳԸ

ՎԵՏՐՎԵՒԹՆԵՐ ՅԵԼ ԱՐՉԵԿ ԲՈՆԱՏԵՂԻԹՅՈՒՆՆԵՐ

七  
七

A 9513



ՊԵՏԱԿԱՆ 1930 ՅԵՐԵՎԱՆ

Հրատ. № 1323

Գրառեալ. № 5285 (բ) Պատ. № 700 Տիրաժ 2000

Գետհրատի լերկըրութ տպարան Յեղիանում.

## ՅԵՐԲ ԿԱՍԼԶԻ ԶՅՈՒՆԸ

### 1

Փոքրիկ քաղաքի փոքրիկ, աննշան փողոցներից  
մեկի նույնպես փոքրիկ ու աննշան տան սենյակնե-  
րից մեկը:

Սենյակի հինավուրց թախտի վրա, լերեսը դեպի  
պատն արած, շորերը հագին, անփույթ պառկած ե  
հիսնամյա մի ծերունի:

Սենյակն ունի մի պատուհան՝ կոտրտված ա-  
պակիներով:

Կեղտոտ սեղանի մոտ դրված ե մի ջարդված  
աթոռ:

Պատից կախված ե մի որացույց, վորը ցուց ե  
տալիս հունվարի 16-ը, մինչդեռ զրսում գարունն ե  
ժպտում, և ուրիշ, շատ ուրիշ, համարյա թե բոլոր ո-  
րացույցներն ասում են, թե այդ որն ապրիլի 23. նե-

կեղտի մեջ կորած այդ որացույցին լերկար ժա-  
մանակ մարդկային ձեռք չի կողել:

Ժամանակ-առժամանակ շարժվում ե հինավուրց  
թախտի վրա պառկած ծերունու աջ ձեռքը, այն ժա-  
մանակ ճանձերը, այդ անկոչ հյուրերը, վոր նստել  
ելին նրա դեմքին, փախչում են դեպի հեռուներն ու,

յերս հանդստանում և ծերունու աջ ձեռքը, նորից գալիս ու նստում են նրա դեմքին:

Բացվում ե դուռը, և շեմքին յերեսում և կարծես կյանքից բեզարած մի կնոջ դեմք:

Շեմքին քիչ կանգնելուց հետո նա մտնում և սենյակ, իր թուլ, չափաղանց թույլ ձեռներով ծածկելով դուռը:

Սենյակի միջ կանգնելով, նայում և հինավուրց թսխոփի վրա պառկած ծերունուն ու նստում ջարդված աթոռին:

Աթոռը հիվանդագին մի ճիչ և հանում, շարժվում և հինավուրց թախտի վրա պառկած ծերունու աջ ձեռքը, և հետո ամեն ինչ թաղվում և լոռւթյան ու անշարժության զրկում:

Ջարդված աթոռին նստած կինը սեղանի վրա թափված թղթերի միջից հանում և փոշով ծածկված մի տետր և սկսում ե թերթել այն. .

Թերթելով այդ փոշով ծածկված տետրը, նրան թվում ե, թե թերթում ե իր անցյալը, անվերադարձ անցյալը:

— Մամա, — լսվում ե զրսից, և ապա բացվում ե դուռն, ու ներս ե վազում մի յերեխա:

Նա ժպտում ե, նրա ճակատի վրա խաղում են դեղին, համարյա վոսկեգուն մազերը:

Նա վազում ե դեպի մայրը, ընկնում ե նրա գիրկն ու՝

— Ինչո՞ւ ուշացար, յես այնքան սպասեցի քեզ: Հետո նա դարձյալ ժպտում ե, համբուրում մոռը և նայում դեպի հինավուրց թախտը ու հարցնում.

— Ելի՞ քնած ե հայրիկը:

Ժպիտն անհետանում ե նրա գևմքից, մալրն ալդ զգում ե, գրկում ե նրան ու համբուրում նրա այտերը, մազերը, ճակատը...

— Գնա, գնա դրսում խաղա, -- շշնջում ե նա յերեխալի ականջին:

Ռուրիկը նայում ե մոր աչքերին ու հասկանում ե, վոր մայրն այսոր շատ, շատ տխուր ե:

— Լավ, լավ, վոր այդպես ե, յես կհեռանամ, — ասում ե Ռուրիկն ու դուրս դնում, սրբելով արցունքները:

Տիկինը նորից ե թերթել սկսում փոշեպատ տետրը, նորից դեպքերն անցնում են նրա աչքերի առաջից ու նորից նա հիշում ե իր անվերադարձ ու յերջանիկ անցյալը:

Աչքերից թափվում են արցունքի կաթիլներն ու ընկնում են փոշապատ տետրի վրա...

Ինչո՞ւ, ինչո՞ւ այսոր դնաց ալնտեղ, ինչո՞ւ կամեցավ այն քալին անել. մթե այդպիսով կարող եր իր կորցրած յերջանկությունը յետ դարձնել ..

Ախ, չեթե այսոր նա չկնար ալնտեղ, չեր հանդիպի նրան ու անցլալը, անվերադարձ անցյալը կշարունակեր թաղված մնալ փոշիների մեջ, ալնպես, ինչպես տետրը, վորտեղ գրել եր իր անցյալի ամենաքաղցր ըոպեների պատմությունը...

Յերեք հոգի ելին նրանք՝ ծնողներն ու ինքը:

Հայրը սպա յեր: Տեսնելով, վոր քաղաքում ապրելն անհնարին ե, շնորհիվ տիրող սարսափելի շարժումներին, ընտանիքը ուղարկեց դուռդ:

Ալդ ժամանակ նա տասնյոթ տարեկան եր:

1920 թիվ:

Շարժում, շարժում, շարժում: Կոխվ: Կովում հն  
բոլորը, կովում են ամեն տեղ:

Ցերկու ամիս անց քաղաքից լուր ե ստացվում,  
վոր ալդ լռիջների մեջ հաղթանակել են բայլշե-  
վիկները:

Քիչ անց նրանք իմանում են, վոր նրա հայրն  
սպանվել ե բայլշեվիկների ձեռքով...

— Ալ, ալդ բալյշեվիկները...

1921 թիվ:

Կարծեք շարժումներն սկսում են դադարել:

— Պետք ե գնալ քաղաք, — ասում ե մալրը, — ան-  
պալման պիտի հեռանալ գլուղից, այստեղ ապրել չի  
լինի, իսկ այնտեղ մենք դեռ կարող ենք գտնել մե-  
րոնց. նրանք ալդքան շուտ չեն պարտվի:

— Ալո, — համաձայնվում ե ինքը:

— Կգնանք քաղաք, — շարունակում ե մայրը, —  
այնտեղ կգտնենք մերոնցից մի լավ, հարուստ մարդ և  
քեզ կտամ նրան. չե՞ վոր դու հիմա հասունացած աղ-  
ջիկ ես արդեն:

Աղջիկը ժպտում ե, և հետեւյալ որը նրանք թող-  
նում են զյուղը:

### 3

Ապրանքատար գնացքը կանգ է առնում փոք-  
րիկ մի կայարանում, վորի վագոններից մեկում նըս-  
տած հյին նրանք:

Քիչ անց հայտնում են, վոր գնացքը դեռ մի-  
քանի որ կմնա կայարանում, ապրանք պիտի տանել  
քաղաք, իսկ նա, ապրանքը, դեռ չի ստացված:

Ճամպորդներն իջնում են վագոնից և սկսում  
զբոսնել:

Ինչո՞ւ յե կայարանի առաջ կանգնած այն տղան  
շատ նայում սպայի աղջկան. .

Ինչո՞ւ յե աղջիկն ել նայում նրան ու ժպտում...

Սպայի կինը նկատում ե այդ և հանդիմանում  
աղջկան:

Յերբ վառվում են կայարանի լույսերը, ճամպորդները դեպի վագոններն են քայլում, ընթրում ու ապա քննելու պատրաստություն տեսնում:

Վագոնում քննում են բոլոր, քննում ե և սպայի կինը ..

Միայն արթուն ե նա, սպայի աղջիկը .. Իջնում  
և վագոնից ու շարժվում դեպի կայարանի լույսեր...

Նրա աչքերը վորոնում են, քիչ առաջ իրեն  
նայող տղին, վորը հագին ուներ կարմիր բանակայինի  
հագուստ... Ահա և նա... Նրանք մոտենում են իրար...  
Նայում են միմյանց ու վոչ մի ձախ...ժպտում են...

Ինչո՞ւ յե այդ կարմիր-բանակային տղան նայում  
անծանոթ աղջկան ու ժպտում:

Ինչո՞ւ յե անծանոթ աղջիկը նայում այդ անծանոթ կարմիր-բանակայինին ու ժպտում:

Ինչո՞ւ չի քննել վագոնում, մյուսների պես, այդ  
աղջիկը և իջել ե վագոնից, մոտեցել կայարանի լույսերին  
ու կամեցել տեսնել այն անծանոթ ժպտացող  
տղային:

— Դուք ել եք ճամպորդ, — վերջապես հարցնում  
ե աղջիկը:

— Այո, — պատասխանում ե տղան:

— Վո՞ւտեղ եք զնում:

- Դեպի հյուսիս:
- Յերբ եք թողնելու այս կայարանը:
- Մի շաբաթ անց, —պատասխանում ե կարմիրանակայինը. —մի ուրիշ խմբի լել հնք սպասում:
- Լուսիթյուն: Լուսերը շարունակում են վառվել: Նրանք շարունակում են նայել միջանց ուժպատալ:
- Իսկ դուք վո՞րտեղ եք գնում, —հարցնում ե տղան:
- Դեպի հարավ, —պատասխանում ե աղջիկը:
- Կայարանը լուսավորված ե, կայարանում շատ մարդիկ են շարժվում, շարժվում են և նրանք, ու կայարանի լուսերը լուսավորում են և նրանց:
- Նրանք շարունակ նայում են իրար և ժպտում:
- Վորքան գեղեցիկ ե ալդ գեղեցիկ տղան, —մտածում ե աղջիկը:
- Զքնաղ աղջիկ ե, —անցնում ե տղալի մտքով:
- Նրանք շարժվում են առաջ:
- Ահա անցան կայարանի վերջին տան մոտով:
- Ալստեղից արդեն սկսվում ե անտառը:
- Կայարանում վառվող լուսերն այժմ ել չեն լուսավորում նրանց, այլ լուսավորում ե գարնանային կապուտակ յերկնքում փայլող լուսնակը:
- Նրանք նստում են ծառի տակ ու նայում իրար:
- Լուսնակը նայում ե նրանց:
- Ժամանակը սահում անցնում ե, իսկ նրանք շարունակում են նայել իրար, մոռանալով բոլորը, կայարանը, վագոններն ու վագոններում քնած մարդկանց...
- Շարժվելու ժամանակ ե, —վերջապես հիշեցնում ե աղջիկը:

Վոտքի լեն կանդնում և այժմ կանդնած նայում իրար:

Տղան բռնում և աղջկա ձեռքից...

Աղջիկը չի դիմադրում...

Դողում են տղի ձեռքերը, դողում են այդ դողացող ձեռքերի մեջ գանվող ձեռքերը:

— Ինչքան գեղեցիկ ես, — կամաց շշնջում և տղան ականջին:

Աղջիկը լսում և այդ ու կարմրում:

Վորքան մոտիկ և տղի զլուխն իրեն: Այժմ նազում և այդ գեղեցիկ տղայի գեղեցիկ զլխի գեղեցիկ մաղերի անուշ բռւյրը:

Ախ, ինչպիսի ուրախությամբ նա կզրկեր ու կհամբռուրեր այդ զլուխը...

Մինչ աղջիկը, տարված իր մտածողությամբ, մոռանում ե իր ուր լինելը, տղան գրկում և նրան, իր ուժեղ, չափազանց ուժեղ բազուկներով սեղմում նրա իրանը, համբռուրում նրա այտերն ու աչքերը. .

Աղջիկը կարծես խոր քնից և արթնանում, մի փոքրիկ, չափազանց փոքրիկ ու թույլ ճիչ և արձակում, վորը մեռնում և մոտակա ծառերի խիտ տերեների գրկում և հետո, զզալով իրեն տղի ուժեղ բազուկների մեջ, ժպտում և, կարմրում, ինքն ել և համբռուրում տղի մազերից և կամաց շշնջում.

— Շարժվելու ժամանակն ե,

Տղան իր բազուկներից աղատում և աղջկան, և նրանք շարժվում են դեպի կայարանը:

Ահա նորից նրանց լուսավորում են կայարանի ուլսերը...

— Վաղը.—ասում ե տղան:

— Այո, —պատասխանում ե աղջիկը, մենք դեռ  
անհայտ ժամանակով այստեղ ենք:

Ու նրանք բաժանվում են:

Մայրը քնած եր..., Աղջիկն ել ե պառկում, փոր-  
ձում ե քնել, բայց...

Ո՞վ եր այն տղան .. Հարսւստ եր, թե չքավոր...  
ինչու նա կարմիր ե... Միթե քաղաքում մալրն  
իր համար դրանից լավ տղա կարող ե գտնել:

Այն ի՞նչ ե սկսում ծնվել ու շարժվել իր կրծքի  
տակ ..

Անպիտանն ի՞նչպես պինդ դրկեց ու եր ուժեղ  
բազուկներով սեղաց նրա իրանը... Նա ցավացրեց  
իր իրան, իսկ այդ ցավու այնքան քաղցր եր... Ո՞վ  
եր վերջապես այդ տղան...

Մտածում եր աղջիկը, շարժվում անկողնում և  
զգում եր, վոր կրծքի տակ մի նոր, անծանոթ, սա-  
կայն քաղցր բան ե ծնվել...

#### 4

Հետևալ որն առավոտիան ճամպորդներն իջոն  
վագոններից և շարժվեցին դեպի կայարանի լվացա  
րանը...

Ահա գեղեցիկ զինվորն ել ե լվացվում: Նրանք  
նայում են իրար և ժպտում:

Մայրը դարձեալ նկատում ե այդ, սակայն լը-  
ռում:

Վերադառնում են վագոնները:

— Ինչու յես շարունակ նայում այն մուրացի-  
կին և ժպտում, —հարցնում ե մայրը:

— Միթե նայելն արգելվում ե,—հարցնում ե  
աղջիկը:

— Իհարկեվոչ,—պատասխանում ե մայրը,—բայց  
չի կարելի բոլորին նայել:

**Աղջիկը լուռ ե:**

— Դու գիտե՞ս, թե ով ե նա, — շարունակում ե  
մայրը,—հորդ սպանողներիցն ե:

Աղջկա աչքերում լերեկում են արցունքներ. չե՞  
վոր նա սիրում եր և շարունակում ե սիրել և հիշել  
իր հորը... Նրա աչքերի առջեզր անցան սկզբում հոր,  
սպա բանակալինի պատկերները...

Բայց մայրն ինչու յե՛ իրեն արգելում նրան նա-  
յելը...

Իսկ նու յեթե գիտենար, վոր իր աղջկան համ-  
բուրել ե այն «մուրացիկը»...

Դարձյալ լերեկո .. Դարձյալ վառվում են կայա-  
բանի լուսերը, դարձյալ դեպի վագոններն են շարժ-  
վում ճամպորդները, ընթրում ե քնում... դարձյալ  
սպալի աղջիկն իջնում ե վագոնից ու դեպի կայարա-  
**նը քայլում:**

— Աշխե՞ն:

— Գրիշա:

Յեվ յերկու գեղեցիկ դեմքեր ժպտում են մի-  
մյանց:

Նրանք բարեկում են իրար և առաջ շարժվում...  
Կայարանի վերջին տունը: Անտառու կանգնում են  
հսկայական կատնու տակ, տղան գրկում, համբուրում  
և սեղմում ե կըծքին սպալի աղջկանը:

Ի՞նքան յերջանիկ են նրանք:

Պառկում են ծառի տակ...

Գիշեր ե, վերեից լուսինն և նայում նրանց, իսկ  
ներքեւ նրանք են ժպտում իրար...

Տղան գրկում ե աղջկա իրանը... Աղջիկը կամհե-  
նում ե զիմադրել, բայց հոսում ե ջերմագին մի հե-  
ղուկ, և նա թուլանում ե ու տնձնատուր լինում տր-  
պին...

Ու այդ գարնանալին գիշերը նրանք, առաջին  
անգամ, ապրում և զգում են այն, ինչ վոր չելին  
զգացել ու ապրել մինչև այդ ժամանակ...

Բաժանվում են իրարից և լուռ դեպի կայարան  
քայլում:

— Այժմ դու իմն ես,—ասում ե տղան, — յես կտա-  
նեմ քեզ հյուսիս և այնտեղ կապրենք միասին:

— Իսկ մայրս:

— Նրան ել կտանենք:

— Յեթե չհամաձայնվի՞:

Լոռություն:

— Իսկ դու մենակ չե՞ս գա:

— Կարող եմ արդյոք բաժանվել նրանից:

— Բայց չե՞ վոր...

— Լավ, — ընդհատում ե աղջիկն, — այդ մասին  
հետո:

Կայարան: Վագոններ: Վառվում են կայարանի  
լույսերը: Նրանք բաժանվում են իրարից:

— Մայրիկ, — ձայնում ե Աշխենը հետելալ առա-  
վոտլան:

— Համմե:

— Զե՞նք կարող արդյոք դեպի հյուսիս գնալ: Ի՞նչ

- ունենք այն ոտար ու անծանոթ փոքրիկ քաղաքում։  
— իսկ ի՞նչ գործ ունենք հոգուսիսում, — հարցը-նում և մալը։  
— Գնանք, գնանք, մայրիկ, գնանք նրանց հետ։  
— Ում հետ, — հարցնում և մայրը և մի կասկա-ձավոր հայացք զցում աղջկա վրա։  
— Այ, այն տղաների, կարմիրների հետ։  
— Հորդսպանողների հետ։  
Լոռություն։ Մայր ու աղջիկ անթարթ աչքերով  
իրար են նայում։  
— Բայց մի՞թե նա մեղավոր ե, — խզում և լոռու-  
թյունն Աշխենը։  
— Ո՞վ, — հարցնում և մալը։  
— Այն տղան, վոր շարունակ նայում եր ինձ։  
— Դու մտածեւմ ես նրա մասին։  
Դարձյալ լոռություն։  
Ախ, ի՞նչպես, ի՞նչպես հասկացնել այդ կնոջ, վոր  
նրանք սիրում են իրար, վոր նրանք համարյա ի՞ն...  
ամուսնացել են...  
— Մայր։  
— Համմե։  
— Ցեթե այն տղան առաջարկություն անի և  
կամենա հետս ամուսնանալ, ի՞նչ կանես։  
— Ոճի լեղի կխմացնեմ, — պատասխանում և  
մայրը։  
— Մայր։  
— Ի՞նչ ե, սրտովդ չե, — հարցնում և մայրը, — իսկ  
դու, դու, ի՞նչ կանելիր։  
Աղջիկն աչքերը հառում ե գետնին։  
— Պատասխանիր, ի՞նչ կանելիր, — նորից և հար-  
ցնում մալը։

— Կհամաձայնվելի, — պատասխանում ե աղջիկը:

— Անպատկառ, հայրասալան աղջիկ:

— Մայր:

— Հորիր, Կորիր աչքիցս, ել յես քո մայրը չեմ, — ճշում ե սպալի կինը. — գնա, գնա նրա հետ, ով սպանել ե հորդ. գնա, սիրիր նրան, ալրիր նրա հետ և յերջանկացիր. յես ել քո մայրը չեմ...

Ու սպալի կնոջ աչքերում արցունքի կաթիլներ յերևացին:

— Իսկ յես՝ հիմարս, շարունակ մտածում եմ, թե ինչպես բախտավորեցնեմ քեզ... Գտնեմ մերոնցից մի հարուստ, որինավոր մարդ, մտածում եմ յես, և քեզ տամ նրան, իսկ դու այսոր բոլորը մոռացար, ջուրը ածեցիր:

## 6

Յերեկոյան գնացքը պիտի շարժվի:

Յերկու հոգի պիտի բաժանվեն ու ել հավիտյան, գուցե հավիտյան, չտեսնեն իրար...

Մայր ու աղջիկ...

Գրիշա և Աշխեն...

Ո՞վ կզրկվի մյուսից...

— Վհչ, վոչ, յես չեմ կարող բաժանվել նրանից, յես կփախչեմ նրա հետ... Բայց արդյոք կարող եմ բաժանվել մորիցս...

Կեսոր ե:

Տղան կալարանումն ե... Աղջիկը նկատում ե նրան և, մորից ծածուկ, դեպի նա շարժվում...

Աշխենը տխուր ե, տղան նկատում ե այդ:

Նրանք նայում են իրար և վոչ մեկը չի համարձակվում ժպտալ...

— Յերեկոյան կշարժվի մեր գնացքը, — կամաց շնչում ե Աշխենը:

— Յեվ նա մւմ կտանի դեպի հարավ:

— Մորս:

— Միայն:

— Այո, — պատասխանում ե աղջիկը, — յես վորոշեցի մնալ քեզ մոտ, դնալ դեպի հյուսիս:

— Աշխեն, սիրելի իմ Աշխեն. յես այդպես ել սպասում եյի. չե՞ վոր մենք սիրում ենք իրար:

Նրանք շարժվում են դեպի առաջ:

Նորից անտառ... Ծառերը շարժվում են, տերեները՝ խշխշում: Գրիշան համբուրում ե աղջկա աչքերը և այդ աչքերում արցունքի կաթիլներ նկատում:

— Խնչու յես լալիս, — հարցնում ե նա, — միթե ալդքան դժվար ե բաժանվել մորից ու դնալ սիրածի հետ:

— Խեղճ մալոս ինձնով եր միայն մխիթարվում, իսկ այժմ յես պիտի թողնեմ նրան: Սպանեցին ամուսնուն, այժմ ել միակ զավակից են զրկում:

Արցունքի կաթիլները խեղդում ելին նրան:

— Ո՞վքեր են սպանել հորդ, — հարցնում ե աըպան:

— Նրանք, վորոնցից մեկը հիմա ինձ բաժանում ե մալրիկից, — պատասխանում ե աղջիկը:

— Միթե հայրդ հականե...

— Սպա յեր. — ընդհատեց նրան Աշխենը:

Ու տերեց խորին լռություն: Քամին շարժում ե ծառերի տերենները, և այդ շարժվող տերենները յերգում են մի տխուր մեղեղի:

Նրանք նստում են ծառի տակ, աղջիկը դլուխը հենում ե տղիուսին ու, թե՝

— Պատմիր, պատմիր ձեր կոփառերի մասին, իմ հերոս, յես ուզում եմ լսել քեզ ու մոռանալ վիշտը, հորս, մորս, ինձ և միայն քեզ, քեզ սիրել, տեսնել, լսել ու շնչել քեզնով!

Ու տղան չի մերժում աղջկան և սկսում է պատմել իրենց կոփառերի մասին...

...Յիրկու տարի առաջ եր, յերբ նրան զինվոր տարան, և այդ յերկու տարվա ընթացքում ինչքան կոփառերի մեջ ե յեղել նա, կոփառեր, շարունակ կը ոլիքներ:

Հիմա յե, վոր դադարել են կոփառերը, և այժմ ինքը, ուրիշների պես, գնում ե հյուսիս՝ աշխատելու և ուսումը շարունակելու:

Այժմ ինքը շատ յերջանիկ ե, վոր միացել ե բայլշիկներին և նրանց հետ կովել ազատության համար:

Կոփառեր, կոփառեր, կոփառեր...

Իրենք սպանել են ուրիշներին, իսկ ուրիշներն՝ իրենց...

Մի անգամ այնպես յեղավ, վոր ինքն ել պիտի սպանվեր, բայց...

Աղջկա գույնը թռավ...

— Վախեցմբ. չե՞ վոր յես հիմա կենդանի յեմ, սիրելիս, — հանգստացը նրան տղան:

— Պատմիր, պատմիր, տեսնեմ ալդ թնչպես պատահեց, յես այժմ հանգիստ եմ, յես կարող եմ լսել բոլորի մասին:

Եկվ տղան համբուրում ե նրա արցունքոտ աչքներն ու սկսում իր ընդհատված պատմությունը.

Այսպես յեղավ։ Թաղաքը վերցրել ելինք մենք, կտրմիրներս։ Մեր թշնամիները քաղաքը թողել և փախել ելին։ Հանկարծ լուր ենք ստանում, վոր քաղաքի վերին թաղամասի վոստիկանատունը լիքն և սպաներով ու սպիտակլ զինվորներով, վորոնք կրակում են կարմիրների վրա։ Հասնում ենք վոստիկանատուն։ Շրջապատում ենք այն։ Դրսից կրակում ենք մենք, ներսից՝ նրանք։

**Այդ ժամանակ մեղնից յերեք հոգի սպանվեցին,** իսկ նրանցից, ինչպես հետո իմացանք, հինգ հոգի։

Վերջապես, յերբ վերջանում են նրանց գնդակների պաշարը, մենք գրավում ենք վոստիկանատունը։ Այնտեղ մենք գտանք տասը սպա և քսանհինգ սպիտակ զինվորներ։

Մերոնք շրջապատում են նրանց և դեպի դուռը մժվում, իսկ յես և Սաշան, ընկերս, մնում ենք վոստիկանատունը ստուգելու համար։

Բացում ենք սեղանների արկղներն ու հավաքում այնտեղ յեղած բոլոր թղթերը։

Ամեն ինչ վերջացրել ելինք, ու մնացել եր պահանը։ Մոտենում ենք նրան։ Դուռը կողպած են Հրացանի սվինի ոգնությամբ բաց ենք անում այն և լինչ տեսնում... Այնտեղ թագնվել եր մի սպա... Նա ձեռքին բռնաց ուներ մի ատրճանակ, իսկ աչքերն ինչպես եյին փայլում խավարի մեջ։ Նա կրակում է և Սաշան մահացու մի վերք և ստոնում։ Յես հարճակվում եմ սպայի վրա, խլում նրա ձեռքից արճանակը... Սկսում ենք կռվել իրար հետուածական պատճենը։

Ատրճանակն ընկած եր գետնին, դեպի վորը սողում եր Սաշան, ընկերս... Յես նկատում եմ, թե ինչ-որոշական գրանցում է առաջարկը։

պես արյունը հոսում և նրա վիրավոր կրծքից... Սպան  
մեկնում և ձեռքը և կամենում և վերցնել ատրճանա-  
կը... Նրա ձեռքը մոտեցավ, կպավ ատրճանակին և...

— Բավական ե,—ընդհատում և աղջիկը, — լես չեմ  
կարող բոլորը հանգիստ սրտով լսել:

— Լավ, ել չեմ շարունակի, — ասում ե տղան:

Արեգակը թեքվել և դեպի արեմուտք... Շուտով  
կմթնի, և գնացքը կշարժվի...

— Շարժվենք, շարժվենք դեպի կայարան, յես  
ուզում եմ գոնե վերջին անգամ հեռվից նայել մորս:

Դանդաղ քայլերով նրանք առաջ են քայլում...

Քամին, գարնանալին հով քասին, համբուրվում  
և նրանց հետ ու սլանում դեպի հեռուները...

Աղջիկն այժմ քիչ հանդարտվել ե, նա խնդրում  
ե, վոր տղան շարունակի, վերջացնի իր ընդհատված  
պատմությունը...

— Սպան վերցնում և ատրճանակը և ուղղում  
դեպի ինձ, — սկսում ե տղան, — ու այն բոպեյին, յերբ  
նա կամեցավ կրակել ատրճանակը, մեջքից արլուն  
հոսեց, թուլացան ձեռքերը, և անզգա փովից դետնին:  
Ընկերս նույնպես մահացել եր: Նա ձեռքին բռնած  
ուներ արյունոտ մի սվին...

— Ո՞հ, ի՞նչ լավ յեղավ, վոր գուք սպանեցիք  
նրան, — ասում ե աղջիկը:

— Յես հանում եմ սպալի մոտ գտնվող բոլոր  
թղթերը և միքանի մարդկանց ոգնությամբ դուրս ենք  
տանում թե նրա և թե մյուսների դիակները...

Այս յերկու տարվա ընթացքում շատ մարդիկ եմ  
սպանել յես, բայց վոչ մեկը չի նմանվել նրան... Ի՞նչ-  
պես ելին կարմրել բաց մնացած աչքերը, արյունը

տվել եր դեմքին, և կարմրել եր վողջ լերեսն ու այդ  
կարմրության մեջ պարզ լերեռում եր նրա ձախ ալտի  
վրա գտնվող սև խալը:

— Խալը, — ճշաց աղջիկը,

Նրանք քայլում են առաջ և մոտենում կայա-  
բանին:

— Այս, խալը, ձախ ալտի վրա գտնվող սև և  
մեծ խալը:

— Իսկ նրա անուն, ազգանունն իմացա՞ր:

— Այս. Իվան Սերգեյև Մատվեյեիչ:

— Հայրիկ, հայրիկ, հայրիկ...

Կայարանում լույսերը վառվում են...

— Մարդասպան, սրիկա, — գոռում և աղջիկը,  
ապտակում և տղին և խուռն ամբոխի միջով առաջ  
վագում:

Ինչո՞ւ կայարանը հանկարծ մթնեց, ինչո՞ւ ամեն  
ինչ սկսեց պտտվել...

## 7

Ի՞նչ անել...

Գնացքը շուտով կշարժվի. հարկավոր և մի վո-  
րոշում հանել...

Անջատվել մորից ու հեռանալ Գրիշայի հետ, վո-  
րը սպանել և իր հորը...

Անջատվել Գրիշալից, վորին նա սիրում ե...  
Վոչ... այդ շատ գժվար եւ Առաջ, լերը նա չգիտեր այդ  
մասին, վորոշեց մնալ նրա, իր սիրածի մոտ, իսկ  
մլժմ... Արդյո՞ք հեշտությամբ նա կարող ե մոռանալ  
այդ կարմիր բանակալինին, նրան, վոր իրեն գրկել  
ե իր ուժեղ բազուկներով և սեղմել իր իրանը...

Ի՞նչ անել ..

Ախ, մայր, մայրական զգացմունք, յեթե նա քեզ լսեր ու չնայեր այդ տղին, քեզնից զաղտնի չըդրուներ նրա հետ, անձնատուր չլիներ նրան, լինչ լավ կլիներ...

Քեզ հետ կգար քաղաք և կամուսնանար քաղաքի հարուստ մարդկանցից մեկի հետ...

Բայց, ախր, հարուստը նրա պես չի լինի, նա այնպիս հուժկու բազուկներ չի ունենա...

Մայրը նայում ե աղջկա մտազրադ դեմքին...

— Ինչո՞ւ յե թռել յերեսիդ գույնը, ինչո՞ւ ել առաջվա պես չին փայլում աչքերդ—հարցնում և մայրը:

— Վոչինչ,—պատասխանում ե աղջիկը:

Տասը ըոպելից հետո գնացքը կշարժվի...

Ի՞նչ անել...

Ցոթ ըոպե մնաց...

Անջատվել ու մոռանալ նրան...

Ցերկու ըոպե յել անցավ...

Վոչ, վոչ, այդ անհնարին ե...

Հնչում ե առաջին զանգը...

Ճամպորդները վազում են դեպի վագոնները:

Սպալի կինը գնացել ե ջուր բերելու:

Աշխենը վազում ե դեպի դուռը և կամենում իջնել վագոնից...

— Իջնելու կարիք չկա, մենք ել բարձրանում ենք, — լսվում ե մոր ձայնը:

— Մայր, — ճշում ե Աշխենը և ընկնում մոր գիրկը, — մայր, յես անբախտ.

— Լալիս ես: Ո՞վ ե անբախտը: Սպասիր մի

գնանք քաղաք, տես այնտեղ քեզ ինչպես կրախտավորացնեմ, — պատասխանում ե մայրը:

— Հնչում ե յերկրորդ զանգը... Գնացքը շարժվում ե առաջ...

— Աշխեն, Աշխեն, յես անմեղ եմ, — լսվում ե մի ձայն:

Տղան նոր ե ուշքի յեկել և հասկացել տմեն ինչ: Բայց արդեն ուշ ե. գնացքը առաջ ե սլանում...

— Մայր!

— Մի լար, աղջիկս:

Գնացք, գնացք, կանգ առ, մի շարժվիր, չե՞ վոր կալարանում մնաց այն կարմիր-բանակային տղան...

Վոչ, վոչ, շարժվիր ու շուտ հեռացիր հորը սպանողից...

Գնացքը սլանում ե առաջ, դեպի հարավ...

Միքանի որ անց մի գնացք ել կուլանա դեպի հյուսիս, և նրանք ավելի ու ավելի կհեռանան իրարից...

Տղան լուռ կանգնել ե կալարանում և աչքը հառնել դեպի հեռուները, դեպի այն կողմը, վորտեղով անցավ գնացքը...

Ո՞վ ե մեղավոր...

Փոքրիկ քաղաքի ամենամեծ փողոցի վրա յերգունվում իսակ Բեհրութովի խանութը, վորն այդ փոքրիկ քաղաքի փոքրիկ խանութներից ամենամեծն եր:

Քառասուն տարեկան եր իսակ Բեհրութովը, վորի կինը վաղուց եր վախճանվել, վորից նա յերիխաչեր ունեցել...

Յերեք ամիս անց, այդ քաղաքի խանութների արքայի հետ ամուսնացրեց իր աղջկան սպայի կինը:

Աղջիկը չհակառակեց...Միթե նա կարող եր վերադարձնել իր անվերադարձ անցյալը...

Ամուսնությունից մի ամիս անց մեռավ մայրը, և նա մնաց մենակ...

Առաջին գիշերը, յերբ իսակ Բեհրութովը գրկեց աղջկա մերկ իրանը, նա հիշեց Գրիշային, նրա ուժեղ բազուկները, բայց թույլ բազուկների ու թույլ շնչառության ներկայությունը շուտով սթափեցրեց նրան...

Անցավ վեց ամիս և նա մի տղա ունեցավ...Բոլորն ել զարմացան...

Զե՞ վոր նա աղջիկ եր, ինչպես կարող ե վեց ամսվա կինը յերեխա ունենալ... Դա հրաշք ե, այս, կատարյալ հրաշք ե...

— Իսակ Բեհրութով, ինչո՞ւ կինդ շուտ յերեխա ունեցավ, — հարցրին ծանոթներն ու բարեկամները:

— Ի՞նչ ե, նրա ամուսնուն յերեխա ելիք կարծե՞լ, — պատասխանեց իսակ Բեհրութովը. — ամուսինն այն ե, վորը ժամանակից շուտ ե յերեխա ունենում:

— Բայց դա անբնական ե, նա չպետք ե հիմա յերեխա ունենա:

— Յերբ կինը յերեխա յե բերում, չեն հարցնի՝ վերտեղից ե այդ յերեխան, ինչո՞ւ շուտ բերեց: Դա կարեռ չե. կարեռն այն ե, վոր նա յերեխա ունենա, և իմ կինս ել ունեցավ, վորի կարիքը յիս վաղուց եյի զգացել...

Անցան որեր, այն ժամանակ խորհրդային փոքրիկ քաղաքի մեծ փողոցի մեծ խանութն աստիճա-

նարար փոքրացավ, անցավ դեպի փոքրիկ փողոցները և վերջապես փակվեց...

Իսակ Բեհբութովը զրկվեց իր տնից և սկսեց ընակվել այդ փոքրիկ քաղաքի փոքրիկ, յետ ընկած ու աննշան փողոցներից մեջի վրա գտնվող մի փոքրիկ տնում...

Յերբ նա փակեց իր խանութը, դադարեց տնից դուրս գալ Առավոտը զարթնում, հագնվում, թեյում եր, հետո շորերով պառկում թախտի վրա և քնում...

Կինը սկսել եր կռվել նրա հետ, ասել եր, վոր հարկավոր և դուրս գալ տնից և աշխատել, հաջ գտնել ընտանիքի համար. ու նա ձեռք եր բարձրացրել կնոջ վրա...

Նա, այդ խեղճ կինը, շատ անգամ եր կամեցել վերջ տալ իր կյանքին, բայց մարդական սերն ստիպել եր նրան ձեռք քաշել այդ մտքից, տպրել ու տանջվել...

Յերեկ դարձյալ կռվեց ամուսնու հետ, ասաց, վոր քնելով չի կարելի կին և յերեխա պահել, վոր ինքը հոգնել ե ուրիշի համար շորեր լվանալուց:

Հարեաններն իմացան այդ և խորհուրդ տվին կնոջը գնալ կինբաժին, գանգտատվել ու բաժանվել ամուսնուց... Նա լսեց հարեաններին և հավանեց նըրանց խորհուրդը:

Նա զրել տվեց մի դիմում և քայլեց դեպի կինբաժին...

Ախ, յեթե նա այդ չաներ.. .

Նա հասավ այն յեռահարկ շենքին, վորի յերրորդ հարկում տեղավորված եր կին-բաժինը... Բարձրացավ աստիճաններով, մտավ մի մեծ դահլիճ,

հետո մի սենյակ և մոտենալով հայացքը թղթերի մեջ  
խորասուղված մի յերիտասարդ մարզու, հարցրեց.

— Կինբաժինը վոր սենյակումն եւ.

— Ար, այն սենյակումը, —պատախանեց յերի-  
տասարդ մարդը՝ հայացքը թղթերից հեռացնելով և  
հառելով կնոջ վրա:

— Ախ, —ճշաց կինը, և յեթե չլիներ աթոռը, նա  
կփռվեր գետնին:

— Ի՞նչ պատահեց, —զարմացավ յերիտասարդ  
մարդը:

— Վոչինչ, վոչինչ, այնպես, յես նվազ եյի ու  
քիչ մնաց վոր ուշաթափվելի... ներեցեք... վոչինչ,  
կտնցնի, —պատասխանեց կինը և քայլեց դեպի դուռը:

— Այս ըոսկեյիս յես ձեզ անձամբ տանեմ կին-  
րաժնի գրասենյակը՝ ասաց յերիտասարդ մարդը և  
հետևեց նրան:

— Հարկավոր չե, նեղություն միք քաշի, յես  
ինքս կգնամ, —ասաց կինը և թողեց սենյակը:

Նա թողեց յեռահարկ տունը և քայլեց դեպի  
փոքրիկ ու աննշան փողոցի վրա գտնվող փոքրիկ ու  
աննշան տունը... Կրծքի տակ ձմեռ եր՝ ու ձյուն. և լերը  
կհալչեր այդ ձյունը...

Ու քայլում ե ինքը, անցնում յերկար ու ձիդ  
փողոցներով և մտածում շարունակ նրա մասին...

Նա համարյա թե նույնն եր մնացել. այնպես  
ջահել, այնպես ուժեղ, այնպես...

Իսկ ինքը ծերացել եր, փոխվել եր դույնը, ձայնը,  
դեմքը, և տղան չկարողացավ ճանաչել իրեն...

— Վոչ, վոչ, յես չեմ կամենում աղատվել, չեմ  
կամենում, —կամաց շշնջում ե նա ու դանդաղ,  
համբընթաց քայլերով շարժվում դեպի տուն:

Ալդ փոշեպատ տետրը, ախ, այդ փոշեպատ տետրը, վորտեղ նա զրել եր իր անցյալը, անվերադարձ իհրջանիկ որերի մասին...

Նա պատում ե տետրն, այրում այն և մոխիր ե դարձնում անցյալը.

— Ախ, լեթե կարողանալի սիրտս ել այդպես այրել մոխիր դարձնել, — մտածում ե նաւ — ինչու, ինչու լսեցի ուրիշներին, ինչու գնացի այնտեղ, միթե կարող եյի փրկել ինձ... իսկ հիմա այնքան ցուրտ ե, այնքան ցուրտ...

Դրսում գարունն ե ժպտում, իսկ նա մրսում ե... Նա մոտենում ե պատուհանին և նայում դեպի դուրսը, դեպի ժպտացող արել...

— Հալեցրու, հալեցրու կրծքիս տակ կուտակված այս պաղ ձյունը, — ասում ե նա:

Բայց նրա կրծքի պատուհանները փակ են, ապակիներն անթափանցիկ, և արեի, ժպտացող արեի շոշերը չեն կարողանում թափանցել նիրս ու հալեցնել այնտեղ կուտակված պաղ ձյունը...

— Ցերք կհալչի այս ձյունը, — թուլացած գոռում ե նա, զարկելով կրծքին:

Նա զգում ե, վոր սիրան սկսում ե ավելի դանդաղ բարախել...

Նա զգում ե, վոր ել իր յերակներով արյուն չի հոսում...

Նա հեռանում ե պատուհանից և դեպի ջարդված

աթոռը շարժվում... Բայց... Լսվում ե մի թույլ ձիչ  
և ծանր մի մարմին ընկնում ե գետին...

Շարժվում ե կրկին հինավուրց թախտի վրա  
պառկած հիսնամյա ծերունու աջ ձեռքը, ճանճերը  
փախչում են, թախտը հիվանդագին մի ձախն ե հանում,  
անշարժանում ե ծերունու ձեռքը, և սենյակու թաղվում  
ե խավար լուսթյան գրկում...

Անցնում ե ժամանակը...

Լսվում ե թեթև մի ճռոց: Այդ դուռն ե, վոր  
բացվում ե, և շեմքում յերեսում ե փոքրիկ Ռուբրիկը...

— Հիմա կար՞դ եմ գալ ներս, մամա, հարցնում  
ե նա:

Ներսից վոչվոք չի պատասխանում նրան..

Փոքրիկ Ռուբրիկը մտնում ե սենյակ...

Ինչո՞ւ յե մայրը հատակին պառկել...

Ինչո՞ւ յե անշարժացել նրա դեմքը...

Ինչո՞ւ...

— Մամա, մամա, կուզիս ելի կհեռանամ սենյա-  
կից, — ասում ե նա և կտմաց-կամաց դեպի դուռը  
քայլում...

Բայց մայրը անշարժ ե...

— Մամա, մամա, վեր կաց, հատակին ինչո՞ւ  
յես պառկել:

Հետո փոքրիկ Ռուբրիկը քարանում ե, կարծես  
սկսում ե հասկանալ ամեն ինչ ու...

— Մամա, — ճչում ե նա և իրեն դեպի մոր դիակը  
նետում:

Արթնանում ե հինավուրց թախտի վրա քնած  
մարդը, բարձից բարձրացնում զլուխը, նկատում փոք-  
րիկ Ռուբրիկին ու....

— Քիչ գոռա, անպիտան, թող հանգիստ քնեմ,—  
ասում և նորից պառկում:

Փոքրիկ Ռուբիկը զրկում ե մոր գլուխը և համ-  
րուրում նրա քարացած աչքերն, ու իր փոքրիկ աչքե-  
րից ել թափկում են արցունքի կաթիլներ, ընկնում  
մոր լերեսին և հոսում մոր դալկացած այտերի վրա-  
յով դեպի ներքե, դեպի խուլ փողոցի վրա գտնվող  
փոքրիկ ու աննշան տան հողե հատակը...

**Ի՞նչ** գիտեր փոքրիկ Ռուբիկը այն տղի մասին,  
վորը սիրել եր իր մորը, վորը լեղել եր իր հայրը, վորը  
գնացել եր հյուսիս՝ սովորելու, և հետո ուղարկել եյին  
հարավային այդ քաղաքն՝ այնտեղ աշխատելու...

Նա ի՞նչ գիտեր, վոր իր անծանոթ հայրն ալժմ  
ամուսնացած ու յերեխաների, նոր լերեխաների  
հայր եր...

Նա ի՞նչ գիտեր, թե լերը կհալչեր ձլունը...

## ՄԱՅՐԸ

Գարնանալին գեղեցիկ առավոտ ե:  
Արեգակն արևում է:

Արեգակի շողերը գալիս, գրակախառնվում են  
այգու ծառերի նոր բացված տերեւների հետ, իսկ  
գարնանալին մեղմ զեփյուռը համբուրում ե նրանց, և  
նրանք շարժվում են, պարում ողում, ու խնդում են  
կտնաչ տերեւները և ժպտում են կանաչ տերեւները:

Ցերբ տերեւները, սվավում են, արեգակի ճառա-  
գալթները պոկվում են նրանցից, ընկնում ծաղիկների  
վրա, ու ծաղիկներն ել են խնդում, և ծաղիկներն ել  
են ժպտում:

Ծաղիկները խաղում են արեկի շողերի հետ:

Այգում մարմնամարզությամբ են պարապում  
փոքրիկ յերեք-չորս տարեկան յերեխաները:

Դաստիարակչուհին հրանանգում ե, և նրանք  
մերթ թեքվում են դեպի աջ, մերթ դեպի ձախ, ցատ-  
կում են, քայլում են, խնդում ու ժպտում են:

Կիսամերկ յերեխաների հետ ել են գրկախառ-  
նըվում արեգակի ճառագալթները և վոսկեգույն շողերի  
գրկում նրանք խաղում են:

— Ազատ եք,—ասում ե դաստիարակչուհին:

Ցեվ յերեխաները դեպի ծաղիկներն են վազում:  
Ծաղիկները խաղում են արեկի շողերի հետ:

Ծաղիկները խաղում են փոքրիկ յերեխաների  
հետ:

Ծաղիկները նայում են յերեխաներին և խնդում:  
Յերեխաները նայում են ծաղիկներին ու ժպտում:  
Արեգակն արելում ե.

Գարնանային մեղմ զեփյուռն ե փչում, ու ծա-  
ղիկները թեքվում են և զեպի աջ և դեպի ձախ, ու  
նրանց հետ խաղացող յերեխաները թեքվում են և  
դեպի ձախ և զեպի աջ:

Ծաղիկները բուրում են անուշ:

— Դեհ, յերեխաներ, աշխատելու ժամն ե,— լսվում  
է դաստիարակչուհու ձայնը:

Փոքրիկ, յերեք չորս տարեկան յերեխաները քայ-  
լում են զեպի ալգու ծայրում զտնվող տունը, վորտեղ  
ապրում են իրենք, ծնողները, մեծ քույրերն ու մեծ  
յեղբայրները:

Նրանք մտնում են սի մեծ դահլիճ, նստում սե-  
ղանների մոտ զրած աթոռներին և սկսում աշխատել՝  
նկարներ նկարել, թղթից զանազան ձեերի առարկա-  
ներ պատրաստել:

Դահլիճի բաց պատուհաններով գարնանալին  
մեղմ զեփյուռը ներս և թափանցում և գրկում նրանց:

Մատիտները շարժվում են փոքրիկ յերեխաների  
ձեռքերի մեջ և թղթի վրա նկարում են մարդկանց,  
կենդանիների և ծառերի պատկերներ:

Մեկը մատիտի սուր ծայրը մոտեցնում է բերա-  
նին, դաստիարակչուհին նկատում ե այդ և հանդիմա-  
նում նրան:

Եերեխան նայում ե դաստիարակչուհուն, ժպտում  
և մատիտը հեռացնում բերանից ու սկսում աշխատել:

Կեսորին մոտ եւ:

Դահլիճի բաց պատուհաններով ներս են թափանցում գործարանի սուլիչների ձայները:

— Մաման:

— Պապան:

Յեվ դադարում ե աշխատանքն, ու յերեխաները դեպի այգու դուռն են վազում:

Դաստիարակչուհին ժպտում եւ:

Բացվում ե այգու դուռը, և ներս են մտնում փոքրիկ յերեխանների ծնողները, վորոնցից վոմանք գործարաններում են աշխատում, վոմանք՝ այլ հաստատություններում:

Յեվ ծնողները գրկում են յերեխաններին ու համբուրում նրանց:

Մի բանվորուհի թեթև ախ ե քաշում և հիշում իր մահացած վորդուն, հետո մոտենում ե փոքրիկ յերեխաններին, գրկում նրանց և ժպտում ու համբուրում փոքրիկներին:

Քիչ անց դպրոցից վերադառնում են յերեխանների քույրերն ու յեղբայրները:

Նրանք շարժվում են դեպի տուն. ճաշելու ժամն եւ:

Յերեխանները նստում են իրենց համար պատրաստված սեղանի շուրջը և սկսում ճաշել:

Փոքրիկ, յերեք տարեկան մի տղա, իր փամփլիկ ձեռքերով բռնում ե գդալը, տանում դեպի ափսեն, լցնում կերակրով և յերբ կամենում ե դեպի բերանը տանել, ձեռքերը շարժվում են, գդալը ծովում ե, և թափվում ե կերակուրը:

Յերեխանները ծիծաղում են, ծիծաղում են և ծնողները, քույրերն ու յեղբայրները. ծիծաղում ե և ինքը, փոքրիկ, յերեք տարեկան տղան:

Դաստիարակչուհին մոտենում և նրան և սկսում կերակրել:

Կերակրով լիքը գդալը փոքրիկ, յերեք տարեական յերեխայի բերանումն է, նա ուտում և կերակուրն ու տչքերը վեր բարձրացնում և նայում դաստիարակչուհու կուռ, ուժեղ բազուկներին ու մտածում.

— Շուտով, յերբ մեծանամ, յես ել այդպես ուժեղ բազուկներ կունենամ, և չի ծովի գդալն, ու կերակուրը չի թափվի:

Արեգակն արեւում եւ:

Ծաղիկները խնդում ու ժպտում են:

Վերջանում ե ճաշը, և ծնողները շարժվում են դեպի ընթերցարան, յեղբայրներն ու քույրերը գնում են իրենց դասերը պատրաստելու և ուրիշ աշխատանքներով զբաղվելու, իսկ յերեխաները շարժվում են դեպի ննջարան, հանգստի ժամն ե, պետք ե հանգըստանալ:

Նրանք պառկում են մահճակալներին, գարնանալին մեղմ հովս ու արեի վոսկեգույն ճառագայթները ննջարանի բաց պատուհաններով անցնում են ներս, գրկախառնվում մահճակալներին պառկած յերեխանների հետ, և նրանք ել են հանգստանում:

Ժամանակն առաջ ե սահում:

Արեգակի վոսկեգույն ճառագայթները համբուրում են քնած յերեխաններին և կամաց, հանգիստ ու անշշուկ բաժանվում նրանցից ու նրանց իրենց հրաժեշտը տալիս և հեռանում:

Արեգակը թեքվում ե դեպի արեմուտք:

— Յերեխաններ,—լսվում ե դաստիարակչուհու ձայնը:

Յերեխաները զարթնում են և շարժվում դեպի դահլիճը, ուր նստած են նրանց ծնողները, յեղբայրներն ու քույրերը, վորտեղ նրանց համար նվազում է յերաժշտությունը:

Հետո նրանք քայլում են դեպի այգի, համբուր-վում են մեղմ զեփլուսի հետ և նորից դեպի ննջարան շարժվում:

Քնելու ժամն ե, պետք ե քնել:

Նրանք հանվում և պառկում են մահճակալներին:

Ցեղ քնում են յերեխաները:

Գիշերը խաղաղ ե:

Այգում ծառերի նոր կանաչած աերեներն են սվավում:

Այգում ծաղիկներն են բուրում:

Այգում ծաղիկները և խնդում և ժպտում են:

Ու գարնանային յերկնքում փայլում ե լուսնյակը և նայում է ծաղիկներին, հանգիստ քնած յերեխաներին, և խնդում է լուսնյակը և լուսնյակը ժպտում է:

Գիշերը խաղաղ ե:

Բունն անուշ ե...

## 2.

Անձրեի կաթիլները թափվում են գետնին:

Անձրեի փոքրիկ կաթիլները միանում են իրար, հոսում դեպի փողոցի յերկարությամբ ձգված առվակները, միանում նրանց և անձայն, անշշուկ վազում դեպի հեռուները:

Անձրեը դադարում է մաղել:

Արեգակն արենում ե, և գետնից ըարձրանալ և սկսում դոլորշի ու հողի հոսու:

Գետինը չորանալ ե սկսում:

Մարդիկ քայլում են յերկար փողոցներով, քայլում են և դեպի վեր և դեպի վար:

Մի կին վերցնում ե իր չորս տարեկան Վովալին և դուրս գալիս զբոսանքի:

Այդ կինը դուրս ե գալիս փողոց ու մտածում՝ մւր գնալ:

Կինը քայլում ե յերկար փողոցով և դեպի վար և դեպի վեր:

Փոքրիկ, չորս տարեկան Վովան հետեւում ե նրան:

Հանկարծ այդ կինը կանգ ե առնում. նա գըտնում ե գնալու տեղը:

Կինն ուրախացած առաջ ե շարժվում:

Վովան հետեւում ե նրան:

Նա կգնա նորերի մոտ և կստուգի լսածը...

... Մարդիկ հավաքվել ու ապրում են միասին...

Ասել են, թե նրանց յերեխաները միասին են և աղում, ճաշում, քնում...

Ասել են, թե յերեխաներն իսկական ծնողներ ունեն...

Տարորինակ բաներ են ասել տիկնոջը նորերի մասին...

Ու տիկինը մտածել ե, վոր մարդկությունը հետապիմում ե, դեպի իր նախահայրերի վայրենի կենցաղն ե վազում:

Տիկնոջ ամուսինն ել ե ասել այդ մասին:

Տիկինը քայլում ե առաջ, ու մտքերն ել քայլում են նրա ուղեղում:

Վովան հետեւում ե նրան:

Նրանք մոտենում են այգու դռանը, և բացվում ե այգու դռւոն, ու նրանք անցնում են ներս:

Տիկինը ծառուղիով քայլում եառաջ:  
Վովան հետեւմ է նրան:

Մաղիկների հետ խաղացող լերեխաները նկատում են անծանոթ կնոջն ու լերեխային: Նրանք դադարում են խաղալուց ու նայում նորեկ անծանոթներին:

— Բարեւ, — բարեւում ե անծանոթ կինը:

— Բարեւ, — պատասխանում ե լերեխաների հետ խաղացող դաստիարակչուհին:

Փոքրիկ Վովան վազում ե զեպի լերեխաները:

Յերեխաները ժպտում են ու խնդում:

Մառերի նոր կանաչած տերեները սվավում են:  
Յերեխաներին միանում ե անծանոթ լերեխան, և նրանք սկսում են խաղալ:

Մալրը նկատում ե այդ:

— Վովա, — ձայնում ե նա, — հեռացիր այդտեղից:  
Վովան նայում ե մոր բարկացած աչքերին,  
մռայլվում, շրթունքները կրծում ե դժկամռությամբ հեռանում խաղացող յերեխաներից:

Յերեխաները զարմացած նայում են տիկնոջը:

Տիկինն ի՞նչպես կարող ե հանդուրժել, վոր ի՞ր Վովան խաղա այլասերված լերեխաների հետ, վորոնք իսկական ծնողներ չունեն:

— Ի՞նչպես են ապրում ձեզ մոտ լերեխաները, — հարցնում ե նա դաստիարակչուհուն:

— Շատ լավ, — պատասխանում ե դաստիարակչուհին:

— Իսկ չե՞ն տիրում նրանք առանց իսկական ծնողների:

— Նրանք իսկական ծնողներ ունեն, — պատասխանում ե դաստիարակչուհին:

Փոքրիկ Վովան տեսնում է, վոր մալրը դաստի-  
արակչուհու հետ խոսակցութիւնը և զրադված, նայում  
և յերեխաներին և նորից գեղի նրանց կողմը շարժվում:

— Վովա, — դարձյալ լավում և մոր ձայնը:

Վովան կես ճանապարհին կանգ և առնում, նա-  
յում մորը, հետո յերեխաներին և դարձյալ դեղի  
վերջինները քալում:

— Յեթե այդպես և, ուրեմն դու մեացիր այստեղ,  
իսկ յես կգնամ տուն, — ձայնում և տիկինը բարկացած  
և ծառուղիով առաջ շարժվում:

Վովան նայում և մորը, կրկին մռայլվում և  
վազում նրա յետեից:

Ճանապարհին նա կանգ և առնում, հայացքը գե-  
ղի յերեխաները հառում, տխուր ժպտում (այդ ժամա-  
նակ նրա աչքերի մեջ արցունքի կաթիլներ են նկատ-  
վում) և հրաժեշտ տալիս փոքրիկ յերեք-չորս տարե-  
կան յերեխաներին ու հետևում մորը:

Յերեխաների զարմացկոտ հայացքներն ուղե-  
կցում են նրանց:

Բացվում ու ծածկվում և այգու դուռը:

— Նո գյա, ինչու նրա մալրիկը չթողեց, վոր  
Վովան մեզ հետ խաղա, — հարցնում են յերեխաները:

— Նրա մալրիկը վատն ե, նա չի ուզում, վոր  
ըոլոր յերեխաներն ել, մեծերն ել միասին, իրար հետ  
ապրեն, — պատասխանում և դաստիարակչուհին:

— Այո, Վովայի մալրիկը վատն ե, — ասում ե մի  
յերեխա:

— Բայց, նադյա, Վովան լավն ե, չե, — հարցնում  
ե մեկը:

— Հա, նադյա, Վովան լավն ե, — ասում են միուս-

ները,—Նա ուզում եր մեզ հետ խաղալ, իսկ վատ  
մայրիկը չթողեց:

— Այո, Վովան լավն ե,—համաձայնվում ե դաս-  
տիարակչուհին:

Արեգակն արեում ե:

Արեող արեգակի շողերը գալիս, դրկախառնվում  
են ծառերի նոր կանաչած տերեների հետ, իսկ զար-  
նանային մեղմ ղեփլուռը համբուրում ե նրանց, և  
նրանք շարժվում են, ապրում ողում, ու խնդում են  
կանաչ տերեները, և ժամանակ են կանաչ տերեները:

Յերբ տերեները սվսվում են, արեգակի վոսկե-  
գույն շողերը պոկվում են նրանցից, ընկնում ծաղիկ-  
ների վրա, վրուկեզոծում նրանց, ու ծաղիկներն ել են  
խնդում և ծաղիկներն ել են ժամանակ:

Մաղիկներն ու յերեխաները խուզում են, գրկա-  
խառնվում, և փշում ե գարնանալին մեղմ հովն, ու  
նրանք թեքվում են և դեպի աջ և դեպի ձախ:

Արեգակն արեում ե:

Գետնից բարձրանում ե գոլորշի ու հողի. հոտ...

Յերկար ճանապարհով դեպի տուն հն քայլում  
յերեխան ու մայրը...

Տիկինը մտածում ե:

...Մարդկանց չեն նմանվում... Յեթե նրանք  
իսկական ծնողներ ունեյին, ապա վժրտեղ ելին նրանք,  
ինչու ելին բոլոր յերեխաներին հավաքել և...

Փոքրիկ չորս տարեկան Վովան քայլում եր մոր  
հետ և ինքն ել մտածում նորերի մասին:

Ինչու մայրիկը չթողեց, վոր ինքը խաղա այն  
փոքրիկ, լավ յերեխաների հետ:

Նրանք հասնում են տուն:

Տիկնոջ ամուսինը վերադարձել ե գրասենյակից:

— Վժրտեղից ես գալիս, սիրելիս, — հարցնում

ենա:

— Վայրենիների մոտից, — պատասխանում ե կինը:

— Հը, ասածներս ճիշտ ելին:

— Ալո:

— Իսկ դժւ, Վովա, ինչո՞ւ յես տիսուր, — հարցընում ե հայրիկը:

— Մալրիկը չթողեց, վոր յես խաղամ յերեխաների հետ, — ասում ե փոքրիկ Վովան:

— Յերեկակայիր, գնացել, միացել եր այն այլասերվածներին ու խաղում եր հետները, — խոսում ե կինը:

— Ոյ, ոյ, ոյ, դա անթույլատրելի քայլ ե, — ասում ե հայրը:

Նստում են ճաշի:

— Հը, ինչո՞ւ չես ճաշում, — նկատում ե տիկինը, տեսնելով, վոր Վովան չի ճաշում:

— Գնանք նրանց մոտ, այնտեղ լավ ե, — ասում ե Վովան:

— Մաշա, Մաշա, — ճախում ե կինը:

Վովան զգում ե, վոր մալրն իրեն պիտի պատժի:

Դայակը ներս ե մտնում:

— Մաշա, վերցրու այս անպիտանին և տար իր սենյակը, թող այնտեղ մենակ մնա ու հասկանա, թե ինչ ե նշանակում մնալ առանց մոր, առանց ծնողի:

Դայակը լսում ե տիկնոջը, վերցնում Վովային ու քայլում դեպի այն փոքրիկ սենյակը, վորը Վովայի ննջարանն ե:

## 3.

Գիշեր եռ քամի:

Ննջարանի բաց պատուհաններով քամին անցել են ներս և գրկել սենյակը:

Պատուհանում դրած ծաղկամանների ծաղիկներն որորվում են քամուց:

Սենյակի կենտրոնում դրած սեղանի վրա թափված են գինու սիթանի շներ:

Մի գլանակ ընկած եռ բաժակի մեջ:

Լուցկու մի լիքն արկղ ընկած եռ դռան առաջ:

Սեղանի վրա կան կոտրտված ափսեներ ու բաժակներ:

Լայն մահճակալի վրա պառկած են ամուսինները և հանգիստ քնում են:

Ալլ սեծ սենյակին կից, փոքրիկ սենյակում, պառկած ե կոռքրիկ, չորս տարեկան վովան:

Փոքրիկ սենյակի պատուհաններն ել են բաց, ու քամին խավարի հետ անցել են ներս ու գրկել սենյակը:

Վովան արթուն ե, Վովայի քունը չի տանում:

Նա յերեսը մերթ դեպի պատն ե դարձնում, մերթ գեպի դուռը, մերթ իր փոքրիկ գլուխը թաղում ե բարձի մեջ, տանջվում, ջանում ե քնել բայց քունը չի տանում:

Սենյակը մութն եռ պառկած ե այդ սենյակում միայն Վովան:

Նա փակում ե աչքերը, իրեն քնած ե ձեացնում, բայց միշտ նույն պատկերներն են աչքին յերեսը և նույն մտքերն են խաղում ուղեղում:

• • • • • • • • • • • • • • • • •

Հավաքվել ու միացել են իրար մարդիկ, ապրում  
են միասին, միասին են ապրում և նրանց յերեխա-  
ները, միասին խաղում, աշխատում, և այնքան լավ ե  
կյանքն այնտեղ, այնքան լավ...

Ինքը միշտ, համարյա միշտ մենակ ե լինում,  
վոչվոքին չի տեսնում, վոչվոքի հետ չի խաղում,  
միայն Մաշային՝ դայակին ե տեսնում, լսում նրա հե-  
քիաթները և տանն այնքան տիսուր ե լինում, այն-  
քան տիսուր...

Ա՛յս, վորքան լավ ելին այն փոքրիկները, վո-  
րոնց հետ կամեցավ ինքը խաղալ, բայց վատ, չար  
մայրիկը չթուլլատրեց:

Այ, հենց այս ըոպելիս, յերեի, նրանք, նորերի  
այն փոքրիկ ու լավ յերեխաները քնած են միասին,  
հանգիստ, իսկ ինքն արթուն ե, տանջվում ե և չի  
կարողանում քնել:

Նա իջնում ե մահճակալից, մոտենում պատու-  
հանին և նայում դեպի դուրս:

— Այ, այնտեղ են ապրում նորերը, — մտածում  
և նա ու ձեռքը դեպի արևելք դարձնում, — նրանց  
մոտ այնքան լավ ե ապրելը...

Ինչու յե այսքան վատ իր մայրիկը:

Գոնե թողնեյին, վոր ինքն որական մի անգամ  
գնար նրանց մոտ, խաղար փոքրիկ յերեխաների հետ:

Նա հեռանում ե պատուհանից և դեպի կից սե-  
նյակը շարժվում, վորտեղ քնած են իր ծնողները:

Նա ուզում ե ասել մայրիկին, վոր թույլատրի  
վաղը դալակի հետ նորերի մոտ գնալու:

Նա մտնում ե մեծ սենյակը, մոտենում մահճա-  
կալին ու կամաց ձայնում.

— Մամա:

Մայրիկը հանգիստ քնած ե:

— Մամա:

Տիկինը շարժվում ե:

Ինչ-վոր անախորժ հոտ կպչում ե Վովայի քթին:

— Ո՞վ ե, դժւ յես, Վովա, ի՞նչ կա, ինչո՞ւ յես

արթուն, ինչո՞ւ չես թողնում, վոր հանգիստ քնեմ,—  
խոսում ե տիկինը:

— Մայրիկ, թող վաղը Մաշայի հետ գնանք նը-  
րանց մոտ խաղալու, — շշնջում ե Վովան, ու յիրկյու-  
ղից դողում են նրա շրթունքները:

— Ո՞ւմ մոտ, — հարցնում ե մայրիկը:

— Այ, այն լավ յերեխաների:

— Անպիտան, դու դարձյալ նրանց մասին ես  
մտածում, - բարկանում ե տիկինը, — Միտկա, Միտկա,  
վեր կաց ու տես, թե ինչեր ե դուրս տալիս այս խե-  
լառը, թե ինչու համար ե արթուն և մւմ պատճառով  
ե խանգարում մեր հանգիստը:

— Ի՞նչ ե պատահել, — հարցնում ե ամուսինը, —  
ինչու արթնացար, աղունիկս:

— Ապա լսիր, թե ի՞նչ ե ասում:

— Ո՞վ:

— Վովան:

— Միթե նա արթուն ե:

— Այո, այ, մահճակալի մոտ կանգնած ե:

Խավարի մեջ հայրը նկատում ե վորդուն:

— Ինչու քնած չես, — հարցնում ե նա:

— Նորերի մասին ե մտածում, ասում ե՝ թող վա-  
ղը Մաշայի հետ գնամ նրանց մոտ, խոսում ե կինը:

— Գժվել ես, ի՞նչ ե, — բղավում ե հայրը. — ապա,  
հայդա, գնա քնիր:

Վովան շարժվում ե դեպի իր սենյակը:

Նա ընկնում ե մահճակալին, կրկին փորձում քը-  
նել, մեկ դառնում դեպի աջ, մեկ դեպի ձախ, բայց  
քունը չի տանում:

Թամին սաստկանում ե:

Դարնանալին խավար գիշեր ե. յերկինքն ամ-  
պած, ու կաթում են անձրեսի փոքրիկ կաթիլներ:

Թամին ավելի յև սաստկանում.

Պատուհանի փեղկերը շարժվում են, բարձրանում  
ե աղմուկ, անձրելներս ե թափվում, և տիկինը զարթ-  
նում ե:

— Մաշա, — ձայնում ե նա:

Պատուխան չկա. Մաշան որվա չարչարանքնե-  
րից հոգնած խոր քուն ե մտել:

— Մաշա. — նորից ե լսվում տիկնոջ ձայնը:

Վովան արթուն ե, ականջին հասնում ե մոր  
ձայնը:

Զայնի վրա արթնանում ե տիկնոջ ամուսինը:

— Ի՞նչ ե պատահել, սիրելիս, ինչու կրկին արթ-  
նացար, — հարցնում ե նա:

— Գնանք արթնացնենք Մաշային, — ասում ե  
կինը և իջնում մահճակալից ու դեպի այն սենյակը  
քայլում, վորտեղ քնած ե Մաշան:

Ամուսինը հետեւում ե նրան:

Տիկինը բացում ե դուսը և ներս մտնում:

— Մաշա:

Մաշան լսում ե տիկնոջ ձայնը, իսկուն վոտքի  
կանգնում ե, տրորելով քնոտ աչքերը, հարցնում.

— Ի՞նչ եք կամենում, տիկին:

— Եերեք ժամ ե, ինչ յես քեզ կանչում եմ, իսկ

դու չես պատասխանում, — ջղայնացած անում ե տիկինը:

— Ներողություն, տիկին, չեմ լսեր հոգնած եյի ու քննցի, — ասում ե Մաշան և հարցնում, — Ի՞նչ եք կամենում:

— Արի պատուհանները կողպիր, քամի լի, անձրեւ ե:

Մաշան որորվելով հետեւում ե շարժվող տիկնոջը, քայլում դեպի մեծ սենյակը և այնտեղից ել անցնում փոքրիկ սենյակը, վորտեղ քնում ե Վովան:

Մաշան կողպում ե մեծ սենյակին կից փոքրիկ սենյակի պատուհանը և յերբ կամենում ե դուրս դալ փոքրիկ սենյակից, նրա ականջին ինչ-վոր տարորինակ ձայներ են հասնում:

Նա կանգ ե առնում սենյակի կենտրոնում և հայացքը հառում դեպի Վովայի մահճակալը:

Խավարը գրկել ե սենյակը. դայակը չի կարողանում նկատել, թե ինչպես փոքրիկ Վովան ըարձից բարձրացրել ե իր փոքրիկ ու գեղեցիկ զլուխը, թե ինչպես ե նու ձեռքերը դեպի իրեն մեկնել և թե ինչպես են արտասուքի կաթիլները թափվում նրա աշքերից:

Դայակը քայլում ե դեպի Վովայի մահճակալը:

— Մաշա, — կամաց ձայնում ե Վովան:

— Ի՞նչ ե, ջանիկս, ինչթւ լես արթուն, — հարցընում ե դայակը:

Ծնողները հանգիստ քնած են:

Մաշան մոտենում ե չորս տարեկան Վովային, գրկում նրա զլուխը և ալդ ժամանակնա լսում ե հեծկըլտանքի ձայներ:

- Արտասվեմ ես, Վովա!
- Մաշա, արի գնանք այնտեղ, նորերի մոտ,  
յես ճանապարհը դիտեմ, քեզ ցույց կտամ,—ասում ե  
Վովան, — նրանք լավ են, շատ լավ! —
- Քսիր, ջանիկս, մայրիկը կիմանա և քեզ կը-  
պատժի:

— Գնա, գնա, դու յել ես մայրիկի պես վատ,—  
խոսում ե Վովան, գլուխն աղատում դալակի զրկից և  
թաղում բարձի մեջ:

Դայակը հեռանում ենրանից և համրընթաց քար-  
երով գեպի իր սենյակը շարժվում:

Ի՞նչ կարող ե անել նա. — վոչինչ...

Վովան նստում ե մահճակալին և մտածում, թե  
ինչու ին ալղքան վատ իր մայրիկը:

Շարունակ նորերն են նրա աչքի առջե, և նա չի  
կարողանում քնել:

Բայց սպասեք, ինչու յե նա իզուր մտածումնո-  
րերի մասին, չե վոր նրանք մայր չունեն, մայրիկն  
ասաց այդ մասին, և հենց ինքն ել փոքրիկներին մե-  
նակ տեսավ, իսկ առանց մոր լավ չե... լավ չե...

Այս, ինչու նրանք մայր չունեն...

Նա լալիս ե, ձեռքերով բարձին հարվածներհաս-  
ցընում, վերմակն ընկնում ե գնտին, իսկ աչքերից  
արցունքի կաթիլներ են թափվում...

Նա դարձյալ իջնում ե մահճակալից, կրկին դե-  
պի պատուհանը շարժվում ու թաց ապակիների մի-  
ջով դեպի դուրս նայում:

Այ, այնտեղ, վերեռում, այդու մեջ գտնված այն  
մեծ տանը քնած են փոքրիկու լավ յերեխաները, քը-  
նոծ են խաղաղ ու հանգիստ:

Առավոտլան նրանք կարթնանան, դեպի ալգում  
կտնվող ծաղիկները կվազեն, և կխաղան ծաղիկներն  
ու յերեխաները:

Ու նրանք մոր յերես դարձյալ չեն տեսնի...

Իսկ ինքը դարձյալ կմնա տանը և որն այնքան  
տխուր կանցնի, այնքան տխուր..

Անձրեկի կաթիլները զարնվում են պատուհանի  
ապակիներին. խավար ե, քամին ե վոռնում...

Վովան հեռանում ե պատուհանից:

Նա նորից պառկում ե անկողնում, նորից գլու-  
խը բարձի մեջ թաղում և մտածում ու արտասվում:  
Ի՞նչ անել:

Յերեխաների մոտ ապրելը լավ ե. նրանք միա-  
սին են լինում, խաղում են միասին.. Բայց մայր,  
մայր չունեն...

Ի՞նչ անել...

Բարձի վրա թափվում են արցունքի կաթիլներ:

Հանկարծ պայծառանում ե նրա միտքը, նա իր  
փոքրիկ և գեղեցիկ գլուխը բարձրացնում ե բարձից,  
և արցունքի կաթիլները դադարում են կաթելուց:

Այո, այո, նա հենց այդպես ել կվարվի, նա հենց  
այդպես ել կվարվի:

Այո, այո...

Թող ինքն ել մյուսների պես մայր չունենա, մի-  
այն թե նրանց հետ լինի, նրանց հետ խաղա, նրանց  
հետ աշխատի...

Այո, նա կգնա նորերի մոտ և ել չի վերադառնա:

Նա կփախչի տնից, ալ, հենց առավոտյան...

Այո, այո, նա հենց այդպես ել կվարվի, նա հենց  
այդպես ել կվարվի...

Ծանրանում ե նրա գլուխը, ընկնում բարձի վը-  
րա, ու փակվում են հոգնած աչքերը, և նա քնում ե  
խաղաղ և անուշ:

Անձրեի կաթիլները զարնվում են պատուհանի  
ապակիներին, դրսում քամին և վոռնում, իսկ գիշերը  
խավար և ու անձրեւ:

## 4.

Առավոտյան նա շուտ արթնանում ե (ծնողները  
քնած են լինում) և կամաց, դայակից ծածուկ, դուրս  
դալիս փողոց:

Խավար գիշերին հետեւ և պալծառառավոտը, և  
դադարեւ և անձրեւ:

Նա յերկար փողոցով քայլում ե դեպի վեր, դե-  
պի նորերը...

Մարդիկ շարժվում են փողոցում, քայլում հն և  
դեպի վար և դեպի վեր, և յերբ անցնում են փոքրիկ,  
չորս տարեկան Վովայի մոտով, նայում են նրա կար-  
մըրած աչքերին ու պալծառ դեմքին:

Վովան քայլում ե առաջ:

Նա հասնում ե այգին, մոտենում դռանը և բա-  
ցելով այն՝ ներս մտնում:

Նա յերկար ծառուղիով քայլում ե դեպի առաջ,  
դեպի մեծ տունը:

Նա հասնում է մեծ տանը, բարձրանում փոք-  
րիկ աստիճաններով, անցնում միջանցքը, քայլում մի-  
ջանցքով և մոտենում մի սենյակի դռան ու բաց ա-  
նում ալդ դռւոը:

Այդ սենյակը յերեխաների ննջարանն ե. ալդ-  
տեղ քնած են փոքրիկ, յերեք չորս տարեկան յերե-  
խաները:

Նա անցնում ե սենյակի ներսը, մոտենում մահ-  
ճակալներից սեկին և նայում այնտեղ քնած յերե-  
խալին:

— Եյ, վեր կաց, յես յեկել եմ, — կամաց ձայ-  
նում ե նա:

Յերեխան հանգիստ քնած ե:

Նա, փոքրիկ՝ չորս տարեկան Վովան, ձեռքելը  
մոտեցնում ե քնած յերեխային և կամաց շարժում  
նրան...

— Եյ, եյ, վեր կաց, յես յեկել եմ, — նորից ձայ-  
նում ե նա:

Քնած յերեխան շարժվում ե, բացում իր աչքերը  
և նայում իր մահճակալի մոտ կանգնած յերեխային:

— Վովա, — փոքրիկ յերեխան ճանաչում ե նրան:

— Յես յեկել եմ ձեզ մոտ, — ասում ե Վովան,

— Վեր կացեք, վեր կացեք, Վովան յեկել ե, —  
ձայնում ե փոքրիկ նոր արթնացած յերեխան, և արթ-  
նանում են քնած յերեխաները, նկատում Վովային և  
իջնում մահճակալներից և դեպի նա վաղում ու շրջա-  
պատում նրան:

— Վովա, լավ Վովա, — ձայնում են նրանք:

— Յես յեկել եմ ձեզ մոտ, — ասում ե Վովան և  
ինչքան ե յերջանիկ, ինչքան յերջանիկ...

Յերեկոլան, յերբ յերեխաները պառկել եյին քը-  
նելու, յերկար ժամանակ արթուն եյին մնացել ու մը-  
տածել Վովայի մասին, վոր կամեցավ իւաղալ իրենց  
հետ, իսկ մայրը, նրա վատ մայրը չթուլատրեց:

— Վովա, Վովա, լավ Վովա...

Դաստիարակչունին շարժվում ե դեպի ննջարան.  
ալնտեղից ինչ-վոր ձայներ են հասնում ականջին:

Նա մտնում ե ննջարան և նկատում, վոր բոլորն  
ել արթուն են ու շըջապատել են մի յերեխայի...

Նա, նադիան, ճանաչում է այդ փոքրիկ յերեխային...

— Վովա, — ձայնում ե նա և դեպի յերեխան  
շարժվում:

— Նադիա, նա մեզ մոտ կմնա, ել չի գնա իր  
վառ մոր մոտ, — ասում են յերեխաները:

— Յես ձեզ մոտ կմնամ, յես ել չեմ գնա մեր  
տուն, — ասում ե Վովան:

Դաստիարակչուհին ժպտում ե...

Արեգակը բարձրանում ե արևելքից:

Արեգակի շողերն ընկնում են ծառերի նոր կա-  
նաչած տերենների վրա, հետո պոկվելով նրանցից՝ վա-  
ղում են դեպի ծաղիկները և զրկախտոնվում նրանց  
հետ, ու ծաղիկները խնդում են ու ծաղիկները ժըպ-  
տում են...

Ծառերի նոր կանաչած տերենները սվավում են...

## ՎՈՂՈՐՄԵԼԻ ՄԱՐԴԸ

1.

Առավոտլան, յերբ բացում ես աչքերդ, քիչ նայում ես առաստաղին, հետո պատից կախած մերկ կանանց պատկերներին, շրթունքներդ սեղմում իրար, ապա պատուհանի կեղտոտ ապակիների միջով մի հայացք գցում դեպի դուրսն ու հետո նորից փակում աչքերդ և քնում անուշ ու քնում անուշ:

Ժամանակը սահում անցնում ե, վորքմն, ով զիտե, չգիտես և ինքդ, բայց յերբ նորից բացում ես աչքերդ՝ արեգակն արևելքից շատ և հեռացած լինում:

Դու նստում ես տեղաշորի վրա, վոտներդ կախում, հորանջում, նորից մերկ. կանանց պատկերներին նայում, նայում և այն մարդու նկարին (այդ ըստելին դու մտածում ես, վոր ինչ լավ կլիներ, յեթե այդ մարդու նկարը սերկ կանանց պատկերների մոտ կախված չլիներ, բայց ինչ արած), նորից հորանջում և սկսում հագնվել:

Յերբ դու հագնում ես գուլպաներդ, նկատում ես, վոր ձախ վոտիդ բութ մատը դրսումը մնայ, ու մտածում ես.

— Վոչինչ, վոտնամաններս լավն են, կծածկեն,  
ու չի լերեա:

Գուլպաներից մի անդուրեկան հոտ կպչում ե  
քթիդ, և դու մտածում ես.

— Վոչինչ, դուրս կգամ փողոց և այնտեղ լավ,  
դուրեկան հոտեր կդիպչեն քթիս:

Հագնում ես գուլպաներդ, հետո հագուստիդ մյուս  
մասերն ել ես հագնումու հագնելիս լերգում մի յերգ,  
վորի խոսքերն ել քո սեփականությունն են, լեղանա-  
կըն եր.

Հագնվելուց հետո շարժվում ես դեպի դուրս,  
դրսից դեպի լվացարան, մոտենում ջրամանին և ըս-  
կըսում լվացվել:

Ծուտ, չափազանց կարճ ժամանակամիջոցից հե-  
տո վերջանում ե լվացարանի ջուրը, այնպես վոր դու  
նույնիսկ չես կառողանում հեռացնել ձեռքերիդ վրալի  
սապոնը, իսկ լերեսիդ դեռ ջուր կպած չի լինում:

Նայում ես դույլին, դատարկ ե. մտածում ես՝  
զնալու ջուր բերել աղբյուրից, բայց իսկուն, հենց  
նույն վայրկյանին հրաժարվում ես այդ մտքից ու  
դեպի սենյակը շարժվում:

Ի՞նչ կարիք կա նեղություն քաշել, մի պիտի նը-  
կատի, վոր դու լվացված չես, կամ յեթե մեկն ու մե-  
կը, լենթաղբենք, տեսնի ու հասկանա, վոր դու լվաց-  
ված չես, միթե այնքան անքաղաքավարի, անկուլ-  
տուրական և անբարոյական կլինի, վոր մոտենա քեզ  
և ասի.

— Սերոր Արամյան, դուք այսոր, ինչպես լերե-  
վում ե, չեք լվացվել:

Իհարկե, այդպիսի մարդ չի գտնվի:

Յերբ դու անցնում ես սենյակ, մոտենում ես սե-  
ղանի վրա դրված հայելուն, վերցնում կեղտոտ խոզա-

նակի մեջ դրված սանրը, վորի շատ ատամներն արձակուրդ են վերցրել և հեռացել, իսկ մնացածներն ելքեռնավորված են սարսափելի կեղտով, և ալդ սանրով սանրում ես գլխիդ մազերը:

Ինչ խոսք, վոր ձեռքերդ յերեսսրբիչով չես սըրբում և կարիք ել չկա, քանի վոր առանց այն ելպիտի չորանա:

Սանրվելուց հետո դու գլխիդ դնում ես արտասահմանից հատուկ պատվերով ուղարկված կեպիդ և նայում հայելուն ուշադրությամբ, ամենայն ուշադրությամբ զննում քեզ ու հետո քո մտսին հարցնում քո «որյեկտիվ» կարծիքը.

— Իսկական ջենտլմեն ես, Ակրոք Արամյան:

Դու փակում ես սենյակիդ դուռը և դիպի փող շարժվում:

Փողոցում լսում ես, վոր քաղաքալին ժամացույցը տասնեմեկը զարկեց, ու մտածում ես.

— Վոչինչ, իսկական աշխատանքի դնալու ժամանակն եւ:

Դու քայլում ես փողոցով ու շարունակ քո գեղեցիկ Անահիտի, ներողություն, յես բոլորովին մոռացա, քո Անիչկայի մասին մտածում ու յերգումնը բա մասին յերգեր. քո սեփական հեղինակած խոսքերով, քո սեփական յեղանակով, քո սեփական Անիչկայի մասին...

«Անիչկա, ախ Անիչկա, սիրուն յար,

Քեզնից ել լավ բան չկա, սիրուն յար...

— Ա՛խ, անչափ, անչափ զարմանալի աղջիկ և մեքենադրուհի Անիչկան, անչափ գեղեցիկ, շրթունքներն անչափ կարմիր են...

Յեվ դու մտածում ես նրա մասին ու վորոշում. զնալ դեղատուն, գնել կրկին մի շիշ ողեկոլոն, մի արկղ պուղբա և նվեր տանել Անիչկային.

Դու գիտես, լերը գնաս գրասենյակ, կրաքես աշխատակիցներին, արհամարհալից մի հայացք կցցես դեպի Աշոտը, այն անպիտանը, վորի մասին լսել ես, իրը թե ուզում և կոմյերիտմիության շարքերը մըտնել, և վորին դու ատում ես, հետո կնստես սեղանիդ դիմաց ու կսկսես աշխատել:

Քիչ հետո, միքանի թուղթ կառնես ձեռքդ և դեպի կից սենյակը կշարժվես, իսկ գրպանումդ կունենաս ողեկոլոնն ու պուղբան:

Կմտնես կից սենյակը, կրաքես վարիչին, լեթենա այնտեղ լինի, կրաքես և այնտեղ լեղած մարդկանց՝ ծանոթներին ու անծանոթներին և դեմքիդ լուրջ, ավելի լուրջ արտահայտություն տալով, կմոտենաս մեքենագրուհի Անահիտին (թյու, կրկին ներողություն, իմ սիրելի հերոս Սերոբ Արամյան), կմոտենաս մեքենագրուհի Անիչկային և դեպի նա պարզելով ձեռքիդ թղթերը՝ կասես.

— Ընկեր Անիչկայ խնդրեմ վերցնեք այս թղթերը և առանց ուշացումների, առանց բյուրոկրատիզմի ու առանց իդեոլոգիական սալթոքումների, մեքենագրեք, վորովհետև սրանք խոշոր հասարակական արժեք ունեցող թղթերը են:

Յեվ յեթե այնպիս պատահի, վոր գործով յեկած ծանոթներն ու անծանոթները և վարիչը զուրս գան սենյակից, այնպիս վոր սենյակում մնաք դու և Անիչկան, մեքենագրուհի Անիչկան, այն ժամանակ, ո, այն ժամանակ, իմ սիրելի հերոս, ձեռքիդ թղթերը

դեն կշպրտես, գրպանիցդ կհանես ողիկոլոնն ու պուդրան, կտաս նրան և հետո ավելի կմոտենաս նրան, ձախ ձեռքդ կցցես վզին, աջը դեպի կուրծքը կտանես և կամաց, շշուկով, համարլա անլսելի ձայնով, բայց այնքան մեղմ, այնքան քաղցր կշնչաս ականջին.

— Մեքենագրելու վոչ մի թուղթ չկա, հոգյակս, այս թղթերն անպետք թղթեր են և վոչ մի հասարակական ու իդեոլոգիական արժեք չունեն... Թու կուրծքը, Անիչկա, խոշոր... խոշոր հասարակական արժեք ունի... Թու կուրծքն իմ իդեոլոգիան ե...

Անիչկան, մեքենագրուհի Անիչկան կժպտա, նրա կարմիր, չափազանց կարմիր շրթունքների տակից կերեան սպիտակ ատամները, մասները կղողան, կըդաղարեն շարժվելուց, և գրամեքենայի ձայնն ել չի լսվի:

Դու շրթունքներդ կմոտեցնես նրա ալտերին և կամաց, դանդաղ կհամբուրես:

— Ա՞խ, — կճշտ մեքենագրուհին, բայց ալդ ձիչը կմեռնի գրամեքենալի յերկաթլա տառերի գրկում:

Բայց յեթե ալդ ըոպեյին վարիչը կամ մի ուրիշ ծանոթանծանոթ ներս մտնի, դու իսկույն կուղղիկս, քիչ կհեռանաս նրանից, կվերցնես գետնին ընկած թղթերը և պարզելով դեպի նա, կասես:

— Ուրեմն այդպես, լսեցիք, հասկացմք, նորից եմ ասում, այս թղթերը հասարակական և իդեոլոգիական խոշոր արժեք ունեն, ալնպես վոր ըլուրոկրատական աշխարհայացքով չմետենաք նրանց մեքենագրմանը:

Ցեվ կնայես գրամենյակում գտնվող մարդկանց քայլվածքով կհեռանաս ալդ սենյակից...

Դու քայլում ես ճանապարհով ու մտածում մեքենագրուհի Անիչկալի մասին, մտածում ես նրա մասին և յերգում նրա մասին.

«Անիչկա, ախ Անիչկա, սիրուն յար,  
Քեզնից լավ հեջ բան չկա, սիրուն յար»:

Յերկար փողոցներով քայլում ես դու. Նայում ես շատ անցորդներին, դիտում ես խանութների վիտրինաները, բայց ամեն տեղ քո աչքին պատկերանում ե մեքենագրուհի Անիչկան, այն կարմիր շրթունքներ ունեցող աղջիկը:

Ախ, այդ շրթունքները, այդ շրթունքները...  
Քանիշ-քանիսի հետ ես դու պայքարի բռնվել այդ շրթունքների կարմրության կուսությունը պաշտպանելու համար:

Թո վոխերիմ թշնամիներն ասել են.  
— Անիչկան շրթունքները ներկում ե:  
Իսկ դու հակառակվել ես նրանց և ապացուցել.  
— Վոչ, դուք բոլորդ ել սխալվում եք, դուք չեք կարողանում բնության տվածն արհեստականից տարբերել:

Ճիշտ ե, մի անգամ ինքդ ել կասկածեցիր ու քիչ մնաց, վոր համոզվեցիր կասկածիդ մեջ, բայց շուտով հրաժարվեցիր դրանից...

Այդ պատահել եր այսպես:  
Մի առավոտ սովորականին պես, յերբ դու համբուրել ելիր նրա շրթունքները, հետո նաև ել եյիր նրա շրթունքներին ու նկատել, վոր թռել եր նրանց գույնը, նրանց կարմրությունը:

Հետո, յերբ ինքդ նայել ելիր հայելուն, տեսել եյիր, վոր շրթունքներիդ զանազան մասերը կարմրել

ելին,ու մտածել եյիր ալդ մասին և յեկել հետեւյալ՝  
միանգամայն ուղիղ յեղբակացության.

— Համբուրելիս ներկը կպել ե շրթունքներիս...  
Վոչ, վոչ, այդ կարծիքը սխալ ե. այդ յիս այնքան  
ուժով եմ համբուրել նրան, վոր շրթունքների արյուն-  
նը անցել ե իմ շրթունքներին. բայց շուտով նոր ար-  
յուն կգա հնի տեղը, և ձեր շրթունքներն ելի իրենց  
նախկին կարմբությունը կստանան:

Դու թաշկինակով մաքրել ես բերանդ, շարժվել  
գեղի նա և նկատել, վոր իսկապես շրթունքներն ի-  
րենց նախկին կարմբությունն են ստացել:

Շատերը, քո վոխերիմ թշնամիները, այսպիսի  
հասարակ բաները չեն կարողանում հասկանալ իմ սիրելի հերոս:

Վորոշմանդ համաձայն դու քայլում ես դեպի  
գեղատուն, գնում մի շիշ ողեկոլոն և մի արկղ պուղ-  
բա ու գեղի գրասենյակ շարժվում:

Եերգելով մտնում ես գրասենյակ, բարեկում աշ-  
խատակիցներիդ, ժալտալով նայում Աշոտին և նստում  
գրասեղանիդ մոտ ու սկսում աշխատել:

— Կրկին ուշացար, ընկեր Սերոբ, այդպես չի  
կարելի, — լսում ես վարիչի ձայնը:

— Ընկեր Լեռն, ազնիվ խոսք, առավոտը ժա-  
մը հնգին եմ արթնացել ու մինչև հիմա գրասենյա-  
կի հասարակական խոշոր արժեք ունեցող թղթերով  
ելի զրադված, — ասում ես դու:

— Այս վերջին անգամը լինի, այլապես...

— Լավ, լավ, ընկեր Լեռն, շատ լավ:

Բայց մտքումդ ինչպես ես հայհոյում նրան:

Գրասեղանի արկղից հանում ես միքանի թըղ-  
թեր և գեղի կից սենյակը շարժվում:

վարիչն այստեղ է, այնտեղ են և միքանի ծառոթ ու անծանոթ մարդիկ:

Դու նայում ես անծանոթներին, բարեում ծառոթներին ու գեղի մեքենագրուհին շարժվում և ձեռքիդ թղթերը գեղի նա պարզում:

— Ընկեր Անիչկա, վերցրեք... Վերցրեք... Վեր... ցը... բեք...

Գրպանումդ հանգիստ նազում են ողեկոլոնն ու պուղրան:

Դու զարմացած յետ ես քաշվում և չես կարողանում հասկանալ թե ինչ ե պատահել. գիշեր է, լեռազնում ես...

Գրամեքենայի մոտ նստած տհսնում ես վոչ թե Անիչկալին, այլ ինչ-վոր, ինչ-վոր մի աղջկա, վորի կրծքի վրա փայլում ե կիՄ-ը...

— Այս ի՞նչ է, — մտածում ես դու:

Իսկ նոր մեքենագրուհին, անծանոթ աղջիկը, նայում ե քեզ, մի ըովե դադարեցնում ե աշխատանքը և ասում.

— Տվեք խնդրեմ. այդ թղթերը, լեթե հարկավոր և մեքենագրել:

Բայց դու «խոշոր հասարակական և իդեոլոգիական» նշանակություն ունեցող թղթերը չես տալիս նրան, այլ ճմլառում ես դրանք...

Իսկ գրպանումդ հանգիստ նազում են՝ ողեկոլոնն ու պուղրան:

— Լավ, ինչպես յերեռում ե դուք զբաղ... զբաղված եք, լես հետո, յես հետո կըերեմ, — շշնջում ես դու ու շարժվում դեպի կից սենյակը, մոտենում սեղանիդ ու խորասուզվում «աշխատանքների» մեջ:

Մանր վիճակ ես ապրում դու, իմ քաջ հերոս, միայն հերոսներն են, վոր կարողանում են զիմանալ այդպիսի համաշխարհային արժեք ունեցող վողբերգական դրություններին:

Քըքրում ես ինչ-վոր թղթեր, ժամանակ-առժամանակ նայում ես աշխատակիցներիցդ վորեև մեկին և մտածում, թե ումից կարելի յե մի բան հարցնել Անիչկայի մասին...

«Անիչկա, ախ, Անիչկա, սիրուն յար»...

Թղթերի վրա ինչ-վոր բաներ ես գրում, հետո հայացքդ ընկնում ե Աշոտին, դու մտածում ես վեր կենալ և խեղդել նրան, բայց դարձյալ անպատասխան հարցն ուղեղիդ դուռն ե ծեծում և պատասխանի չսպասելով՝ ներս մտնում, անկոչ հյուրի պիս ուղեղիդ կենտրոնի առաջ կանդնում:

— Ի՞նչ եք կամենում, — հարցնում ե ուղեղիդ կենտրոնը անկոչ հյուրին:

— Պատասխան:

— Ի՞նչ պատասխան, ինչի՞ պատասխանը:

— Ուր ե Անիչկան, մեքենագրուհի Անիչկան, — հարցնում ե անպատասխան հարցը:

— Ա, իսկապես, — բացականչում ե ուղեղիդ կենտրոնը, — յես մտածեցի ինչ-վոր Աշոտի մասին և Անիչկային, մեքենագրուհի Անիչկային, մոռացաւ:

— Նու, ինդրում եմ հետաքրքրվեք և ինձ բավարարեք, — խոսում ե անպատասխան հարցը և դուքս ե գալիս ուղեղիցդ:

Ուղեղիդ կենտրոնը մենակ ե և մտածում ե, մըտածում ե լուրջ...

Ո՞ւր գնաց Անիչկան, մեքենագրուհի Անիչկան:  
«Անիչկա, ախ, Անիչկա, սիրուն յար»...

Իսկ գրպանումդ հանգիստ նազում են ողեկոլոնն  
ու պուղբան:

Քաղաքային ժամացուցը զարկում ե յերկուսը:

Դու, մյուսների պես, զաղարում ես աշխատելուց  
ու դուրս դալիս փողոց և դեպի ճաշարան շարժվում:

Քայլում ես դեպի ճաշարան, անցնում յերկար  
ու ձիգ փողոցներ ու դարձյալ Անիչկայի, մեքենա-  
գրուհի Անիչկայի մասին մտածում...

Ախ, հիմա ի՞նչ անես դու Զգիտես նույնիսկ, թե  
վորտեղ ե ապրում նա:

Գուցե նա հիվանդ ե: Գուցե...

Եհ, իմ սիրելի հերոս, գուցեների յետեից մի  
ընկնի, վորովհետե նա...

Դժվար ե, շատ դժվար ե գրությունդ:

Յերկար քայլելուց հետո դու հասնում ես ճա-  
շարան, անցնում ես ներս և տեղ գրավում:

— Ի՞նչ եք ուզում, — հարցնում ե մատուցողը:

— Ուտելու մի վորեկ կերակուր և մի շիշ ել լի-  
մոնադ, — ասում ես դու:

Մատուցողը հեռանում ե, իսկ դու շարունակ  
Անիչկայի, մեքենագրուհի Անիչկայի մասին ես մը-  
տածում:

Մատուցողը կերակուրն ու մի շիշ լիմոնադը  
դնում և սեղանի վրա:

Դու նայում ես կերակրին, բայց նրա ի՞նչ լի-  
նելը չես հասկանում և սկսում ես ճաշակել այն:

Ու շարունակ Անիչկան ե պարում ուղեղումդ:

Իսկ գրպանումդ նազում են ողեկոլոնն ու պուղ-  
բան:

Զախ ձեռքդ դեպի լիմոնադի շիշն ես մեկնում,  
վերցնում այն և թեքում դեպի բաժակն ու կամե-  
նում լցնել:

Մտածում ես, շարունակ մտածում Անիչկալի,  
մեքենագրուհի Անիչկալի մասին:

— Ընկեր, ինչու յեք լիմոնադը թափում, — խո-  
սում ե սեղանակիցդ:

— Հը՞:

— Լիմոնադը թափվում է:

Դու նայում ես լիմոնադի շշին և նկատում, վոր  
նա դատարկվել ե, և միայն մի փոքրիկ բաժակ ե լցվել:  
Մտածում ես...

Վերցնում ես բաժակն ու մոտեցնում բերանիդ:

Մտածում ես...

Ճաշում, վերջացնում ես և դեպի փողոց քայ-  
լում:

— Ընկեր, փողը, — լսվում ե մատուցողի  
ձայնը:

— Ախ, ներողություն, — ասում ես դու և դեպի  
նա մեկնում փողը:

Հեռանում ես ճաշարանից ու ճանապարհին մտա-  
ծում՝ վորքան կոպեկ իզուր կորցրիր լիմոնադի  
համար:

Միշտ Անիչկան ե, մեքենագրուհի Անիչկան ե  
պարում ուղեղումդ:

Ախ, Անիչկա, քո պատճառած վերքերին դեղ  
չկա...

«Անիչկա, ախ, Անիչկա, սիրուն յար...»

Դու քայլում ես դեպի տուն, և ժամանակը սա-  
ռում անցնում ե:

Դուրս ես գալիս անից և գեղի թելարան քալ-  
լում:

Թեյարանում վերջնում ես լերկու կաթ:

Զախ ձեռքով մի բաժակն ես բռնում, աջով  
մյուսը և սկսում խմել շարունակում մտածել և հա-  
մարյա միասին վերջացնում լերկու բաժակ կաթը և  
դարձյալ գեղի տուն շարժվում:

Մտածում ես:

Հասնում ես տուն:

Կանգնում ես սենյակի կենտրոնում և դիտում  
պատից կախված նկարները:

Կիսամերկ կանայք! Ահա, և լենինի նկարը...

Դու մոտենում ես նրան և խորը մի հայացք  
զցում գեղի նա:

— Հը, ասում են՝ մեծ մարդ ես, ապա ասա, վմբ-  
տեղ և ապրում Անիչկան, մեքենագրուհի Անիչկան,  
ինչու նա այսոր գործի չեկավ, ով եր այն նորեկ մե-  
քենագրուհին: Ախ, դու վոչինչ չես պատասխանում...  
Դու չես խոսում...

«Անիչկա, ախ, Անիչկա, սիրուն յար...»

Մտածում ես:

Դու ընկնում ես մահճակալին և մտածում ես Ա-  
նիչկայի, մեքենագրուհի Անիչկայի, կորմիր, չափա-  
զանց կարմիր շրթունքներ ունեցող Անիչկայի մա-  
սին, իսկ ժամանակը հոսում ե, անցնում...

## 2.

Արեգակի մի փոքրիկ ճառագալթ պատուհանի  
ապակիների կոտրված մասով ընկել և սենյակիդ ներսը  
ու խաղում ե պատի հետ, պատից կախված մերկ կա-  
նանց պատկերների հետ:

Դու կանգնել ես սենյակի կենտրոնում ու կռնկում ես շապիկդ:

Քո դեմքն այնքան խնդուն ե, քո հազին նոր գուլպաներ կան, նրանցից ել հոտ չի գալիս:

Ձեռքերդ պարզում ես աջ ու ձախ ուղղությամբ, քաղցր հորանջում, մոտենում սեղանին դրած հայելուն, նրա մեջ տեսնում դեմքդ, քնկոտ աչքերդ չսանրած մազերդ և ժպտում ու խոսում.

— Եխ, ինչքան լավիկն ե նա:

Դու վերցնում ես դուլլը և քայլում դեպի աղբյուր:

Վերադարձին նկատում ես, վոր հարեաններդ զարմացած նայում են քեզ, հետո խոսում իրար մեջ: Դու պարզ լսում ես նրանց:

— Ես յերբ քաջացավ, — հարցնում ե մեկը:

— Ցեսիմ, — պատասխանում ե մյուսը:

Իմ սիրելի հերոս, ինչ ուզում են թող ասեն. սարի վրա ձյուն կգա, հերոսի մասին կլսուեն. դու ուշադրություն մի դարձրու, այլ քո գործին կաց:

Մաքուր լվացվում ես, սանրվում, ողեկոլոնով ոծում դեմքդ, գլուխդ, դուրս գալիս սենյակից ու, փոխանակ դեպի վար, դեպի վեր ես քայլում, դեպի հոսող գետը:

Դու կանգնում ես Գետառ-չալի ափին. իսկ նա հոսում ե, ոճի պես գալարվելով առաջ վազում:

Քեզ թվում ե, թե ջուրը բարձրանում ե դեպի վեր, ահա դու մեն-մենակ լողում ես նրա մեջ և հանկարծ, վորտեղից վորտեղ, հայտնվում ե նա, այն գրավիչ, այն հարքեցնող աղջիկը, և դու լողում ես դեպի նա, գրկում նրան, ու Գետառ-չալն ե հոսում, և

Դետառ-չալի հոսող ջրերի գրկում դու համբուրում ես  
նրանու

— Ախ, Գետառ, Գետառ, աննման տղջիկ ե  
անպիտանը!

Դողացող քալերով դու հեռանում ես Գետառից  
ու դեպի աշխատավայրը շարժվում:

Ճանապարհին դնում ես ողեկոլոն և պուղը:

Յերբ մտնում ես գրասենյակ, աշխատակիցներդ  
վաղուց լեկած և գործի լին անցած լինում:

Դու զգում ես, վոր մեկն ու մեկից, ուշանալու  
համար, պիտի նկատողություն ստանաս. այդ ժամա-  
նակ նստում ես աթոռին, դեմքից հոգնած մարդու  
դեմք տալիս և ասում անորոշ մեկին.

— Ախ, ցավ ու կրակ ե գրասենյակում աշխա-  
տող լինելը. հա գրիր ու գրիր, առավոտյան գրիր,  
յերեկոյան գրիր, վողջ զիշեր գրիր: Հիմա լես ինչպես  
աշխատեմ. քունս այնպես ե տանում. . . . .  
եխ, եխ, ինչ արած. պիտի աշխատել. յեթե վոչ...  
Յեթե պարապ մնանք—իդեուզգիական շեղում կա-  
նանք, բյուրոկրատիզմ կստեղծենք և չենք կարող տա-  
րին բեկել:

Խոսիր, ճիշտ այդպես խոսիր, իմ քաջ հերոս և  
մերթընդմերթ ել աշքիդ տակով նայիր, թի ով ե  
քեզ լսում: Ուղիղ տասն որ ե, վոր դու չես տեսել  
մեքենագրուհի Անիչկային, ուղիղ իննը որ ե, վոր դու  
գիտես նրա չերեալու պատճառը, ուղիղ ութ որ ե,  
վոր դու դադարել ես նրա մասին մտածել, և ուղիղ  
ութ որ ե, վոր քեզ հուզում ե ուրիշը:

Ինն որ առաջ, յերբ դու իմացար, վոր մեքե-  
նագրուհի Անիչկային գործից հեռացրել են, վորով-

հետեւ լավ չեր աշխատում, վարքը լավ չեր և այլն և  
այլն, այն ժամանակ դողացիր դու, դողաց և պաշտո-  
նըդ, ու զգացիր, հասկացար, վոր քեզ ել ..

Ութ որ առաջ, յիրը դու ուշաղըությամբ նայե-  
ցիր նորեկ մեքենագրուհուն, մտածեցիր, վոր կյանքը  
դարձյալ իր նախկին հունով առաջ կցնա, վոր նախ-  
կին մեքենագրուհի Անիչկայի և նորեկ մեքենա-  
գրուհի Հեղուշի մեջ վոչ մի տարբերություն չկա, վոր  
միայն նրանց անուններն են իրարից տարբերվում,  
ու ել ուրիշ վոչինչ:

Թեկ զգացիր, վոր պաշտոնդ չի դողում ու վոչ  
ել դու:

Ութ որ առաջ դու մոռացար նախկին մեքենա-  
գրուհի Անիչկային, ութ որ առաջ դու սկսեցիր հետա-  
քրքրվել նորեկ մեքենագրուհի Հեղուշով:

Թո գրպանում ալժմ կա ողեկոլոն և պուդրա.  
ում համար ես գնել այդ. դեհ, պարզի. նորեկ մեքե-  
նագրուհի Հեղուշի համար:

Դու մտածում ես, վոր նախկին մեքենագրուհի  
Անիչկայի և նորեկ մեքենագրուհի Հեղուշի միջն վոչ  
մի տարբերություն չկա, բացի անուններից, բայց  
ներքուստ ինքդ զգում ես են, վոր նորեկին  
շուտ մոտենալը, ձեռքերդ նրա կուրծքը տանելն այն-  
քան ել հետ չեւ:

Դու ալդ միայն զգում ես, հասկացար, միայն  
զգում, բայց կարող ե պատահել, վոր զգացմունքնե-  
րը մարդուն խարին, այնպես վոր զործից մի նա-  
հանջիր, իմ սիրելի, իմ քաջ հերոս:

Այսպիսի հարցերով դու ութ ցերեկ և ութ գի-  
շեր զբաղվել ես, կամեցել ես իմանալ, թե ինչու նրա

կրծքին կիՄ կա, աղջիկն ինչ՝ հասարակական աշխատանքն ինչ, նրանք միայն... պարզ ե, թե ինչու համար են...

Դու մատծել ես, թե ինչու նա պուդրա չի քսում, թե ինչու շրթունքներն այնքան ել կարսիր չեն, դունե ներկ քսեր. չե՛ վոր վերջապես ներկերն աղջիկների համար են, իսկ աղջիկները՝ ներկերի:

Յեվ այդ ե պատճառը, վոր գու լերկար մտատանջվիլուց հետո գնեցիր պուդրա ու ողեկոլոն, մտածելով, վոր մերջիվերջո մի որ նա յել կհետաքրքրվի դրանցով:

Կից սենյակից վարիչն անցնում ե ձեզ մոտ. ուրեմն նորեկ մերենազրութին այնտեղ մենակ ե:

Դու վերցնում ես մի թուղթ և դեպի կից սենյակը քայլում...

— Որիորդ Հեղուշ, ներողություն, կարծեմ ձեզ խանգարեցի:

— Վոչինչ:

— Դեհ, ուրեմն, ընկեր Հեղուշ, վերցրեք և մերենազրեք ալս թղթերը և մեկ ել... մեկ ել այս,— դու թեքվում ես դեպի նա, — այս ողեկոլոնն ու պուդրան, — դու ձեռքդ կպցնում ես նրա ուսին:

— Ընկեր Սերոբ:

Ախ, ի՞նչ վատ աղջիկ ե, ինչու այդքան խիստ ե, բա ել ինչու համար ե նա, ինչու համար են նրա գեղեցիկ այտերն, ինչու համար ե նրա կուրծքը...

Միքանի անգամ գործելու այդպիսի փորձեր ես արել, և բոլոր փորձերդ ել անհաջողության են մատնվել:

Հանկարծ ուղեղդ պայծառանում ե, դու մտա-

ծում ես, թե՛գուցի՞ ինձանից խուսափում ե, վորովհետև կոմլերիտական չեմ, և այդ միտքը քեզ այնքան համոզեցուցիչ, այնքան հասկանալի յե թվում:

— Ընկեր Հեղուշ, միթե յես անպայման կոմլերիտական պիտի լինեմ, վոր...

— Խնդրեմ չխանդարել:

Ախ, ինչու յե նա այդպես, ինչու յե նա խուսափում քեզնից, ինչու դու մի տեսակ լերկուզով ես մոտենում նրան, և այդ յերկյուղն ե, վոր քեզ կաշկանդել ե, վոր քեզ...

— Ներողություն,—ասում ես դու,—տպեք այս թուղթը:

Ու թուղթը շպրտելով, դողդոջուն քայլերով ճեռանում ես ալդ սենյակից:

Նստում ես գրասեղանի մոտ, սկսում ես ծխել. գլանակի ծուխը բարձրանում, համբուրվում և դեմքիդ հետ, իսկ դու շարունակ մտածում ես:

Դրողը տանի ալդ աղջկան, ինչու դու չես կարողանում այնպես հասարձակ մոտենալ նրան, ինչպես մոտենում ելիր Անիչկային, նախկին մեքենագրուհի Անիչկային:

Գրողը տանի քեզ, նորեկ մեքենագրուհի Հեղուշ:

Միթե դու անպայման կոմլերիտական պիտի լինես, վոր կարողանաս: Սա թնչ խալտառակություն ե, սա թնչ սիրո կուսակցական բաժանում ե:

Իսկ առանց գրան գործը շատ դժվար առաջ կգնա. այլապես ինչու յերկու մեքենագրուհիներն ել իրար նման չեն:

Տուն գնալու ժամանակն ե:

Նորեկ մեքենագրուհին դուրս ե գալիս կից սե-  
նյակից և մոտենում վոչ կոմիերիտական Աշոտին, վո-  
րին դու ատում ես, վորի մասին լսել ես, իրը թե  
ուզում և կոմիերիտամիության շարքերը մանել

— Ճաշաբան:

— Ալո, Աշոտ, —պատասխանում ե Նորեկ մեքե-  
նագրուհի Հեղուշն Աշոտի հարցին:

— Քայլենք:

— Քայլենք:

Յեզ նրանք ժպտում են ու միասին թողնում  
դրասենյակը:

Դու անշարժ նստած ես սեղանիդ մոտ և քարա-  
ցած հայացքով նայում ես գրասենյակի դռանը, վոր-  
տեղով նրանք միասին դուրս գնացին:

— Ընկեր Սերոբ, —ձայնում ե հիմն սրկի տեխ-  
նիկական աշխատակիցը, —գրասենյակը կողպում եմ:

— Հը, —կարծես քնից ես արթնանում դու:

— Տուն գնալու ժամանակն ե:

— Համ, լավ:

— Դուրս ես գալիս փողոց, միքանի ըոպե յել  
այնտեղ կանգ առնում, նայում դես ու զեն և հետո  
քալում առաջ, քալում դեպի տուն: Ճաշելու վոչ մի  
տրամադրություն չկա:

— Սերոբ, Սերոբ:

Այն ժկ ե քեզ կանչում, կարծես ձայնը ծա-  
նոթ ե:

Դու կանգ ես առնում և դեպի յետ նայում:

Ախ, դա Անիչկան ե, նախկին մեքենագրուհի  
Անիչկան, վորին տասն որ ե, ինչ դու շես տեսել, վո-  
րին հիմնարկից հեռացնելու պատճառն իննը որ ե,

ինչ դու իմացար, վորի մասին ութ որ ե, ինչ դու չես մտածում:

— Ախ, վերջապես գտա քեզ. յեթե իմանաս, թե ինչքան եմ կամեցել տեսնել քեզ... յեթե իմանաս... Յես շատ անդամ վորոշեցի գալ զրասենլակ կամ նրա մոտերքում սպասել քեզ, բայց չեցի կամենում հանդիպես ուրիշներին... ծանոթներին... հիմնարկի նոր մե...քե...նա...գրու...հուն... Ախ... ինչ լավ յեղավ, վոր հանդիպեցինք իրար...

— Շատ իզուր,—սառը խոսում ես դու:

— Ի՞նչպես,—զարմանում ե նա,—ուրեմն իզմուր եյի տասն որ շարունակ մտածում քո մասին, փընտռում քեզ:

— Այո, շատ իզուր,—պատասխանում ես դու:

Գրպանումդ դրած աջ ձեռքդ դիպչում ե ողեկոլոնին ու պուդրալին, և դու հիշում ես անցած, գընացած որերը, լերը... Եհ, անցածը գերեզմանոցին ե պատկանում, անցածը լավ ե յեղել քեզ համար, բայց ներկան նրանից ել լավ ե...

— Ինչժվ բացատրել քո այս վերաբերմունքը, Սերոր,—հարցնում ե Անիչկան:

— Նրանով,—սկսում ես դու,—վոր դու, վոր դու չես աջակցիլ մեր հսկա սոցիալիստականին, դարկ ես տվել բյուրոկրատիզմին, և մեր յերկիրը մնասվել ե, ու քեզ հեռացրել են աշխատանքից. հիմա շատ պարզ ե, վոր մեր մեջ... Նու, մեր մեջ մի վորեե կապ լինել չի կարող... Թո տեղը հիմա աշխատում ե մի մարտ, մի հրաշալի անպիտան աղջիկ...

— Բայց չե վոր...

— Ցտեսություն,—ասում ես դու և քայլում տուաջ:

— Բայց լավ իմացիր, վոր դու յել պիտի ինձ հետեւես,— լսում ես Անիչկայի ձայնը:

Մի բոպե դու կանգ ես առնում, նայում ղեպի հա, մտածում. քեզ թվում ե, վոր նրա խոսքերի մեջ ճշմարտություն կա, բայց իսկույն սխալ ես համարում այդ միտքը, դատելով, վոր հիմնորկում վոչ մի փոփոխություն չի կատարվել, վորն աղդի և քեզ վրա. չե վոր նախկին և նորեկ մեքենագրուհիների մեջ այնքան խոշոր տարբերություն չկա. միքիչ նորն ե, վոր տարբերվում ե հնից, բայց շուտով կնմանվի հնին, կհարմարվի միջավայրին:

Հասնում ես տուն ու պառկում մահճակալին և հայացքդ հառում պատից կախված նկարին:

— Դե, ընկեր Լենին, քեֆդ ի՞նչպես ե,— հարցը նում ես դու, — տեսնում ես ելի, թե ի՞նչքան եմ մտածում նրա մասին, դեհ, ասենք ի՞նչ կարիք կա այդ մասին յերկար ճառելու, քանի վոր ինքդ ել իր ժամանակին սիրահարվել և այժմ կհասկանաս ինձ... Եխ, ընկեր Լենին, յես սիրում եմ քո աշակերտներից մեկին, Հեղուշին, արես վկա, վոր ճիշտ եմ ասում, կուղես՝ հավատա, կուղես՝ վոչ, այդ քո գործն ե, բայց նոտ...

Հետո դու հայացքդ հեռացնում ես նկարից, հառում առաստաղին, և ժամանակը սահում, անցնում ե, ու փակվում են աչքերդ, ու դու հանգիստ քնում ես...

### 3.

Նորից անցել ե տասն որ, և ինչեր չեն պատահել այդ աասն որվա ընթացքում:

Դու բոլորովին մոռացել ես նախկին մեքենագրուհի Անիչկային, նրան, վորը կարմիր, խիստ կարմիր շըր-

թունքներ ունի, ուղեղումդ ջնջվել ե Ենրա նկարը, և  
տեղը նկարվել ե, քանդակվել ե մի ուրիշ, մի հրա-  
շալի մեքենագրունու պատկեր:

Ախ, Հեղուշ, Հեղուշ...

Նորից անցել ե տասն որ, և ինչեր չեն պատա-  
հել այդ տասն որվա ընթացքում:

Յերեկո լի: Ժապուռմ են լերկնքում վառվող աստ-  
ղերը, սիրալանում լուսնյակի հետո Արթուն և քա-  
ղաքը, քաղա ային այգին լիքն և մարդկանցով, վո-  
մանք նստած՝ զրուցում են, վոմանք զրունում են ու  
ժպտում, իսկ դու, դու մեկուսացել ե կանգնել ես սե-  
նյակիդ պատուհանի առաջ ու անորոշ հայացքով դի-  
տում ես անհայտ հեռուները:

Գարնանալին հով զեփյուռն անցնում է սենյա-  
կիդ ներսը, ճանապարհին կպչելով դեմքիդ, իսկ լեր-  
կընքում աստղերն են փայլում ու սիրաբանում լուս-  
նի հետ, անվիրջ սիրաբանում:

Քո դեմքն անչափ, անչափ տխուր ե, կարծես թե ա-  
կոսվել են աչքերդ, ուղեղումդ ինչ-վոր մտքեր են պարում,  
որորվում և այդ մտքերը քեզ հանգիստ չեն տալիս:

Հարեան սենյակի նույնպես բաց պատուհաննե-  
րով ինչ-վոր հնչլուններ են հասնում ականջիդ, ու  
թվում ե, թլում ե քեզ, վոր մեկը ծիծաղում ե, ծաղ-  
րում ե քեզ... Ու դու կամենում ես անցնել հարեան  
սենյակը, բռնել քեզ ծաղրողի կոկորդից ու խեղեկը  
նրան, բայց այդ բռապելին դրսում մլավում ե կատուն,  
և դու մոռանում ես հարեան սենյակն ու ծիծաղը և  
բարկանում կատվի վրա, կամենում ես նրանից հանել  
վրեժդ, սակայն մտքերը պարում են, որորվում, շարժ-  
վում գանգիդ խոռոչում, ողի մեջ դու տեսնում ես

նրանց և կատվին ել ես մոռանում ու մտածում, շարունակ մտածում նրանց մասին:

Ախ, Հեղուշ, Հեղուշ...

Նորից անցել ե տասն որ, և ինչե՛ր չեն անցել այդ տասն որվա ընթացքում:

Անցել ե տասն որ, և հիմա, յերբ դու հիշում ես այդ տասն որվա ընթացքում պատահած դեպքերը, ջղայնանում ես, կատաղում մեկի վրա, կամենում մեկից լուծել վրեժդ... բայց դու անզոր ես, իմ սիրելի հերոս, և չկա մեկը, վորից դու կարողանալի՞ր հօսնել վրեժդ:

Բաղաքում այս ըոպեյիս ամեն մարդ գիտե իր անելիքը և զրաղված ե իր գործերով: Վոմանք աշխատում են, վոմանք ընթերցում, վոմանք քնած են, վոմանք զրունում են, յերիտասարդներից շատ-շատերը գուցե բացատրվում են իրենց սիրո առարկայի հետ և ստանում դրական պատասխան և խնդում, հուզվում ու ժպտում: Շատերը գուցե մերժվում են և հետո խաղաղ սրտով կամ դեպի տուն քայլում, կամ հենց մնում նուխկին սիրո առարկայի, իսկ ներկայիս ընկերունու հետ, զրունում միասին, խոսում վորպես ընկեր և խնդում և ժպտում:

:Բայց դու անզործ ես, դու չգիտես անելիքդ ու կանգնած ես բաց պատուհանի առաջ և անորոշ հայացքով նախում ես դեպի անհայտ հեռուները:

Նորից անցել ե տասն որ, և ինչե՛ր չեն պատահել այդ տասն որվա ընթացքում:

Յերբ այդ ամենը հիմա դու մեկ-մեկ հիշում ես... Եհ, շատ դժվար ե հիշել անցյալը, անցյալում տեղի ունեցած անախորժ դեպքերը:

Սկզբում դու մտածում եյիր, վոր նախկին մեքենագրուհի Անիչկալի և նորեկ Հեղուշի մեջ վոչ մի տարբերություն չկա, վոր միայն նրանց անուններն են տարբերվում իրարից, իսկ այժմ, իսկ այժմ դու արդեն ուրիշ կարծիքի չես...

Յերբ դու փորձում ես մոտենալ նորեկ մեքենագրուհի Հեղուշին, մի ուժ քեզ վանում ե նրանից, և դու դողում ես, դու չես համարձակվում նույն հայացքով հայել, ինչ հայացքով վոր նայում եյիր Անիչկալին, նախկին մեքենագրուհի Անիչկալային:

Յեկ այդ վանող ուժն ե, վոր կաշկանդել ե քեզ, ալդ ուժն ե, վոր ..

Եհ, դժվար ե, շատ դժվար ե... Յես մտնում հմ դրությանդ մեջ, իմ սիրելի հերոս, իմ քաջարի ասպետու

Նորից անցել ե տասն որ, և ինչեր չեն պատահել այդ տասն որվա ընթացքում...

Այն անպիտան Աշոտն սկսել ե ավելի և ավելի մոտենալ նրան, անցլալ որը դու տեսար նրանց թեանցուկ արած զբոսնելիս քաղաքային այզում:

Ո՞վ զիտե, զուցե թեանցուկից բացի ուրիշ բաներ ել են արել...

Նորից ե անցել տասն որ, և դու շարունակ այդ աղջկա մտսին ես մտածում, տասը դիշեր դու հանգիստ չես քնել, տասն որ դու չես կարողացել հանգիստ ճաշել և այժմ մի լակոտ, վորը, զսւցե, իսկի յել չի մտածել նրա մասին, այժմ թեանցուկ ե անում նրա հետ, զբոսնում է հետը և... Եհ, դժվար ե, շատ դժվար...

Դու չես կարողանում պատուհանի մոտ կանգնած մնար վորովհետեւ ոդի մեջ շարունակ նրանց ես տես-

նում և փակում ես պատուհանն ու հեռանումն րանից:

Պատուհանից հեռանալիս հայացքդ ընկնում ե պատից կախված Լենինի նկարին, և դու դանդաղ քայլերով մոտենում ես նրան ու խռոում.

— Տեսնում ես ելի, վորքան եմ չարչարվում, ընկեր Լենին, վորքան եմ տանջվում քո բանակին պատկանող մի հասարակ, բայց բարդ աղջկա համար... Ախ, ընկեր Լենին, լեթե գու իմանայիր, թե ինչպես ե տոչորվում սիրաս նրա համար, թե ինչպես եմ սիրում նրան յես... Իսկ նա, իսկ այն ապերախտը. ճիշտ ե, իմ սիրո մասին գեռ նրան վոչինչ չեմ ասել, բայց այնպես եմ վարվել հետք. վոր նա պիտի հասկանար ալդ, գուցե և հասկացել ե, յես համոզված եմ դրանում, և ինչ ես կարծում, նա ի՞նչպես ե վերաբերվում գեպի ինձ... Սառն ե, հասկանում ես, սառն ե, հազիվ ե քարեռում ինձ ու ել ուրիշ վոչինչ: Յերբ յես թղթեր եմ տանում նրա մոտ մեքենագրելու, նա վերցնում ե զբանք, իսկույն, առանց ուշացնելու, մեքենագրում ե տալիս ինձ: Յեվ յես շատ եմ ուզում կանգնել նրա մոտ, նայել նրա մեքենայի ստեղների... վրայով վազող մատներին, համբուրել նրանց ու ինքնամուացում ասլրել... բայց չեմ կարողանում, մի ուժ վանում ե ինձ, և յես հեռանում եմ նրանից: Ախ, ընկեր Լենին, ինչու նա ինձ հետ այդպես ե վարվում, ինչու նա ինձ չի սիրում... Միթե ալդ ե ձեր քաղաքականությունը, միթե վոչ մի վոչ կոմիերիտական իրավունք չունի սիրելու մի կոմյերիտական աղջկա...

Դու հեռանում ես Լենինի նկարից, շարժվում գեպի թախտը, կամենում պառկել, բայց հանկարծ հայացքդ ընկնում ե պատից կախված մերկ կանանց

պատկերներին, և դու տեսնում ես նրանց մերկությունն ու իրական մերկության կարիք զգում...

Դու հիշում ետ մեկին, վորի մարմնին իրավունք ես ունեցել մոտենալու, և այդ մեկը հիմա չկա, նրան հանել ես ուղեղիցդ, ու այժմ ուրիշ մարմին և այնտեղ նկարվել:

Դու պատկում ես թախտին, հայացքդ հառում առաստաղին, հետո ծովում դեպի աջ, հետո դեպի ձախ, վերցնում ու շպրտում ես բարձր և չես կարողանում հանգստանալ և չես կարողանում քնել:

Դու կարծում եյիր, վոր նորեկ մեքենագրուհին վոչնչով չի տարբերվի Անիշկայից, վոր միայն նրանց անուններն են տարբեր, բայց նրանք տարբերվեցին, նրանք չնմանվեցին իրար, այլ...

Այս, գրողը տանի քեզ, նորեկ մեքենագրուհի Հեղուշ...

Դու զգում ես, վոր դողում և պաշտոնդ, վոր կարող ե պատահել...

Ե՞ս, շատ դժվար ե, շատ դժվար:

#### 4.

Բոլորն ել զբաղված են աշխատանքով, դու ևս Վարիչի հանձնարարությամբ մի զբություն,

Ու հիմա մտքերը պարում են ուղեղումդ, մտքեր չար և չարաբաստիկ, ու դու չես կարողանում այդ չար և չարաբաստիկ մտքերից մեկը պոկել և դնել թղթի վրա:

Գրում ես, սպիտակ թղթի վրա տառեր են շար- վում, բայց յերբ կարդում ես, նկատում ես, վոր այն են, ինչ վոր դու յես կամենում գրել, ինչ վոր վարիչն ե ասել:

Պատում ես թուղթը, նորից դրում, ու դարձլաւ  
նույնը, և զարձյալ նույնը:

Վոչ, իմ սիրելի հերսո, նախ հարկավոր ե պար-  
զել ամեն ինչ, հետո արդեն հանգիստ աշխատել, ու-  
ղեղում պտավող չար ու չարաբաստիկ մեքերից մեկը  
պոկել ու դնել սպիտակ թղթի վրա:

Այս, ալո, անպայման, հարկավոր ե ամեն ինչ  
պարզել:

Դու նայում ես Աշոտին և նկատում, վոր նա խո-  
րառուգիած ե իր աշխատանքի մեջ:

Վորքան, վորքան ե յերջանիկ նա:

Ախ, ի՞նչպես դու կխեղդեյիր նրան, այն անպի-  
տանին, վոր մոտ ե նորել մեքենագրուհի Հե-  
ղուշին ե...

Հարկավոր ե ամեն ինչ պարզել:

Դրասեղանից վերցնում ես մի թուղթ և շարժ-  
վում դեպի կից սենյակը:

Այստեղ վոչվոք չկա, նա մենակ ե, վարիչը  
դնացել ե Ժողկոմխորհ, ինչ-վոր խորհրդակցության:

Անցնում ես կից սենյակը և դանդաղ քալերով  
մոտենում մեքենագրուհուն և թուղթը դեպի նա  
պարզում:

— Որիորդ Հեղուշ, ներովություն, ընկեր Հեղուշ,  
վերցրեք և մեքենագրեք այս թուղթը, սա հասարա-  
կական խոշոր արժեք...

— Տվեք, — ընդհատում ե նա քեզ:

Թուղթը տալիս ես նրան:

— Բայց չե՞ վոր սա մաքուր թուղթ ե, և վրան  
վոչ մի գրություն չկա, վորը մեքենագրեմ, - ասում ե  
նորել մեքենագրուհի Հեղուշը:

— Ախ, ներողություն, յես սխալվիլ եմ, յես այս  
ըստելին կուղղիմ սխալը:

Վերցնում ես թուղթը, բայց չես շարժվում տե-  
ղիցդ:

— Հը՞, ի՞նչ լեզավ:

— Արիորդ Հեղուշ, ախը... ախը .. ախը այդպես  
չի լինի, ե...

— Ի՞նչն այդպես չի լինի:

— Ախը, տունց քեզ չեմ կարողանում ապրել,  
ազնիվ խոսք եմ ասում, սիրում եմ, սիրում եմ քեզ,  
իմ ամբողջ...

— Վերջ տուր այդ բոլորին,—ասում ե նորեկ  
մեքենագրուհի Հեղուշը:

— Հեղուշ, յես քեզ շատ եմ սիրում, լենինը վկա,  
հասկանում ես, լենինը վկա... Այ, յես յերեկ խոսեցի  
լենինի հետ, քո զեկավարի, ուսուցչի հետ, և, ի՞նչ ես  
կարծում, ի՞նչ ասաց, հը՞... ապա, յեթե կարողանա  
ասել... նա համաձայնվեց, վոր մենք սիրենք իրար,  
նա ասաց, վոր վոչ կոմյերիտականն ել կարող ե սիրել  
ու ամուսնանալ կոմյերիտականի հետ...

Դու խոսում ես, անընդհատ խոսում, իսկ նա  
աշխատում ե, անընդհատ աշխատում, անընդհատ  
շարժվում են նրա մատները, զարկվում զրամեքե-  
նայի ստեղները... ու չրխկ, չրխկ, չրխկ, չրխկ...

Դու անթարթ աչքերով նայում ես նրան, իսկ  
մեքենան՝ չրխկ, չրխկ, չրխկ, չրխկ...

— Հեղուշ, — ձայնում ես դու:

Չրխկ, չրխկ, չրխկ, չրխկ:

— Հեղուշ:

Չրխկ, չրխկ, չրխկ, չրխկ:

— Հեղուշ, իսս չեմ կարող առանց քեզ ապրեմ  
հասկաննում ես...

Չըխկ, չըխկ, չըխկ, չըխկ...

— Հեղուշ,—ճշում ես դու և չոքում նրա վոտ-  
ների մոտ:

Մեքենայի ստեղներն անշտրժանում են:

— Ամոթ ե, ընկեր Սերոբ, իերիտասարդն այդ-  
քան թուլամորթ չի լինիլ:

— Յես չեմ կարող, հասկաննում ես, Հեղուշ, չեմ  
կարող...

Թո ձայնը լսվել ե կից սենյակում, աշխատողնե-  
րը շարժվել են իրենց տեղերից, մհուցել դուանը, բաց  
արել այն ու նայում են քեզ...

Ցերբ դու նկատում ես նրանց, մանավանդ Աշո-  
տին, իսկուն վոտքի յես կանգնում, ձեռքիդ բռնում  
մաքուր թուղթը, պարզում ես դեպի մեքենագրուհին և՝

— Որիորդ Հեղուշ, վերցրեք և շուտ մեքենագրեք  
այս թուղթը...

— Բեր գրությունը. չե՞ վոր դա մաքուր թուղ-  
թըն ե, — ասում ե Հեղուշը:

Նայում ես թղթին, պատռում այն, արագ քայ-  
լերով թողնում սենյակը:

Դուան մոտ կանգնած աշխատողները հեռանում  
են և ճանապարհ տալիս քեզ:

Ժամանակը սահում, անցնում ե:

Աշխատակիցներդ խորասուզված են իրենց աշ-  
խատանքների մեջ, միայն դու յես, վոր կամենում  
ես, փորձում ես աշխատել, բայց ուղեղումդ պարում  
են բազմաթիվ չար ու չարաբաստիկ մտքեր, և դու չես  
կարողանում պոկել նրանցից այն մեկը, վորը պետք  
ե դնել թղթի վրա:

Վարիչը կդա և կպահանջի գրությունը:  
Զըխկ, չըխկ, չըխկ, չըխկ...

Ու նորեկ մեքենագրուհին հանգիստ աշխատում  
ե կից սենյակում, իսկ քեզ թվում ե, վոր նրա շարժ-  
վող մատները զարնվում են ուղեղիդ ստեղներին, և  
այնտեղ անկապ, անիմաստ մտքեր են տպվում, ու այդ  
ե պատճառը, վոր դու չես կարողանում գրել գրու-  
թյունը:

Զըխկ, չըխկ, չըխկ, չըխկ...

Գալիս ե վարիչը և մոտենում քեզ:

— Գրությունը պատրաստ ե, — հարցնում ե նա:

— Վոչ, ընկեր վարիչ, մի շաբաթ կարեոր գործե-  
րով եյի զբաղված, — պատասխանում ես դու. — այս  
րոպելիս կգրեմ գրությունը:

— Դե շուտ արեք:

Վարիչն անցնում ե կից սենյակը:

Մաքուր թղթի վրա ինչ-վոր բան ես գրում և  
շարժվում դեպի կից սենյակը:

Յերբ մտնում ես կից սենյակը, նայում ես նո-  
րեկ մեքենագրուհի չեղուշին, հետո մոտենում վարիչին  
և նրա սեղանի վրա գնում գրությունը:

— Պատրաստ ե, ընկեր վարիչ, — ասում ես դու:

Վարիչը նայում ե գրությանը:

— Այս ի՞նչ ես գրել, ի՞նչ գործ ունի Լինինն  
այստեղ, ի՞նչ սիրո մասին ե խոսքը, — զարմացած հար-  
ցընում ե վարիչը:

Դու թեքվում ես դեպի գրությունը. և ընթեր-  
ցում այս:

— Ներողություն, ընկեր վարիչ, յես նորը կգրեմ,  
յես քիչ, այնպես, հենց այնպիս, հասարակ հիվանդ  
եմ, — ինձ հարկավոր ե հանգստանալ:

— Այո, քեզ հարկավոր և հանգստություն, մըշտական, ակական հանգստություն,—ասում ե վարիչը, և դու չես ըմբռնում նրան:

Կրկին նայում ես նորեկ մեքենազրուհի Հեղուշին և թողնում կից սենյակը:

Դարձալ նստում ես գրասեղանի մոտ, «Խորասուղվում» աշխատանքի մեջ, ջանում ուղեղումդ պարող չար ու չարաբաստիկ մտքերից մեկը պոկել ու դնել թղթի վրա:

— Ուրիմն ամուսնանում եք,—հորցնում ե կոմիտահական Սուրենն Աշոտից:

— Այո,— պատասխանում ե վերջի՛ ս:

Դու լսում ես նրանց, և մտքերի անիմները պըտըվում են ուղեղումդ:

Թողնում ես աշխատանքը, վերցնում գլխարկդ ու դուրս գալիս փողոց: Իսկ ներսում, գրասենյակում, յերջանիկ Աշոտը, վորին դու անչափ, ա չափ ատում ես, և չըխկ, չըխկ, չըխկ...

Շարժվում են նորեկ մեքենագրունու մատները, կպչում գրամեքենայի ստեղներին, և յերկաթյա տառերը շարվում են ուղեղիդ, ու դու քայլում ես յերկար ու ծիգ փողոցով, և անկապանկապ մտքերն են պարում ուղեղումդ...

Փողոցով անցնում ե ինչ-վոր մի աղջիկ, դու նկատում ես նրան:

Այն ժվ ե..

— Անիչկա:

Այն ժւմ ես կանչում դու:

Աղջիկը քավում ե:

Արագացնում ես քայլերդ:

— Անիչկա:

— Անիչկա:

Փողոցում անցուղաթձ անող մարդիկ նայում  
են քեզ:

— Անիչկա:

Աղջիկը կանգ և առնում և դեպի յետ նայում...

— Սերոբ:

— Անիչկա:

Հավասարվում ես նրան, և քայլում եք առաջ:

— Հը, թնջ ունես ինձ հետ,—հարցնում և Ա-  
նիչկան:

— Դու լավն ես, Անիչկա, քեզ իզուր են հեռաց-  
րել գործից, դու նման չես նրան:

Քայլում եք առաջ:

— Գնանք ինձ մոտ, Անիչկա,—ասում ես դու:

— Զեմ ուզում, յես վատն եմ, յես... յես շրթունք-  
ներս ներկում եմ...

— Վոչ, վոչ, Անիչկա,—ընդհատում ես դու նր-  
ան,—մի ասա, մի, դու լավն ես, դու չես ներկվում,  
այլ քո շրթունքները բնականից են կարմիր, դու նման  
չես նրան և... և... յես քեզ սի.. սիրում... սիրում եմ...

Նայում ես նրան և նկատում, վոր նա ժպտում  
ե, վոր փայլում են նրա աչքերը:

Քայլում եք առաջ:

— Գնանք ինձ մոտ:

— Լավ, - համաձայնվում ե նա:

Ու քայլում եք առաջ, հասնում քո տանը և անց-  
նում սենյակ...

Սենյակ մտնելուն պես շարժվում ես դեպի Լենի-  
նի նկարը, կանգնում նրա առաջ և խոսում.

— Դու լես, հա, համաշխարհային պրոլետարիատի,  
հեղափոխության, կոմմունիստական կուսակցության  
զեկավարը... Ղեկավար... Առաջնորդ... Մեծ ուսուցիչ...

Դու բարձրացնում ես ձեռքդ և կամենում զար-  
կել նրան, բայց հանկարծ ձեռքդ կախվում ե ողում,  
ու ծիծաղում ես դու...

Հայացքդ հեռացնում ես նկարից և դեպի Անիչ-  
կան, նախկին մեքենագրուհի Անիչկան շարժվում,

— Անիչկա, Անիչկա, յես ալնպես, այնպես ելի  
սիրում նրան, այն նորեկ մեքենագրուհի Հեղուցին,  
իսկ նա... իսկ նա... Յես քեզ սիրում եմ, Անիչկա,  
հասկանո՞ւմ ես, սիրում եմ քեզ, իզուր, շատ իզուր  
վոնդեցին քեզ:

— Քեզ ել կվոնդեն, — ասում ե Անիչկան, նախ-  
կին մեքենագրուհին:

— Ո, այո, այո, յես հասկանում եմ, ինձ ել կվոնդեն,  
յես այդ լավ գիտեմ, յես այդ լավ գիտեմ... Ամեն ինչ  
սպասելի լե...

Դու գրկում ես նախկին մեքենագրուհի Անիչկա-  
նին, գլուխդ թաղում նրա գրկի մհջ, և քո աչքերից  
արցունքի կաթիներ են թափվում, ու դու լալիս ես:

— Յես քեզ սիրում եմ, Անիչկա, Հեղուց...

Դու բարձրացնում ես գլուխդ, նորից նայում կե-  
նինի նկարին, և քեզ թվում ե, թե նա ասում ե քեզ.

— Վողորմելի մարդ ես դու, հասկանո՞ւմ ես,  
վողորմելի մարդ:

## ԿՅԱՆՔԻ ՅԵՐԳԸ

Այսոր րոլորն են յերգում, ու ամեն տեղ լսվում է կյանքի յերգը:

Թե զյուղերում ու գյուղերի լայնածավալ արտերում, վորտեղ թեթև հովից որորվում են հասկերը, թե քաղաքներում և քաղաքների լայն ու յերկար փողոցներում,—ամեն տեղ, ուր վոր հասնում է արեի լույսն ու ճառագայթը, ուր ապրում է մարդկային մի շունչ, այնտեղ յերգում են, այնտեղ լսվում է նոր կյանքի յերգը. .

Ահա, ականջ դրեք և դուք կլսեք, թե ինչ անուշ, ինչ քաղցր են յերգում նույնիսկ յերկաթե անիմսերն ու մեքենաները...

Շարժվում են փոկերն ու շարժվող փոկերն արդ պտտեցնում են անիմսեր, վորոնք յերգում են և քաղցըր և անուշ, ու նրանց ձայնը ինչքան դիւ, ինչքան հուժկու յե հնչում...

Յերկաթե մեքենաների առաջ կանգնած է յերկաթե մի յերիտասարդ, շարժվում են նրա ձեռքերը, նա աշխատում է անխոնջ, ժապտում ու շարժվող փոկերի և ստավող անիմսերի արանքով նայում քիչ հեռու, նույնպես մեքենայի առաջ կանգնած, աղջկան՝ ֆալղամակուն...

Կապույտ բլուզավոր ու սև աչքերով այդ աղջիկը յերիտասարդ և ու գեղեցիկ և աչքերում ունի կյանքի գարունը։ Այդ աղջկանն և, վոր սիրում և յերկաթե մեքենայի առաջ կանգնած յերկաթե յերիտասարդը՝ իվանովը...

Իվանովն ել և ջահել ու սիրուն։

Դայդամակին գործարանի հոգին եւ

Դայդամակին կյանքի գարունն ու վարդն եւ

Դայդամակին պտտվող անիմսերի յերգն եւ, կլանքի յերգը։

Դայդամակին մազութոտ ձեռքեր ու գեղեցիկ աչքեր ունի, և այդ աչքերում վառվում ե մի անշեշկրակ։

Դայդամակին առողջ մարմին ունի, և այդ մարմնի բոլոր մասերով հոսում ե արյունը, արյունը վառ ու ար։

Դայդամակին բարձր, հուզված ու մըրկածուփ կուրծք ունի, վորի տակ բարախում ե սիրտը, վորպիս դինամո-մաշին...

Շարժվում են փոկերը, պտտվում անիմսերը, և այդ շարժվող փոկերի արանքով Դայդամակին նայում ե յերկաթե մեքենայի առաջ կանգնած յերկաթե մարդուն, վորին սիրում ե ինքն ու ժպտում։

Շարժվող փոկերն ու պտտվող անիմսերը, — անիմսերը մեծ ու փոքր, կամաց, գաղտնի ու քաղցր շնչում են իվանովի ականջին։

— Քեզ սիրում ե Դայդամակին։

Իվանովը ժպտում ե, իվանովը նայում ե Դայդամակուն։

Նույնպիս կամաց, նույնպիս գաղտնի, նույնպիս

քաղցր շշնջում են շտրժվող փոկերն ու պտտվող անիմսերը Գալդամակու ականջին.

— Թեղ սիրում ե իվանովը:

Գալդամակին ժպտում ե, Գալդամակին նայում ե իվանովին, և նրանց հայացքները շարժվող փոկերի ու պտտվող անիմսերի արանքով հանդիպում ու գրրկում են իրար...

Գալդամակին ու իվանովը նայում են իրար, ժպտում, ժպտում են և նրանց կրծքերին փայլող մազութոտ կիՄ-երը, և իրենք ել մասնակցում են անիվների յերգին...

Այսոր բոլորն են յերգում, ու ամեն տեղ լսվում է կյանքի յերգը:

Թե գլուղերում ու գյուղերի լախածավալ արտերում, վորտեղ թեթև հովից որորվում են հասկերը, թե քաղաքներում ու քաղաքների գործարաններում, վորտեղ շարժվում են փոկերը, պտտվում անիմսերը, վորտեղ յերկաթե իվանովն ու գեղեցիկ Գալդամակին սիրում են իրար—ամեն տեղ, ամեն տեղ լսվում է կլանքի շառաչն ու խինղը—նրա յերգը...

## ՅԵՎ ԻՆՉՈ՞Ւ ՅԵՄ ՔԵԶ ՅԵՐԳՈՒՄ

Թ. Յիկոյին

Դու գիտե՞ս, վոր այսոր իմ խնդության որն եւ

Դու գիտե՞ս, վոր ել չես հուզում ինձ:

Վորպես գարնան մի հով զեփլուռ, թափանցել  
ելիր սրտիս ներսը, կամքիս ներսը, և չես խնդում ելի  
քո անխինդ խնդությանը:

Յես խոսել եմ, յերբ այդ կամեցել ես դու:

Յես խնդացել եմ, յես ժամացել եմ, յերբ պահան-  
ջել ես դու:

Իսկ հիմմ... .

Իսկ այսո՞ր...

Յեվ ինչո՞ւ յեմ քեզ յերգում...

---

Գարնանային գիշերներն անքուն եմ անցկաց-  
ըել...

Գարնանային հեքիաթներ եմ լսել քո մասին...

Յերազել եմ ու կարոտել քեզ, հետո դառել գե-  
րիդ...

Զըսւցել եմ աստղերի հետ, լուսնի հետ, իսկ դու,  
մեղմիկ, վորպես գարնան մի հով զեփլուռ, թափան-

Յել ես սրտիս ներսը, կամքիս ներսը, և յես խնդացել  
եմ քո անխինդ խնդությանը...

ՅԵՐԲ ես խնդացել ու ժպտացել դու...

ՅԵՐԲ ես նայել հուրհրան իմ արեին...

ՅԵՐԲ են նոր որերը քեզ հուղել...

Իսկ այսիր...

Իսկ հիմա...

ՅԵՎ ինչու յեմ քեզ յերգում...

Դու գիտես, վոր այսոր իմ խնդության որն ե...

Դու գիտես, վոր ել չես հուղում ինձ...

Գիտես, վոր քո գերին չեմ...

Այսոր քո անխինդ խնդությանը չեմ խնդում...

Իմ յերգած յերգը քո յերգը չե...

Այսոր ինձ նորն ե հուղում. յերկաթե մի յեր-  
կաթ աղջիկ, վոր խնդում ե, և ժպտում ե ևհուղում ե,  
և սիրում ե ինձ...

Այսոր յես յերկաթե մի յերկաթ աղջիկ եմ սի-  
րում և խնդում եմ, և ժպտում եմ, և հուղում եմ նրան:

Իսկ այսիր...

Իսկ հիմա...

ՅԵՎ ինչու յեմ քեզ յերգում...

## Հ Ի Ն Յ Ե Ր Գ Ը

Դու դարձյալ հին յերգն ես կը կնում ու կարծում  
ես, թե նույն ե, և կարծում ես, թե նույն ե, ու ասում  
ես, թե աշխարհն անփոփոխ ե:

Դու դարձյալ հին խոսքն ես կը կնում.

— Գնացիր, բայց շուտով յետ կդաս:

Դու դարձյալ, միշտ նույն որերն ես հիշում, յերբ  
սիրում ելինք իրար, ու կարծում ես, թե այդ որերից  
ու սիրից բացի՝ ուրիշ որեր ու սեր չկա:

Յերինքում լուսնյակ ե փայլել, իսկ ներքենում  
նստել ենք ծառերի տակ, և մեր ծեր պապերն ու տա-  
տերը պատմել են մեզ հեքիաթներ, հեքիաթներ՝ հըս-  
կաների մասին...

Դաշտերում գարունն ե բացվել, արտերում հաս-  
կերն են հասել ու հուզել ես սիրտս, և սիրել եմ յես  
քեզ, ու սիրել ենք մենք իրար:

Յերբ նորից գարունն ե բացվել, դրկել եմ յես  
քեզ ու ասել.

— Կնամք քաղաք, ուսում կառնեմ, հետո կդամ  
գյուղ, ու արտերում կերգի տրակտորը, և մենք կտ-  
մուսնանանք:

Դու ասել ես, վոր մեր արտերը գութանը ողի-  
տի վարի, մեր հասկերը մանգաղը հնձի, և վոր մեր  
հողե խըճիթներում նավթի ճրագը պիտի վառվի:

Ու գըկել ես ինձ, ու փարվել ես ինձ և ասել.

— Դու գյուղումը պիտի մնաս:

Յես չեմ լսել քեզ ու անցել եմ քաղաք, իսկ դու կանգնել ես ճամպի յեզրին և հայտնել.

— Կդնաս քաղաք, կափսոսաս և յետ կդառնաս:

Յեզ հիմա այն հին յերգն ես յերգում ու կարծում ես, թե նույն ե, ու կարծում ես՝ նույն ե, և ասում ես, վոր աշխարհն անփոփոխ եւ

Ասում են, վոր յերբ արել յելում ե սարից, դուրս ես գալիս հողե խրճիթից ու կանգնում ճամպի յեզրին և սպասում, թե գուցի վերադառնամ յես ու սիրեմ քո գութանն ու մանգաղը, իսկ յերբ արել մայր ե մտնում, տխուր անցնում ես խրճիթ ու դարձյալ կրկնում հին խոսքը.

— Զեկավ, բայց շուտով յետ կգա:

Յես կգամ, կգամ նորից գյուղ, նորից կփարվեմ արտերին, լեռներին, դաշտերին, նորից լուսնյակը կփայլի յերկնքում, ու նորից կնստենք ծառերի տակ, և այն ժամանակ յերկաթը, ջահել յերկաթը քեզ շատ հեքիաթ կպատմի...

— Արտերը տրակտորը պիտի վարի, — կասի նա:

— Հասկերը մեքենան պիտի հնձի, — կասի նա:

— Հողե խրճիթները քարե կդառնան, — կերպի նա:

— Նավթե ճրագները կմեռնեն, և կվառվի ելեկտրական ճրագը, — կպատմի նա:

Յեզ յեթե լսես ու սիրես նրան, կսիրեմ յես քեզ, կփարվեմ արտերին, դաշտերին, լեռներին և քեզ, իսկ յեթե նորից ասես, վոր արտերը գութանը պիտի վարի, հասկերը մանգաղը հնձի և հողե խրճիթներում

նավթի ճրագը պիտի վառվի, — այն ժամանակ, յերբ  
արել գուրս յենի լեռներից, դուրս կզաս խրճիթից  
ու կկանգնես ճամպի յեղրին և կսպասես նըան, վորը  
պիտի դա քեզ, քո գութանը, քո գերանդին ու հողե  
խրճիթներում վառվող նավթի ճրագը սիրելու, և այդ  
մեկը չի դա... Յերբեք, յերբեք...

Արել կթագնվի լեռների յետեռում, կանցնես խըր-  
ճիթ, կվառես նավթի ճրագը և կըկին հին խոսքերը  
կասես.

— Գնաց, ըայց կվերադառնա:

Իսկ յես՝ կսիրեմ ուրիշին, կփարվենք իրար ու  
յերկաթի հետ սիացած արտերը կվարենք, վոսկե հաս-  
կերը կհնձենք և նորերին, դաշտերին, անտառներին  
ու լեռներին՝ յերկաթե հեքիաթներ կպատճենք...

Բայց ինչու, ինչու հիմա ելի այն հին յերգն ես  
կրկնում ու կարծում ես, թե նույն ե, ու կարծում ես  
թե նույն ե, և ասում ես, թե աշխարհն անփոփոխ ե:

Քեզ, իմ սիրած աղջիկ, ու քո հին հոգուն յեր-  
կաթե յերգեր կերգի իմ տրակտորը, ու դու, իմ սի-  
րած աղջիկ, նոր յերգեր կերգես, կասես, վոր փո-  
փոխվում եմ յես, ու փոփոխվում ե աշխարհը:

## ՄԵՆՔ ԿՀԱՆԴԻԹԵՆՔ

Յես հիմա ելի հիշում եմ նրան ու նրա անփայլ  
աչքերը, յես հիմա դարձյալ սիրում եմ նրա սև մազե-  
րով ծածկը վագած գլուխը, և թվում ե թե նա կենդանի  
յե այնպես, ինչպես կենդանի յեմ յես:

\* \* \*

Ծովը խաղաղ եր ու լայնածավալ։ Մեր նավը,  
պատռելով նրա կուրծքը, վազում եր դեպի առաջ...

Նավում կային նավաստիներ, նավապետն ու  
մենք՝ ճամպորդներս։

Միայն նա, այն սեսներ նավաստին վրավեց իմ  
ուշադրությունը, վորն անընդհատ աշխատում եր, ու  
թվում եր, թե չի հոգնում. .

Նավը շարունակ առաջ եր վազում, իսկ նա մերթ  
դեկն եր վարում, մերթ անհետանում և քիչ անց՝  
դարձյալ լերեռում ճամպորդների մեջ...

Արել մայր եր մտնում, յերբ նրանց հայտնեցին,  
վոր ճաշելու ժամանակն ե...

Նավաստիները վազեցին դեպի ներքեմի կոյուտ-  
ճաշարանը...

Յես հետեւեցի նրանց...

Նրանց տվին սև, հնացած հաց և միս...

Յերիտասարդ նավաստին նալեց մսին, հոտ ա-

- սավ նրանից ու շպրտեց այն և վազեց դեպի վերե...  
— Մենք շուն չենք, — լսվեց նրա ձայնը:  
Բոլորը դեպի վերև վազեցին: Հուզվեց նավը,  
— Այդ թնջ ձայն ե, — լսվեց նավապետի՝ ծանր  
դեմքով մի մարդու՝ ձայնը:  
— Մեզ շան տեղ միք զնի, — ասաց յերիտասարդ  
նավաստին, — շան պես աշխատեցնում եք որ ու գիշեր,  
հետո մի կտոր հին և սև հաց ու մի կտոր ել հոտած  
միս տալիս:
- Դուք շան պես կաշխատեք և կլափեք այն,  
ինչ լափում են շները, — պատասխանեց նավապետը,  
— Վոչ:  
— Այո:  
Ու յերիտասարդ նավաստու աչքերի անփայլ  
հուրը վառվեց...  
— Մենք մարդ ենք:  
— Դուք շուն եք — գոռաց նավապետը:  
Նա, ալդ յերիտասարդ նավաստին, վերցրեց դա-  
նակն ու վազեց դեպի նավապետը. սակայն բոնեցին  
նրան ու կապուտեցին նրա ձեռքերը...  
Նավապետը մոտեցավ նրան, վոտքով միքանի  
հարվածներ տվեց:  
— Նավապետ, նա մարդ ե, — մոտենալով նրան,  
ձայնեցի իսու:  
Նա նայեց ինձ ու գոռաց.  
— Դուք, պարոն, մի հասարակ ճամպորդ եք և  
վոչ մի իրավունք չունեք իմ գործերին խառնվելու:  
Ես անծանոթ ու հասարակ մի ճամպորդ ելի,  
բայց և այնպես սիրեցի այդ յերիտասարդ նավաս-  
տուն և այնպես ատեցի նավապետին:

Նա, յերիտասարդ նավաստին նալեց ինձ, զգայ, վոր յիս ել եմ իր պես մտածում, ու մենք անթարթ աչքերով դիտեցինք իրար...

— Նետել ծովը խռովարարին, — հանկարծ լովեց նավապետի հրամանը:

Նավաստիները գրկեցին յերիտասարդ նավաստուն ու բարձրացրին դեպի վեր...

— Մենք կհանդիպենք, նավապետ, և այն ժամանակ վայ ձեզ:

Փաթորկվեց լայնածավալ ու խաղաղ ծովը, և նաթաղվեց նրա գրկում...

— Հա, հա, հա, — ծիծաղեց նավապետը, — մենք կհանդիպենք վորտեղ, ծովի հատակում...

Ծիծաղեցին և ճամպորդներից շատերը Յես անթարթ աչքերով դիտում ելի նավապետին: Նա նալեց ծովին ու ժպտալով ավելացրեց.

— Շուտով, շուտով կհանդիպենք իրար:

Յես անթարթ աչքերով դիտում ելի նրան: Նանկատեց հայացքս ու մոտեցավ ինձ:

— Հը, չինի՞ թե մենք ել կհանդիպենք:

— Այո, մենք կհանդիպենք, — պատասխանեցի յիս ու անհետացա:

\* \* \*

Ու որերն անցան և ժպտաց մեր արել, և սկսեցինք մահ տալ նրանց, վորոնք մահ ելին տալիս մեզ...

Դաշտը լայն եր, ու ալդ լայն դաշտում կանգնած ելին տասը հոգի, վորոնց պիտի գնդակահարելինք:

- Կրակել, — լսվեց կարմիր հրամանատարի ձայնը:  
 — Սպասեք, — հանկարծ գոռացի յիս:  
 Վաղեցի դեպի հանցավորներն ու հայացքս հա-  
 սեցի նրանցից մեկի վրա:  
 — Նավազետ, — շշնջացի յիս:  
 Նո լսեց ձայնս, նայեց ինձ ու ցնցվեց...  
 — Ո՞վ եք դուք, — հարցրեց նա:  
 — Ձեր նավի անծանոթ ու հասարակ ճամպորդը:  
 — Այս, — ճանաչեց ինձ, — և մենք հանդիպեցինք  
 իրար, — ավելացրեց նա:  
 — Այո, — պատասխանեցի յիս:  
 — Ել չենք հանդիպի. — շարունակեց:  
 — Կրակել, — կրկնվեց հրահանգը, և լսվեց գնդակ-  
 ների ձայնը...

\* \* \*

Յես հիմա յել հիշում են նրան ու նրա անփայլ  
 աչքերը, յես հիմա դարձյալ սիրում եմ նրա սև մա-  
 զերով ծածկված զլուխը, և թվում ե, թե նա կենդանի  
 յե այնպես, ինչպես կենդանի յեմ յիս:

## ԴԵՐ ՎՈՐՔԱՌՆ ԳԱՐՈՒՆՆԵՐ ԿԲՍՑՎԵՆ...

Յերեկ անխինդ, իսկ ՞ալսոր ինդացող, փոքրիկ քույրիկ իմ, ի՞նչ անուշ, ի՞նչ մեղմ շնչում ես ականջիս.

— Մեր յերկրում գարուններ են բացվում, ու դեռ վորքան գարուններ ել կրացվեն:

Ու յես լսում եմ, լսում քո հմայիչ ձայնը, և մեր յերկրում գարունն ե բացվում:

Իմ փոքրիկ, սիրելի քույրիկ, յես լսում եմ քո ձայնը, յես նայում եմ քեզ ու քո անցյալն եմ հիշում, մանկությունդ աշնանային...

Թո հայրը կռվի դաշտում ընկավ, քո մայրը սովից մահացավ, ու դու մնացիր վորբ, ինչպես դեղին մի աշնան տերեւ, և փչեց քամին ու որորեց նա քեզ...

Դու այն ժամանակ շատ, շատ փոքրիկ եյիր, որերը չելին ժպտում քեզ ու վոչ ել դու որերին, և անցնում, թափվում եյին քո կյանքի որերը վորպես աշնանային դեղին, դալկացած տերեններ...

Բայց արել ժպտաց, ու մեր գարունը յեկավ, և ինդացիր դու...

Ու նետվեցիր դու գոռ պայքարի դիրկը, և աշխատանքն ու պայքարը յեղան քո ծնողները ..

Վորտեղ ժողով կար, այնտեղ կայիր դու. վորտեղ

խնդում ելին, քո խնդութլունն ել կար, ու ամենքը սիրում եյին քեզ և ամենքին ել դու:

Արեի ու կլանքի շողերի մեջ, փոքրիկ քույրիկ իմ, կոմիերիտ այն տղան ժպտաց քեզ և նա հուզեց քեզ, ու հուզեցիր դու նրան...

— Յես սիրում եմ քեզ, — ասաց նա:

— Յեվ յես ել քեզ, — պատասխանեցիր դու:

Յեվ արեն արենց և աճեց մեր լերկիրն, իսկ կոմյերիտ այն տղան, վոր հուզեց քո սիրտը, փոքրիկ քույրիկ իմ, զրկեց ու համբուրեց քեզ...

— Մեր յերկրում դարուններ են բացվում, — ասաց նա:

— Դեռ վորքան գարուններ ել կբացվեն, — պատասխանեցիր դու:

Յեվ հիմա դուք ապրում եք, դուք սիրում եք իրար ու աճում եք և խնդում եք ու պալքարում, փոքրիկ քույրիկ իմ և նրան սիրող կոմիերիտ տղա...

Խնդացող, փոքրիկ քույրիկ իմ, գարնան գարուն, յես ել քեզ պես տեսնում եմ նոր կլանքի աճումը և խնդում եմ, մասնակցում եմ ու աճում եմ:

Յերեկ անխինդ, իսկ այսոր խնդացող փոքրիկ քույրիկ իմ, ինչ անուշ, ինչ մեղմ շշնջում ես ականջիս.

— Մեր յերկրում դեռ վորքան գարուններ կը- բացվեն:

## ՍՊԻՏԱԿ ԱՄՊԵՐԸ

Հեքիաթներ, անթիվ ու անհամար հեքիաթներ  
եմ լսել քո մասին։

Լուսինը փայլել է յերկնքում, մեղմ հողի ան-  
տառով անցել շարժել տերեները, և նրանք հեքիաթ-  
ներ, անթիվ ու անհամար հեքիաթներ են պատմել քո  
մասին...»

Ամենքը քո գովքն են արել ու պատմել հմայիչ  
գեղեցկությանդ մասին։

Ու լսել եմ յես անթիվ ու անհամար հեքիաթներ  
քո դյութական աչքերի, բարձր հասակիդ և վոսկե  
մաղերիդ մասին ..

Յերբ առաջին անգամ յես տեսա քեզ և նայեցի  
կապուլտ ու ծով աչքերիդ, այնտեղ թագնված մի յիշ-  
շանկություն տեսա...»

Յես անթարթ հայացքով նայեցի քո դյութական  
աչքերին, սուղկեցի նրանց անհունի մեջ, և նրանք ինձ  
հեքիաթներ, անթիվ ու անհամար հեքիաթներ պատ-  
մեցին քո մասին...»

Քո աչքերի մեջ յես գարուն տեսա, արել պայ-  
ծառ, յերկինքը կապուլտ, ջրերը քչքչան...»

Քո հայացքի մեջ գարնան մեղմ հով կար ու  
մի ճերմակ կերպարանք ,  
մի թրքուհի , կին ...

---

ԴԼՈՒԽ Գ.

I

Յեվ մինչ Մուշտն սւշքի կդար՝  
կինն ահա շաբժվեց առաջ,  
այնպես յերեր, այնպես տկար,  
այնպես վշտոտ, լալահառաչ:

Հանկարծ ընկավ նաև հատակին,  
— Աղա՛, աղա՛, — հեկեկաց նաև,  
լոի՛ր խեղճիս աղաչանքին,  
ու իմ ցավին մի ճար արտ:

Են որից՝ ինչ իմ Ասագին  
սպանեցին գաշնակները, —  
Ճինեց վրես յերկինք-դետին,  
խոռվ կացավ գլխիս տերը:

Աղա-Մահմուդն առավ-տարավ  
մեր զույգ կովը, խլեց այգին . . .  
Հետո ուզեց ինձ տիրանալ . . .  
Յեվ նաև խեղդվեց հեկեկանքից :

Ետ կարկամեց . . . Հետո կրկին  
ճշաց բարձր, ցավագալար,

ու պարզվելով դեպի յերկինք  
աղաղակեց, —այլա՛հ, այլա՛հ:

Թե ձեր դինն աղքատին և,  
թե վոր տեր եք դուք աղքատին, —  
աղա, —վոտքիդ հողը լինեմ, —  
և աժոթից ինձ աղատի:

Վաշտապետը, վորպես արձան,  
քարացել եր կարծես տեղում . . .  
իսկ կինն ընկել եր հերարձակ  
և արցունք եր թափում աղու:

Ու կախարդվեց ասես հանկարծ  
Մուշոյի սիրտն ամպոտ ու մառ.  
ա՛խ, այդ կինը գետնին ընկած  
դեղեցիկ եր, ինչպես ամառ:

Ինչպես թեժ տոթն Արարտիկ,  
բերքուն ամառն այգեստանի,  
կամ ուռացումն հասուն արտի,  
նա չքնաղ եր ու գեղանի:

Յեվ հայացքն իր տառապանքի  
մութ ստվերի ծածանումով  
և կուրծքը, կուրծքը սնհանդիսա  
այնպես հուզված, այնպես խսով:

Յեվ ժաղե՛րը՝ թափված գետնին,  
վի՛զը, և ուսերը մարմաք, —  
փոթորկեցին վաշտապետի  
սիրուը մոսայլ, վորպես քարտյը:

— պէտք կաց քույրիկ , — ասաց գունատ ,  
ու նրա ձայնը կտրվեց .  
— վե՛ր կաց և քո տունը դնա ,  
վաղը մյոււլքդ քեզ կտրվի :

Կինը սրբեց աչքերը խած ,  
տսես վշտից դարձած մոխիր .  
նորից հուրը մոխիրից խաղաց ,  
նորից վառվից հույսի շողից :

## II

Մինչ կինը յետ դարձավ , դեպի դուռը ուղղվեց —  
նոր սթափվեց Մաշոն իր կախարդանքից .  
նրա հայացքն տսես հանկարծ մժվեց , շաղվեց —  
տսես թե վոզողվեց ալիքով կրքի :

Գաղաղած հոյրերը , վայրիսվերու , խոխիվ ,  
բոնեցին ուզեղում արագ շուրջապարի —  
ուզեց նետվի խոկոյն , հասնի նրան , բոնի ,  
դրկի , քաշի ախտան ու բոնաբարի :

Բայց նու դնաց . . . ի՞նքը . ի՞նչ պիտի անի ինքը . . .  
Աղի . քամի . չկա' . ողին սպասվեց .  
այս ուշ , կես զիշերին ուր թափի նա կիրքը ,  
վորն այնողես մութ ուժով բանկվեց , վառվեց :

Ի՞նչ , ի՞նչ անի ինքը . . . Աղի' , ողի' , ողի' .  
ո' , զես ուշ չե , զնա' , հասիր ու բանիր . . .

Նու պոկ յեկավ տեղից , թառանչեց կատաղի  
ու դուքս նետեց իրան խրճիթի դանից :

Նա գայլի վարժ աչքով խավարը խուզարկեց , —  
ահա ճերմակ ստվերն անցնում ե արագ .  
ահա կանզնեց , մտավ անտես մի դռնակից  
ու կորավ աչքերից , ինչպես մի միրաժ . . .

Ահա այդ խրճիթը , ահա և դռնակը . . .  
Նա հիմա փակված ե յերկաթի նիզով ,  
այս դռնակի յետե , — այս ցած հարկի տակը  
ապրում ե այն կինը , իրա մանկիկով :

Այս դռնակի յետե . . . մի քանի քայլ այն կողմ , —  
ինչքան մոտ ե լինում մեղ բախտը յերբեմն ,  
և վորքան ել հեռու . . .  
Թեկուզ մի դռնակով ,  
վորը սակայն անցնել չես կարող յերբեք :

Յերբեք . . .  
Ինչու համար ,  
ինչ մի դժվար բան ե ,  
տիրանալ մի գիշեր այրի թրքուհու . . .  
Թե Մուշոն չի՞ ինքը . — դյուզի տիրականը ,  
վոր բորբոքեց գյուղում հրազեն ու հուր :

Եղ չե՛ , եղ չե . . .  
Ամա՝ ի՞նչ կասի Արտեմը .  
չե՞ նա բայլշեիկ ե , վո՛չ թե ավազակ ,  
դաշնակ բանդիտ ,  
վորը ինչ դռու տեսնի դեմք՝  
ջարդի ու փշրտի , ներս մտնի աղատ :

Հըմ՝ մազալու բան ե —  
Մուշոն բայլչեիկ ե ,  
Հետո՞ .  
Բայլչեիկը զոմե՞լ ե կոստած . . .  
Թքա՛ծ .  
Եղ սիրունը շուն-թուրքի կնիկ ե . . .  
Ել ի՞նչ .  
Ժիտք անելու ժամանա՞կ զտար :

Մինչդեռ , յերբեմն , յերբեմն  
այն անցած որերում ,  
ի՞նչ չեք անում ամեն  
մի քոսոտ զարիթ ,  
այս լեռներից այն կողմ ,  
այն մութ յերկրում հետո ,  
արհուտ հայրենիքում մահի , սարսափի :

Իրենց գյուղում քանի՛ աղջիկներ լիկեցին —  
թուրքի զինվորները . . .  
Յեզ այն մի զիշեր . . .  
Իր սրտի սիրածը , — Կողը բաթը զեղեցիկ . . .  
Նրա վերջին ձիչը . . .  
Ա՛-ո՛ . . . Զիշեր . . .

Ինչո՞ւ հիշեց նա այդ  
այս տարածամ պահին . . .  
Արդ սղի՛ն ե վասել ուղեղում հրդեհ ,  
ողին ե բորբոքում տեսիլներն այն մահի  
ու կիզաւմ ուղեղը չչով յերկաթե :

ՄԵԿՆ իր ուղեղում քննդում ե անդուչ,  
քննդում ե անքուն իր քունքերի տակ ,  
փորում ե իր կյանքը , ժամանակը քանդում  
ու դուրս հանում հազար գժնի հիշատակ :

Քինդում ե ամբողջ իր կյանքն ու անցյալը ,  
ուղեղում հանում ե թանձր մի փոշի ...  
ի՞նչ աղոտ ե հնչում նոր որերի ձայնը :  
... Մուշոն զերի ընկալվ անցյալի հուշին :

Ուղեղը ծածկված անթափանց մշուշով ,  
զեմ տալով մտքերը սառնամանիքին ,  
որոր-մոլոր քայլով լուս դնում ե Մուշոն ,  
շմած իրեն վարող , քըող ալիքից :

---

ԳԼՈՒԽ Դ.

I

Ես արթնցավ, յերբ տագնապը  
գյոււղն եր գալարում,  
յերբ հորիզոնը պատել եր  
բոցեղեն արյուն—  
ու շաչում եր ուազմի կանչը  
լեռների հեռվում։

Ես արթնցավ, յերբ վոր վայրի  
բանգաներն ահեղ  
դրահ տվին կես-գեշերին,  
վորալես մի հեղեղ,  
յերբ ոկավից կոտորածը  
կույր ու արնահեղ...

...Քսանչորս ժամ նա պահ մտավ  
լքված ամբարում,  
տեսավ վայրի մոլեղնություն  
ու բոնաբարում,  
լսեց կանչեր որհառական  
ու տեսավ արյուն։

Կես գիշերին նա դուքս յեկավ  
իր թագստոցից  
յերբ գլուխն իր մոխրացել եր  
անհուն կսկծից,  
յերբ Փշում եր իր կրծքի տակ  
վոխը ոհ ոձի:

Աւ նա վախավ լեռները ժեռ  
վորպես մի հովադ,—  
հովադի պես, վոր տեսել ե  
արնամույն որհաս—  
ու մոլեգնած վոգորում և  
մահվան դեմ ահու:

Իսկ մոթ սրառում անթավ դիյեր  
սիրելիների,  
ու դիյերին նստած ոհ բուն  
վրեժի, քենի  
վայում եր սուր, վողբում անդուլ  
իր ոհ մաքերին:

Նա միացավ խմբերի հետ  
ինչպես ջանքեղար,  
կովի քշված զինվորներին  
հաղար ու հաղար,  
ու արնոտեց քանի անգամ  
իր թուրը սուրսայր:

Այսպես, յերկու ձիգ տարիներ  
ուստ բանակի հետ,

իովեց անդուլ ու խելահեղ—  
ու դիղեց դիյեր,  
ու ապստամբ բանակի հետ  
նահանջեց նա յետ :

Ետ չիմացավ՝ ի՞նչ կատարվեց  
հետո Հյուսիսում,  
ինչու եյին պատերազմը  
անվանում իզուր,  
ի՞նչ վստայիններ եյին Հյուսվում  
այստեղ՝ Թիֆլիսում :

Եղակս՝ ծովի նման քաշվեց  
սալղաթը «սոխի»,  
նու սպառում եր հայ զորքով  
զալ նրանց հախից՝  
հանելու իր սե վրեժը  
թուրքից—վոսոխից :

Ետ չըջում եր սովառազեն,  
մայզղերը կողքին,  
փողոցներով գորշ ու վոչոս  
բերղաքաղաքի՝  
հետք զցած իրեն հանձնած  
հեծելազորքին :

Ի՞նչ իմանար՝ թե տիսըր վո՞նց  
և ինչու հանկարծ  
հայ ազդի եղ իռիթ զորքը  
հոգնած ու խարված՝

Դցեց դենքն ու թողած բերդը՝  
վիախտով տագնաւպած :

Եսողես թողին չատ քաղաքներ  
ու գյուղեր անթիվ .  
Թողին Ղարսն ել : Յեկան հասան  
Սարդարաբադին .—  
Թուր իսրելիր Մուշոյի սիրտն—  
արյուն չեր կաթի :

Սարդարաբադ . . . Եստեղ նրանք  
կանգնեցին հանկարծ —  
և մի մթին կատաղությամբ  
թշնամուն ընկան .  
Եստեղ Մուշոն վերք ստացավ ,  
ընկավ արնաքամ :

Քաղցի բերնում դանդաղ ծամվող  
շոգ այն քաղաքում  
յերկար պառկեց նա մառմուայլ  
սըտում վիճ , անկում ,  
ու կորվեց իր աչքերից  
թե հանդիսա , թե քուն . . .

## II

Նրան թվում եր՝ ինչ պատահեց՝  
մի սե ամոթ եր ժանու . մահացու .  
վոնց վոր պսակը քո կատարիեր  
և պսակի յել հենց դիշերին

ուրիշի ծոցը քո հարսնացուն  
քնացնեյիր դու...

Յեվ պարշելի

ու մորմոքող այդ տեսիլներից,  
յերկար նվազ նա ու զառանցեց  
մինչև յելավ նա վոտքի նորից  
կունատ, տժգույն ու լուսնոտ կարծեն:

Դրսում նոր կարգ կար, նոր Հայաստան,  
ու թագավորն եր միայն պակաս.  
նա ծիծաղեց գառն. գնաց շառաբ  
աֆիցերներն են եստեղ ընկած:  
Նրանք ծխում ու ծիծաղում են,  
նրանք խոսում են խորթ, «ոսեվար»  
ու չեն նայում իսկ նրա վրա:  
Նրա աչքերը մութ շաղվում են,  
ու նա առնում թուղթ՝ գնում և գունդ:  
Եստեղ անցնում են որեր նորեն  
ու նա մհում և մոայլ, անքուն...

Ամեն, ամենուր խոսում եյին  
վոր Հայրենիքը վաճառեցին,  
ծախեցին Ղարսը և Կովկասը՝  
լրացրեց քաղցը ինչ ոլակաս եր...  
Յերկիրն ընկավ ես տխուր Հային.  
ու նա լսում եր շատ անուններ,  
ինչ վոր Սեյմ, կամ թե Զիսենկելի...  
Բայց նա լսեց և Հայ աղղանուն,  
վորն իրա սիրտը մաղձով կիզեց:  
Ո՞վ կհասկանար նրա անհուն

կատարությունը, վոր հայ մի չուն,  
վորը ուղել ե վոսկի դիզել՝  
իր հայրենիքն ե ծախել թուրքին...  
Տեսնես թե ո՞ւր ե հիմա մաշում  
եղ սի հրեշը առած վոսկին:

— Հե՛-Հե՛... Մուշոն դեռ ի՞նչ անմեղ է :  
Հենց իմանում ե թե նա զող ե  
և կամ ժուլիկ ե մի հասարակ  
վորը ծլիվում ե ուրիշ քաղաք...  
Նա մեծ դաշնակ ե, ևսոս մինիստր,  
գիտե ճառել նա ու լալ նույնիսկ՝  
բախտի վրա իր հայրենիքի :  
Այն մեծ սե շենքն ե տունը նրա  
ուր չասավոյ կա կանգնած դուն . . .  
... Նրանով անցավ մի սառը ցնցում  
— Մուշո՛, մաքովդ ի՞նչ ե անցնում . . .  
— Թե լիներ մեկը՝ խիե՞ր նրան . . .  
իր դեմ նստել եր լղար սպան,  
վորը դիտում եր իրա դեմքը՝  
«Ի՞նչ ե նայում եղ քոսոտ սփան»  
խորհեց Մուշոն քիչ ջղագրգիռ :  
Ու նա լսեց . . .

— Դո՛ւ . . .

Դու այդ կանե՞ս . . .

— Յե՞ս . . . Այսինքա դե՛ . . . ինչի՞ հենց յիս . . .  
Ու հետո . . . թե վոր դավաճան ե ,  
ինչի՞ չանեմ վոր :

վարձքի բան ե . . .

Սպան խիեց պիհոդ նրա ուսին . . .

— Դու քաջ աղա յիս , անվեհեր ես . . .  
Զգուչ վոր վոչ վոք մեղ չլսի . . .  
Թե զու եղ զործը դլուխ բերես ,  
ո՞յ կլինես մեծ աղդի հերոս . . .

— Զե , զու դլուխս զուր մի յեղի ,  
լովն ե , ասես թե ինձ կկախի՞ն  
թե՞ հենց զնդակը կտան սրտիս :  
Ապան թռավ վեր . . .

— անխելք , անխելք . . .  
Են ել՝ եղակս շուն մի մինխտոփ . . .  
Ով կիմանա թե՝ զու մի գիշեր . . .  
— Գողի պե՞ս , վոնց նա՞ . . .

Հե յանդիլիչ ես . . .

Տկոմարզ զործը եղակե՞ս կանեն :  
Լով ե մանեմ տուն , որ-ցերեկով ,  
քաշեմ մառզերը ե սպանեմ  
ու հանձնվեմ հենց իմ ձեռքով :

— Յես ել հենց եղ եմ ախր տառմ . . .  
զու ավաղակ չես , այլ մեծ սրտով  
հայրենասեր ես , վոր չի ուզում  
իր հայրենիքը . . .

— Թո՞ւզ . ե հետո—  
բոլոր մեծերը նրա կողմն են . . .

— Բաս թշնամինե՞րը քանիխան են . . .  
մինչե իսկ մեջներ կան մինխտըներ . . .

— Թքա՛ծ . զռւշման են—նախանձում են . . .

— Բա գեներա՞լը . . .

— Եա՞ յել . . .

— Բա վո՞նց . . .

Նրա կոկորդը սուր խանձվում է ,  
սիրտը խփում է պինդ անսովոր :

Իսկ դեներալը—դա ի՞նչ մարդ էր —  
զեներալ չեր դա ,—մեղք ու շաքար ,  
նրան շինեց իր աղյուտանտը ,—  
դժեց իրեն են մարդկանց շաբար ,  
վորոնց անունն եր «Գրիշկա-Միշկա» ,  
վորոնք՝ կյանքում դեռ չեյին տեսել  
պատերազմի դաշտ .

### Վորոնք միայն

նստած շտաբը ,—տաք-տաք տեղեր  
սւսագիրներ են վոսկեթելել  
և համազգետով միայն վայլել :  
Ծեր և արդեն նա ,—զեներալը ,  
ել չեր սաղում նրան կապել հրազեն  
և հրազենի տեղ հիմի նա՛ յե յել  
տվեց Մուշոյին մի մասւզեր ,  
ոկտեգ իր հետ նրան ման տծել :

### III

Մարգարի բազն եր : Մի զով դիշեր .  
եղտեղ մեծ քեֆ կար ու խրախճանք .  
են ի՞նչ ուտեստ եր , ի՞նչ հին չշեր . . .  
Մինիստրներն եյին , նրանց կանայքն  
ու թիֆլիզից ել բերած աղջկերք ,  
և սաղանդար կար և պար ու յերգ :  
Չե՛ , լավ դիշեր եր . ամառ անուշ ,  
եղպես սիրուն , բաց մատուշկաներ . . .  
(ափսոս վոր գինը թանգ եր անում  
մեկին մեկ՝ ու հան մի հինգ մանեթ) :

Ապանդարներն ասես արնում  
տրորում եյին նրա հոգին  
ու միշտ հոսում եր ֆինչամպայնը ,  
հոսում եր զետը ճառի , խոսքի ,  
լոել եր զետը՝ անքուն Զանգին .—  
ու լայնանում եր զեռ կամպանիան :  
Յեկան նորերը :  
Յեզ ահա նա' .

Մուշոն լարիեց ու զգաստացավ ,  
յերեար նայեց ու սառեց մնաց :—  
կնձոռու թուխ զեմք եր . բեխեր ցանցառ  
միրուքն այծի յեր .  
նրան թվաց ,

վոր նա վոչ լավ եր և վոչ ել վատ  
մյուսների հետ համեմատած :  
Բայց յերբ բացվում եր ըուսադեմը ,  
յերբ վոր հոսում եր գեռ «մաղեր»-ը ,  
և յերբ խոսում եր ժիր թամալան  
նրա կենացը , թափում խոսքեր  
հերոսական ու հայրենասեր՝  
կատարվեց այն , ինչ սիրտը յերկար ,  
լուռ խորովել եր չչով յերկաթ :  
Նա վեր կացավ ու մոտիկ յեկապ  
—Պարոն Մինիստր . . .

Եկեք խմենք .—  
առաջացավ նա մի ձեռքին գավ  
և մյուսումն ել պատյանագերծ  
մերկ չողջողուն մի մառւղեր :  
—Միայն մի հարց տամ . . . ձի՛շտը կառեք . . .  
Քանիսո՞վ Կարսը ամիք թուրքին . . .

—Պար-ըստն . . .

—Պարոնը քո հերն ե չո՛ւն .

—Տբա-բա՛-բա՛-բա՛-բա՛իս . . . մառւղերը :  
Ցբվող ծխի այն թանձր մուժում ,  
ընկել եր մեկը արնազալար . . .  
Կանայքը բարձր սկսեցին լալ . . .  
Իսկ գեներալը շրջեց .  
—Թինա՛լ .

Նրան յերկար-ծիդ տարան-բերին ,  
բանտից ատյանը , ատյանից բանու :  
Բոլոր թերթերը , փրփուր բերնին ,  
յերկար գեմքերը սեով կապած  
սղացին մեծ ու պայծառ հայի  
կորուսուր մեծ և համազպային :  
Կատաղությամբ մի բեռնապորված  
թափեցին մաղձը Մուշոյի վրա ,  
վոր գավաճան եր , կամ խելապար  
կամ կուրացած եր ազգի մուայլ  
պարտությունից այն աղեստաթեր ,  
կամ թշնամուց եր գուցել խարվել  
ու բայլշեիկ եր դարձել հանկարծ :

Այսպես ձգվեց այդ դատը յերկար .  
վերջում ատյանը բարեհողի՝  
հանցավորին վոչ հանեց թուլին ,  
մոչ ել զնդակը տվեց ձակտին  
և վորոշեց լոկ ցմահ նրան  
բանտարկություն տալ :

Յեվ նա մոայլ  
յերկար շրջում եր բանոի բակում

և մտածում եր վողջ աշխարհի  
կյանքի, մարդկանց շատ լավ ու վասից,  
թե իր կյանքի մեծ ճանապարհին  
ինչե՛ր կրեց նա, ինչեր տեսավ, —  
վորոնցից ա՛յժմ ել քեն ու խանդից  
մազերն աճում են ու ասղանում  
և թե ճամբռով եղ՝ նա ո՞ւր հասավ . . .

Թե ինչ տանջանք ե, խոր ու անհում  
բանափի կյանքի այս տառապանքը՝  
ուր հորիզոնը այնքան փակ ե  
և փութանցիկ ե արեն անուշ  
և մինչեւ մահը, մինչեւ մահը . . .  
Ո՛, նա լալիս եր հաճախ համըր,  
կամ ասամները սուր կրծտում,  
յերեմն սրտիցը վորապես ճայթյուն  
յելնում եր ճիշը նրա ցասման:  
Ո՛, յեթե հանկարծ նա կարենար  
յելնել, փրկվել մութ բանափից այս մաս,  
թե կարենար նա խփել նրանց  
բոլոր մինիստր այն չներին,  
փախչել աղաս են յեսների վրա . . .

Այսպիս որեր ու որեր նորից  
ու հանկարծ այդ բանան աղմկեց.  
շառաչեցին վողջ կամերները :  
Յեկան մարդիք նոր, վորոնք իրար  
կանչում եյին պարդ, —ասում «ընկեր»,  
յեկան բոնված այն կարմիրները՝  
վորոնք դրափ տիր լայն աշխարհում  
տվել եյին կյանք, տվել արյուն,

պարզել զբոշներ վառ ու սպասառք  
մինխոտրների գետ .

բայց չիմա տե՛ս .

խոսնախոխիվ ու չպթայակասդ  
բերվում եյին նրանք , բերվում ելի  
դեմքերով բորբ ու անընկճեղի :  
Բերվում . . .

Տարվում են մութ զիշերին .

Նրանք տարվում են ու մութ ձորում , —  
Համազարկներ են խնդում , Հոփ'նդ :  
. . . Նրանց են , Նրանց են կոսորում . . .  
Ու նա լալիս եր , լալիս Մուշոն ,  
կատաղությունից եր նա լալիս .  
կծում բումնցքը ամբողջ ուժով  
կամ մոնչում եր ցաւառմնալից :

---

ԳԼՈՒԽԱ ՅԵ.

Ծառ չքաշեց ու զըրնդաց  
յերկրով մի նոր ձայն,  
յերկրի բանվորն ու գյուղացին  
վոտքի բարձրացան.  
դեղի բանալ խուժեց ահա  
խաժամուճ հործանք :

Ու նա յելավ իր զարչ, դժնի  
և «ցմահ» բանաից,  
մասպ շարքերը պայքարող  
կարմիր ջոկատի,  
յերբեք թիկունք չելավ դործող  
ուղմանձակատից :

Վաշտափետ և չխմա կարմիր  
կովում անվեհեր.  
նա կովում և յերգով, խանդով,  
լուսն ու խելահեղ  
չի խնայում կանաչ կյանքը,--  
կյանքն իր ջահել :

Բայց չկխան վոչվոք, վոչվոք  
և անդամ ինքը,

դեռ չկիաեր մինչեւ այսուր  
սրտի գաղտնիքը  
այն անցյալի սե կոկեծն ու  
վրեժի կիրքը :

Զդիտե վոշ-վոք, ախ վոշ-վոք  
վոր հեռու, այնտեղ,  
ուրվադավող մութ լեռների  
շղթայի հետև՝  
ունեցել ե սիրած աղջիկ  
ջահել ու թեթև :

Ու նա սիրում եր այդ աղջկան—  
առաջին սիրով  
ու նա լսեց իր սիրածի  
վերջին ճիշն այրող.  
... Հանձնեց նրան արու դահճին  
իր իսկ աչքերով :

Մոնշում ե նրա սիրու  
լցված մաղձ արյուն,  
այելի կույր, մոլի ու խենթ,  
ավելի անհուն  
և հրաշեկ լեզուներով  
ուղեղը այրում :

Այնտեղ, նեղվիկ այն փողոցում  
կա մի տուն մթին,  
Այդ տնակում ննջել ե այժմ  
զեղեցիկ մի կին,  
այդ դուռը շատ արուներ են  
բաղիսել մոլեղին :

Բաղխել ե և մառւդերիստը  
և սուրբը, վոսկին,  
բայց նրանց գեմ՝ անող, աղքատ  
բայց չքնաղ մի կին  
չի բաց անում իր ցանկության  
դուռը վայելքի:

Բայց նու կգնու, կտիրանու  
նրան այս գիշեր.  
թե չեն բացվի փակ զոները  
պետք ե վշրել այդ զոները  
և ուժով խուժել:

Պետք ե վշրել այդ զոները  
և ուժով խուժել,  
ինչպես հեռու, ահապարհուր  
անցած մի դիշեր . . .  
Նու բանում ե իր գլուխը  
Ո՛, վո՞չ . . . չհիշել . . .

ԳԼՈՒԽ Զ.

Կես գիշեր ե , կես դիշեր . . .  
Լուսնի լույսը մշուշվել  
վովիլ ե գյուղին ,  
շուրջը շող ու աղամանդ ,  
ձնե չեղջեր կաթնամած ,  
փայլեր բյուրեղի :

Ու գիշերում պարզկաւ ,  
կանդնել ե լուռ ու հոկա ,  
մի սառնամանիք ,  
տաղառում ե ցուրտար թեժ ,  
ոլաքներով իր անտես ,  
շունչ ու կենդամի :

Կես դիշեր ե , կես գիշեր . . .  
Ո' , մոռանա՛լ , չհիշել  
անցյալն ու ներկան . . .  
խորհում ե լուռ մի սավեր ,  
ու շրջում ե դեռ այստեղ ,  
վորովես ուրվասկան :

Ահա տեսավ նա մեկին ,  
դիրքում կանգնած պահապին  
—Հր՝ դո՞ւ յես Հարեթ .

—Համար կանգնել եմ . . . մտածում . . .  
իստեղ ցուրտ ե , ինչոքե՞ս ցուրտ ,  
բնեկը վաշտապետ :

—Յո՞ւրտ ե , —խմիր տաքացիր :  
Պահանջն ապչած , մտացիր ,  
կանգնած , լռել ե  
ու լսում ե նա ապա ,  
—կանգնիր թուրքին պահապահ . —  
դրանց մեռելը . . .

Ու անցնում ե ստվերը ,  
որոր-մոլոր քայլերը  
ուղած գլուզամեջ .  
ահա ցածիկ մի տնակ ,  
կտուրը հարթ ձյունածածկ  
—Ռվ կա նրա մեջ . . .

Այնանդ ողի կա , ողի ,  
ու ամեն հարբեցողին  
զբավում ե նա .  
ողեմոլը որորուն ,  
ուսո նրան ե մոտենում  
ծարավով անհաղ :

Փակ ե զուռը : Նա գիտի :  
Բայց տնակի տանիքին  
ուհա մի յերթիմ .  
նա մազլցեց տանիքին  
ույնալես արակ , տենկագին  
կառվի պիս ճարպիկ :

Յեզ ստվերը յերթիկին  
ահա շարժվեց համբադին  
ու հետո անձայն  
թեքվեց, սահեց աննկատ,  
և առն խավարում հոճկարծ  
նու անհետացավ :

---

ԳԼՈՒԽԱ

I

... Ավ արթուն եր տեսավ, ով արթուն եր տեսավ,  
իսկ արթուն եր միայն լուսինը սառցե.  
Նա նայում եր ներքե բորբոք, խառն յերեսեվ,  
ուռած քահ-քահ ըերնին ու հարբած կարծես :

Մասցեղեն շողերը պարզած այդ տնակում,—  
նա ասես չոյում եր կնոշն այն քնած,  
վորն ել չեր զղում վոչ ցավ, քաղց ու անկում,  
վորն այնպես եր հոգնած, այնպես եր հոգնած ...

Աւ թեավետ քնել եր ու չնչում եր հազիվ  
սակայն լուսնի լույսից տենգոտ ու արթուն  
անհանդիստ եր նրա աշխարհը յերտղի,  
վորն յերբեք չի նիրհում ուղեղում մարդու :

Դըանից ել ահա նրա պարդ հայացքին  
տաղնազի և ահի սավեր կար ընկած.  
Կոմ թռչում եր մեկել կանչը դառանցանքի  
և սուր մի ճիչ կրծքից պոկիլում եր հանկարծ :

Ավ արթուն եր տեսավ... Յեկ այդ լոկ լուսինն եր...  
Հետո նա արթնցավ քնատ, ահաբեկ, —  
զգաց վոր հասավ այն, ինչ զարհուրելի յեր,  
ինչից յերկուզել եր, ցավով տաղնազել :

Հղաց կուրծքն իր հզոր, վայրի ճիրաններում  
և հայացքին դդաց կրքի, ողու բռւյր  
ու մոլեգնած փորձեց ձչալ ահից ներուժ,  
բայց իր ճիշը փակեց մի խեղղող համբույր:

II

Մինչ նա փորձեց ձչալ  
զարհուրանքից հսնկած, —  
մոլոաց վոխը չար, —  
«ոս' ևս, կիսեղդեմ քա՛ծ» :

Իսկ յերբ մութ բնազդով  
սեղմեց ազգքերն իրար,  
կիրքը խոսպոտ, աղջու  
դոսաց, — «բաց արտ . . .» :

Ու սարսափից հանգած  
անհուշ կնոջ մարմնին  
զավանի պես ընկօն  
վոխն ու կիրք, կարմիր . . .

Լուսինը կարծես թե  
իր լույսերն արծաթե  
յերթիքից դեն թեքեց  
ու փակեց իր դիմքը :

Լավեց հանկա՛րծ մի ճիշ,  
այնպես հատու, զարհուր,  
որորոցի միջից,  
տազնապով մի տնհուն :

Այդ մանկիկն եր ճշում ,  
յերկյուղի բնագլով ,  
ճշում եր նա հնչում ,  
մանկական մութ խոնդով :

Եա ճշում եր մոլի ,  
այնպես սուր , հեղակարծ  
և մերթ յերկյուղով լի  
իւեղգլում եր կարկամած :

Մինչ հեռւմ եր մայըը  
կատաղությամբ անզոր . . .  
ինո՞ց անկման խառն , եր  
և անարդանքը մոր :

Հետո նա շշնջաց  
ուժառողան ու անկամ . . .  
«թող ինձ , խղճա՛ , խղճա՛»—  
ու աղի հեկեկած :

### III

Վոռնում եր հովտղը , վոռնում եր խոր ու խոլ ,  
Մուշոյի մատ սրառում , —մթին քարտնձավ , +  
այդ վոռնոցում վոխ կար սեվ ու անդնդախոր ,  
կարճ և անհաղ մի կիրք , արնախում ծարավ :

Յեվ մինչ սուր տագնաւորվ ճշում եր մանկիկը ,  
և կինը սառել եր ցավից կարկամած ,  
զաղանի ծանր թաթը , ծանր ինչպիս լինուր  
իջավ որորոցին , վշրոտեց մանկան :

Ու ճիշը զաղարեց . . . Ու լոեց ամեն բան ,  
հաղեցած վոխն այլես ծարավ չի հեռւմ .

Նիմա էլերքն և միայն խնդում ու հաղթական  
կոխում իր դունչը այ վայելքի զավում .

Աւ զեռ յերկար տեվեց վայրի ու աշնչի  
կրքի խրախճանքը հեղ զոհի մարմնին . . .

Կինն ընկել եր անհուշ , ասես զարկված ժահից  
զառանցանքի բորբոք մշուշում ւարմիր . . .

#### IV

Աւ վեր կացավ Մուշոն ուժատ և սպառված ,  
խարխափելով գտավ նա զոան նիդը ,  
դուքս յեկալ ու տարավ խավարում կատարված  
այդ մթին յեղեռնը , այդ սեվ զաղտնիքը : —

Աւ խորհեց , չգիտես՝ թե վորտեղից-վորտեղ , —  
վոր մտավ յերթիկից—դուքս յեկալ դռնից .  
իսկ թողած տնակում լուսե արյուն հորդեց ,  
մի կին ընկալ , — բերնին փրփուր ու հոինդ :

Հաղիվ մտավ Մուշոն իրահիմի տունը  
հազիվ սողաց նա իր հաստ շինելի տակ , —  
յերբ աչքերին իջավ խոռվահույզ քունը  
և մարեց ուղեղում ամեն հիշտակ :

Աւ նա յերադ տեսավ : —

Հայրենիքում նորից  
նա տեսավ իր տունը զորչ ու սիրելի ,  
զառներն եյին մայում և ձորերի խորից  
հոսում եյին ջրեր հորդ ու փրփրալի :

Արեն ահա հեռվում լույս ամպերն եւ ոծում,  
անցնում և արտերով հողնության մի հեվք, —  
ահա նորից մայրը ահա դուրսկա յեւ գործում  
և հեկեկում եւ մի մերամաղձիկ յերգ:

Չէ! այդ ձմեռ եւ բուք:

ազոտ մի յնըեկո.

ո պատմում եւ մայրը տաք թոնքաշրթին  
նա հեքյաթ եւ պատմում զուսեղեն մի յերգով  
ու թվում եւ, թէ չկա վերջը հեքյաթի . . .

Թոյում եւ, թէ խնդն եւ հերոսն այն անդիջող,  
այդ հրաշք հեքյաթի, — զորն ահա հանդուգն  
անցնում եւ բոցերի ու ծովերի միջով, —  
բերում անմահական խնձորը մարդոն:

Յեվ համառ կրկնում եւ մայրն իր ականջին,  
«Քո յետեվից պիտի դուռն, «զարձի՛ր, խե՞նթ»,  
բայց դու, վորդի, յերեք չլսես այդ կանչին,  
յերեք հետ չդառնաս ու չնայես յետ»:

«Յետ չդառնաս վորդի, թէ չե՛ կքարտնաս,  
կկորցնես խնձորն ու ճամբեն քո ջինջ» . . .  
և հլու այդ ձայնին ահա դառնում եւ նա  
հազար ճիվաղների, ոճերի միջից:

Ու լսում եւ հազար ու բյուրավոր ձայներ  
«եհե՛յ դարձիր, դարձիր, եհե՛յ, հետ նայիր» . . .  
բայց նա հետ չի նայում, անցնում եւ անյերեր  
ու ֆշշում եւ չուրջը ոճերի մի նախիր:

Հանկարծ այդ կանչերը այնքան քաղցր դարձան,  
վոր թվաց նրան, թե կանչում է իրեն  
իր քաղցրիկ կուղրաթը, խարտյաշ ու հերարձակ, —  
զաշտերի ծաղիկը, լեռների յերեն:

Յեվ նա անզոր, դյութված այդ կանչեցը մոգող,  
չետ դարձավ կախարդված, — քարացավ մեկից,  
իսկ իր առաջ տեսավ խորին դարհուրանքով  
մի ճիլտված մանկիկ . . .  
ու Ակված մի կին . . .

---

ԴԱՍՏԱՆԻ Բ.

1.

Յոլում ե լուսաբացը ,  
մուժ է , սառնամանիք .  
Ճերմակով ծածկված է  
տմհն տուն ու տանիք :

Եսկ նեղ փողոցներում  
սառույցը մետաղի  
աժալաել ե սմուր  
տմհն սայլուղի :

Գունատ ցոլում ե որը ,  
պահակի աչքին .  
ո'րն ել ասես որոք ե  
քնատ , անհանդիսա :

Սառնամանիքն ե ցցել  
իր դունչը կապտած ,  
ճերթ պաղ լիզում ե կարծես ,  
մերթ տալիս ապառակ :

Բայց պահակները քնատ ,  
դգասատ դիրքերում ,  
անխոռով են ու հանդարտ ,  
չուրջն են դեպերում :

Նըանք հսկում են արթուն  
դեմը, թշնամուն,  
ընկեր, կայուն այս մարտում,  
ընկեր, պինդ, ամուր:

Զգուշ. հսկիր թշնամուն:  
բայց ովկ, ով գիտի,  
վոր թշնամին ներսումն ե,  
թիկունքում դիրքի:

Յեվ վոչվոք դեռ չգիտե,  
չգիտե վոչինչ  
վոր կատարվեց այդ գիշեր  
մի դեղին վոճիր:

Յեվ վոչվոք դեռ չգիտե,  
վոր թշնամին մութ—  
դարանել ե խուլ, անտես  
իրենց բանակում:

## II

Ահա յրվեց, նորից, աղոտ լուսաբացի  
խավարի մոխիրը հալչող լույսի հետ.  
այդ վաղորդյան պահին՝ դյուզի մի փողոցից  
կիսամերկ ու բորիկ, ինչպես խելահեղ,  
զգգղված մաղերով, արնաթաթավ, լկված,  
խելացնոր մի կին, վաղում ե, կոծում,  
սեղմած արնոտ կրծքին իր խեղղամահ մանկան  
նա հավար ե տալիս, լալիս, անիծում:

Ու նրա աղեխարչ կանչերից դարհուրած,  
ամեն մի խրծիթից, անից դուրս ընկան,  
կյուղացիներ քնառ, յերտներից թուած  
յերազարսան դիմքով, ինչպես ուրվական:

— Հարսոյ, Հավաքվեցեք, Հասեք, մուսուլմաններ,  
և եյ, Հավաքվեցեք, Հասեք Հավարի,  
տեսեք, ինչ են արել պյավուրներն այս դիշեր,  
Ասագի կնկանը, Ասիային այրի:

Գյուղը մի ակնթարթ վեր թռավ հեղակարծ,  
խլեց պատից կախած հրազեն, դաշույն,  
ու փողոցը զարձավ մարդկանցով հեղեղված  
ողջուր ու մութ ալիք, ցասկոտ, անհաշտում:

Իսկ չոր տախտին իր, զեռ պատկել ե,  
զնդի քաղզեկը, — Արտեմը,  
աչքը հառած սեվ, մութ ոճորքին  
նա զեռ խորհում ե վառ, տենդագին:  
Այս տափոտը, վոր բացվում ե  
այնքան ազօտ ու մոխրաշաղախ,  
վորր թափում ե լույսի ձյունը,  
նեղ յերթիկիցը ասեռ ճաղատ,  
այս լուսաբացը իր սւլեզում,  
վառում ե հաղարմի գրվակ, արկած,  
հաղար խոհեր ե նա հեղեղում  
և բորբոքում ե նույնքան կասկած:

Այս լուսաբացը բախտորոշ ե . . .  
և նա բերում ե վոչ միայն լույս. —  
նա փշրելու յի շատ գրոշներ  
և այլ գրոշներ ե ծածանելու:  
Վերջին ուժերը վերջին մարդու,  
հրահրել ե զեռ հարկավոր . . .

Պետք ել լինել դեռ լարված արթուն,  
վոր յերբ այս ոըը թեքվի՝ խավարը  
բերի վաշտին իր հաղթանակի,  
խինդի զրոշները արնագին:

Ո՛, նա լսում ե զրինգը մետաղ,  
մարտական, կուռ այդ կարմիր վաշտի,  
մակրնթաց ուժը նրա անհաղթ  
և այն, վոր յերգը իրենց չրթին  
նրանք կարող են կովել յերկար  
հորդաների դեմ դաշնակցական:  
Բայց յերբ լսում ե նա վիթխարի  
բանուկ շարժումը մեքենագետ,  
վորպես հմուտ մի մեքենագետ,  
ինչպես, ինչպես նա չտագնապե  
լսելով ժանու ու դժոխային  
աճեղ ճոփնչը չարագուշակ,  
տեսնելով նրա մեջ սպրուած ժանու:

Այդ ժանողը՝ ախան և հին անցյալի, —  
տաելությունն ե դա ազգամոլ...  
վաշտում՝ ամեն մեկ կորցրած հոր-մոր  
և կամ սրտի իր սիրեցյալին՝  
ամեն թուրքի մեջ տեսնում ե հին  
իր թշնամուն նենդ, իր վոստիմ...  
Իսկ չուրջը միթե թուրք դյուզերն ել  
չեն կորցրել նույնքան արյուն ու ինչք...  
Ահա արյան այդ հեղեղները  
սառել—դառել են զեղին մի ժանու,  
կանգնած վաշտի վեհ, աղասաղրիչ  
համառ յերթի դեմ...

Ու նա դիտե

Ժանդր կրծում և կուռ մետաղը . . .  
Հասունանում և այլ սեվ ախար  
ինչպես վերքի մեջ ժանտ թաբախը :  
Ու, նա տեսնում և վարանումը,  
զոր կարծկում և շատ-շատերում՝  
յիրը թուրք դյուզի հետ միանում են  
և գեմ դնում են հայ թշնամուն :  
Խոկ վաշտաղի արք . . . Այսուշոն արի  
զորը կովում եր խինդով, յերզով՝  
հենց գրանից չե՞ր արդյոք նորից,  
զոր սեվ նոթերը կիսած դժգոհ  
թափառում եր մութ ու գավաղիր,  
և հայհոյում եր «Նրանց» հավատին . . .  
Միշտ հեշտ և, հեշտ և հոգեվարքով  
յետպույն դրոշը փոխել կարմրի,  
բայց փոխել աղզը գասակարգով—  
արք այնքան խորն և ու դժգարին . . .  
Ու թե չկանխի նա այս աղետը,  
թե ճգնաժամը չհաղթվի՛,  
կուռ մեքենան այս . . . ուազմիկ վաշոր  
կիսածամրին իր կկործանվի :

○

Այսպես, խորհում եր վատ, տենդաղին,  
զինկոմ Արտեմը իր չոր տախտին,  
և հուզմունքից խոր, կրծքում կրկին  
յետց սեվ ցավը ոլալարախաի :  
Ու նա հազում և, հազում և չոր  
և հառած աշքը դեպի ոձորք  
հիշում և որն այն, յիրը վոր բանակց

նա ազատովեց ու նետովեց ճակատու,  
բանդաների դեմ Մուսավաթի...  
իսկ այս աշունն ել զենքը ուսին,  
նա շարքերի հետ մարտագնաց,  
յեկավ յերկիրն այս հետամնաց,  
ուր վոր չաչում եր զաշնակ դամշին,  
ուր վոր դեռ կամքն եր բռնակալի  
և ընդվզում կար հերոսական,  
ուր զրահապատն հրակարմիր,  
հորդաներով բյուր, չրջափակված՝  
դեռ մաքառում եր այս դաշտերում  
ու նետած կանչն իր դեսի հեռուն,  
դեսի յերկիրը խորհուրդների, —  
նա սպասում ե, վոր դան նորից  
այն կուռ շարքերը հերոսական,  
յերբ վոր պայքարն այս որհասական,  
կպսակվի վառ հաղթանակով, —  
յերբ հորդաներն այս կկործանվեն,  
յերբ արնավառ այս յերկիրի վրա  
կարմիր դրոշը կծածանվի:

... Միայն չուտի այն ժանդը դեղին  
փաղփուն մետաղը ոաղմիկ վաշտի,  
և զգացումը քենի, վոխի,  
վաշտի կուռ կամքը չփշրտի,  
միայն շարքերը և թուրք և հայ  
միշտ համերաշխ և անարկած...

...Այն ո՞վ ե, ո՞վ ե ճչում հարայ...  
Այդ թնչ դդիրդ ե հորդել դյուզով:  
Այդ թշնամի՞ն ե գուցե հանկարծ

դարձել յեկել և հակագրոհով . . .  
Այնքան ցնցող են կանչերն այդ բուռն  
այնպես չարդուժ, այնպես հախուռն . . .  
Ցնցվեց Արտեմը միանդամից, —  
անցավ մարմնովը մի սառն ալիք . . .  
դուցե հասել և ճգնաժամի  
դաժան վարկանիք սպասնալից . . .

---

ԳԼՈՒԽ թ.

I

Մի վայրկյանում վաշտը ցրիվ,  
ահեղ խուճապով,  
հորդեց դեպի գյուղամեջը,  
այն վոլոր ճամբով,  
վորով յերեկ նա զյուղ մտավ  
մարտական թափով:

Մութ բնաղդը ասես նրանց  
չնջաց հանկարծ՝  
վոր արշավն այն հերոսական  
կործանվեց անդարձ,  
ու այժմ նորից պիտի դառնան  
նույն ճամբով յեկած :

Գյուղավերջին, ուր կանգնել ե  
պահակը արթուն,  
այդիներով շրջափակված  
այն լայն, բացատում,  
հավաքվեց վաշտը գունաթափ,  
տաղնապը սրտում :

Դեռ փոփել ե շուրջը թանձր  
վաղորդյան մրափ,

պատահեցիւ և հայտցքի դեմ  
մշուշը մռայլ .—  
աստանվում արծաթ մի քող  
սիզ դաշտի վրա :

Մառախուզում գծվում և մառ,  
ազոտ մի սիլիկետ,  
վորն ասես թե , մշուշի մեջ,  
լողում և վետավետ,  
քաշած գլխին ամպամշուչ,  
վորովես մի փաթեթ :

Արտաստն և . այն վիթխարի  
լյառը ամենի ,  
այնպես չարչուք , ահասարսուու .—  
ինչպես չուք մահի ,  
կոխած գլուխը ամպերում  
յերկնակամարի :

Որում հյուսվում են հազարաձեւ  
սովորակ սորոգեր ,  
ձնեղեն ծովը ծփում և ,  
յելնում կարծես թե ,  
և ցնցում և իր բացերը  
փայլ ու արծաթե :

Աւ ցցած պազ , կապտած դունչն իր՝  
ստոնամանիքը՝  
յիզում և սառ շրթունքներով  
մարդկանց ալիքն այն ,  
վորը գալիս և գեմքերին  
ահի կնիքը :

Աւ մթին առազնապով, չչնչում են իրար  
դինվորները բոլոր յեղածի մասին,  
ու բոլորի գեմքը զայրագին ե ու չար,  
անձկություն ե տիրում նրանց ամենքին:

Ի՞նչ... Մանել գիշերով անպաշտպան այրու մոտ,  
բոնարարել նրան ու խեղդե՛լ մանկան...  
ձնչում ե ամենքին զայրագին մի ամոթ,  
վորը սակայն անզոր, անկամ ե այնքան:

Մի քանիսը սակայն քրթմնջում են կամաց...  
— Դե ինչ մեծ բան ե վոր...մի թուրքի քածի...  
— Մինչդեռ նրանք քանի հայ մանկանց ու կանանց...  
Ու լոռում են խեկույն վառվող կասկածից:

Յեկավ վաշտապետը. գունաթափի ե դալուկ,  
որորվում ե ասես ողու որբանում.  
բայց հայացքում ելի մի յերկյուղ կա անլուր:  
...Այն խեղդամահ մանկան նա չի մոռանում...

Ու ասում ե նա խորթ ու խանձըված ձայնով,  
պետք ե ճղել եստուց... Պիտի յետ զառնալ...  
Մինչ լսվում ե ահա ծանր հաղը ծանոթ,  
յեկավ ե Արտեմը լուռ ե վարանած:

— Ի՞նչ ե յեղել... ասա՛... նետեց նա Մուշոյին,  
հարցն ասես նազանից արձակված գնդակ...  
նա խառնեց իր քիթը... Հե՞... Մի զատարկ ոյին,  
ասում են լիկել են մի թրքի կնկտ:

— Աւ խեղդել են հետո որորոցի մանկան , —  
արյունակոխ աչքով մեջ մտավ Միխոն ,  
ու նա թքից դենը կատաղությամբ անկար ,  
ու շրջեցին զեմքերն ամենքը մի կողմ :  
Աւ արձանի նման բրոնզաձույլ ու կուռ  
կանգնել և Արտեմը քարացած , ու ցուրտ . . .

Բոպեն բախտորոշ և . . .  
Նա բերում է անկում  
և կամ բայլշեիկյան դաժան հատուցում :  
Կամ սրված այս ախտը , ճղնաժամն այս ժանո ,  
կկործանի նրանց , բայլշեիկներին . . .  
կամ կհաղթեն նրանք անողոք ու դաժան  
այդ ոուր ճղնաժամը այդ ժանդը դեղին :  
Աւ նա հանկարծ ձգվեց և գողը շրթերին  
գոսաց պետք և զանել այդ հանցավորին .  
լոեց հետո : Ե'լ բարձր նա վորոտաց ահեղ .  
— Պետք և հանցավորին գնդակահարել :

Աւ գունատվեց Մուշոն . . . Բայց մեկը յետեից  
սուր հեղնանքով սուլեց և նույն վայրկյանին՝  
ձգվեց Մուշոն հպարտ ու նետնց Արտեմին —  
— Յես եմ Ակել թուրքին — ի՞նչ կարաս անի . . .

Աւ ցնցվեց վողջ վաշտը , ցուրտ դողով սրսիաց ,  
Արտեմն ել գունատվեց հզոր ցասումից .  
վայրկյան — և Մուշոյին տիրեց մութ սարսափը ,  
թվաց , վոր վողջ վաշտը գլխին կործանվեց :

Մինչ Արտեմը զգաց զեպի իրեն խուժող  
վաշտի խոր ցասումը և ահա նորից —  
խլել նրանից զենքը , — վարոտաց նոր ուժով  
և ինքը մոտեցավ լուռ հանցավորին :

- Ճիշտ ե , խլել  
 — Վիչ ե . պետք ե խփել շան պես :  
 — Ի՞նչ . մի թուրք շան համար ...  
 — Կամ թե մի քածի ...  
 — Չենք տա վաշտապետին .  
 — Հայեր . ամոթ ե ձեզ .  
 — Այ , յա՛վ յեղ ե քսել դաշնակի հացին :

Աւ մի ակնթարթում վաշտի պղտոր գետը  
 խլրտաց խոր , հախուռն , ասես փրփրեց .  
 ահա մի խումբ դիմեց դեպի վաշտապետը ,  
 մյուսը գինկոմի թիկունքը լունեց :

Ակնթարթը մեծ եր .  
 հանկարծ պոկվեց ժանովը ,  
 ժանտաղեղին ժանզը փաղփուն մետաղից .  
 տե՛ս , կանգնել ե վեց-յոթ գինավորների շարքը  
 վաշտի դիմաց վորպես վոսոխ կատաղի :

Աւ նայեց գինկոմը գինվորներին յերկար ,  
 զեմքին ատելություն ու ցուլքը վշտի ---  
 ահա ժանզն այն մութ , վոր կրծել եր յերկաթ  
 ու անխորտակ կամքն ամբողջ մի վաշտի :

Յեվ նա ասաց խողոտ , մոայլ ու համբազին  
 — խլեցեք նրանից զենքեր լուսը .  
 ու մինչ մեկը փորձեց կովել զենքը ձեռքին ,  
 կամ թե փախչել վաշտից թավալի զլոր .  
 վաշտն ողակից նրանց յերկաթե ողակով :  
 «Չեռքերը վեր» թնդաց և միանդամից  
 վաշտի սեղմ ողակում կանգնեց յուռ , զլիստիոր  
 զինաթափ խմբակը — զերպած թշնամին :

Ետոտառանի այն լայն բացառում  
հախուսնանում և ամրոխը խուսն,  
վորի աչքերից վոխն և ցայտում,  
առելությունը առես մխում . . .  
. . . Երանք զինովել են ինչով առես,  
ինչով կարող են փշրել մի դրուխ,  
բայց նրանց գեմն սպասարկեն՝  
ահա կանգնել և վաշտը հլու .  
Նու վոչ կրակում և նրանց վրա,  
վոչ ել վախչում նրանց առջից .  
թվում և չի՛ յել ահսնում նրանց,  
վոր հարձակվի և կամ հահանջի :

Այնտեղ ամենքը զես հողեցունց  
չիմա ապրում են վեհ մի վայրկյան,  
յերբ վոր թվում և նեղ ու անձուկ  
թեկուզ և մահը փոքրիկ մանկան :  
Այնտեղ վրեմն և զես ուստանում ,  
վրեմն ու վոխը գասակարգի ,  
վորը տեսել և իր թշնամուն  
և հիմա չար ու քենախնդիր՝  
զսպած որբուռմն իր ամեն ցնցում ,

ձեռքում սեղմել և զենքն ամուր  
և սպասում ե մի նշանի,  
վոր տա արնոտ ու վառ հատուցում  
և իր վրեժը նրանից առնի:

Ու խաղաղվում ե ամբոխը հոծ,  
դանդաղ սահում և գեղի բացատ:  
Ողից իջնում են բահ ու բրոց,  
և բռունցքները նրանք բացած,  
շրջափակում են ծառաստանը  
և քարանում են իրենց տեղում,  
մինչ ժամանակը խտանում և  
ողը ճնշվում և ու թանձրանում:—  
Ողը դառնում ե ծանր, յերկաթյա,  
առես մտնում և մի խուլ պատյան:

## II

Ծառաստանի այն բացատում  
զինվորներ վեց-յոթ  
կանգնել են խառն ու դլխահակ,  
յերեր, ու դողդոջ,  
իսկ նրանց դեմ զինված վաշոը  
կուռ ու անհողղողգ:

Ի՞նչ պատահեց, վոր բախտակից,  
մոտիկ ընկերներ,  
ընկերների՝ իսկ ձեռներով  
պիտի այժմ մեռնեն, —  
պիտի ընկնեն այս դաշտի մեջ,  
հոչոտ, արնաներկ:

Ու հասկացա՞ն նրանք արդյուք,  
վոր հաճախ , թեկուղ—  
թշնամու հուր ու կրակից  
դեմք չելին թեքում ,  
բայց զնում ելին ակամա ,  
բոլորի հետքով :

Ու հասկացա՞ն , վոր ստար եր  
յերթը նրանց համար  
սպայքարների դժնի ուղին ,  
մութ ու արնամած  
վողուրումները հերոսական ,  
գրոհներն համառ :  
  
Նրանք զնում ելին առաջ ,  
անհեռանկար ,  
հայացքն յետ , միշտ վարանոտ ,  
միշտ դժգոհ , առկախ ,  
և կես ձամբին , ահա այսոր  
ոլիս մհան ընկած :

Ու քարացած , կամ ահագնած ,  
կամ խեղդված վոխից  
նրանք նայում են վայրենի  
հրազենի փողին ,  
մինչ սարսափը նրանց դեմքին  
ցանում ե մոխիր :

Հեկեկում ե հանկարծ մեկը  
սարսուռով մահվան ,  
և տախո թե դլխին առած  
մի հուժկու հարված ,

ընկնում ե ցած , քանդում ձյունը ,  
խոլ ու ցնորված :

Մինչ խեղդվում ե վայրի վոխից  
վաշտաղետ Մուշոն ,  
ու զոռում ե վերջին պահին ,  
վերջին մի ուժով ,  
—Յես խմն արի՝ յես արյանը  
սրբեցի վրեժով :

Յեզ նու փակեց իր աչքերը :  
Վայրկյան : . . . Յեզ մոայլ  
հնչեց հրահանդը սուր , հասու , —  
բաց անել կրակ . . .  
Յեզ արհածիլ ձակատներով  
ցած բնկան նրանք :

### III

— Տրա՛-տա՛-տա՛-տա՛-տա՛-տա՛-տա՛-տա՛-տա՛-  
հնչում ե . սի՞րտ ե , թե չեփոր ե ,  
տյնքան խանդոտ ե ե հզարտ ե  
այդ հրե կանչը , այդ ներփողը՝  
վորն ավետում ե հաղթանակը ,  
նոր հաղթանակը կարմիր վաշտի՝  
մի սե ախտի գեմ , մի հին ժանդի ,  
վորը կրծել եր նրա կտոմքը :  
— Տրա՛-տա՛-տա՛-տա՛-տա՛ . . . Ժամանա՛կն ե .  
Ահա գառնում ե վաշտը նորից .  
գառնում ե ձույլ ու մետաղակուռ  
ե նրանց գեմը ամբոխների  
կատաղությունը հզոր ե կույր :

ի չնում , մեղմվում և ու խաղաղվում  
և հիմա այլ մի բոց և վառվում  
հայացքների մեջ , այն կայծ կլառն .  
վորոնք տեսան այն հասուցումը ,  
այնքան գաժան ու բայլչեիկան  
և զգացին այդ մեծ ցնցումը  
ու հիմա և ուժ , արյուն և կյանք  
նրանք պատրաստ են տալու վաշտին ,  
նրա հաստատ ու հոկա մարտին ,  
վորք ուզում և մաքրել ժանդից  
ամրող յերկիրը . . .

Ու շարք-շարքի ,

վաշտը անցնում և , զոփում զետնին ,  
լուսմ հրահանգը նոր պետի  
և իր զոփյունը հուժկու ամուք ,  
արձադանքներ և գյուղից հանում . . .  
նրանք անցնում են առաջ անահանագին ,  
ձնագնդի պես լեռնասահող ,  
նրանք աճում են , գառնում անհաղթ ,  
վորպես յերկրի ուժ ու սեահող :  
Նրանք անցնում են ռազմի յերթով ,  
գրոհներով հաղթ ու անընդհատ ,  
տալիս են կյանքն ինչողես գնդակ ,  
անցնում են վառ ու պայծառ խինդով :  
Հաղթանակի մեծ այն ծարավով ,  
վորից տահս թե հրավառավով  
այս զյուդոսանն իսկ զգում ե՝ վոր  
բացվում և կյանք մի բասոր ու նոր :

Եկառըվա դեմը ցրվեց ամոլը,  
յելավ արևը թույլ ու տամուկ,  
բայց ավետեց նա ջերմությամբ իր  
մի նոր, պայծառ մի գարնանամուտ:  
Ու բռնկվեց վառ հորիզոնը,  
իր գույներով շեկ, հրակարմիր  
և վոսկու շառ այդ յերիզով ել  
բացվեց յերկնում մի պայծառ կտմար:  
Իսկ իրիկվան դեմ, յերբ ալ հաղած  
յերկինքը վառ եր ու վոսկեդույն՝  
վաշտը դրոհով մի հերոսական  
մտավ ասես թե . . . կարմիր Բազու:

1927-1930

Մասկվա-Լենինգրադ  
Յերեան.



(134.)

№ 1

ԿՈՍՏԱՇԻՏԱԿԱՆ ԳՐՈՂՆԵՐ

№ 4

ԱՐՄ. ԹԱՄԱԶՅԱՆ

ՀԱՅԱՑՑՔՆԵՐԸ

(Պատմվածքների հավաքածու)

A T  
9516

ՀԱՅՈՒԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ

ԹԵՏՐԱՆ ՆԵ 1446.

ՊԱՏՎԵՐ 503

ԳՐԱՌԵՊԳԼԻԿԱՆ 6001 (բ)

ՏԻՐԱԺ 2500

ԳՐՔՈՒՅՑԱՍ ՆՎԻՐՈՒՄ ԵՄ  
ԱԼԼՈՎՎԵՐԴՈՒԻ ՊՂՆԶԱԳՈՐԾԱՐԱՒԻ ՅԵՎ  
ՇԱԽԵՐԻ ՑԵՐԿՈՒ ՀԱԶԱՐԱՆՈՅ  
ՊՌՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԲԱՆԱԿԻՆ .



## ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

«Նրանք արդեն սկսել են  
ստեղծագործական կըրա-  
կով վառվել»:  
Ա. ԿՈՍՍԻՐԵՎ

ԴՐՍԵՑ, ԴԻՇԵՐԸ

Գործարանի մոտ որ ու զիշեր թշում և զալարվող  
դեռք, մողում, հզկում ամիերի քարերը: Յեվ յերբ սու-  
յիշը ծորում է յերկար ու դուրակի, առես քաղցրու-  
թյուն և հոսում խավար ծորով:

Յերեկոները, յերբ մութը ձորն է մանում, քայլում  
և գործարանի ու զետի միջև ձզվող յերկաթուղիով,  
քեզ թվում է, թե չուրջդ մի առասպելական վայր ե,  
մի հեքյաթային զիշեր...

Մի կողմից լսվում են տասնյակ մեծ ու փոքր մե-  
րենաների, ողբինձ հալող հսկա կաթսաների մանչյունը,  
մյուս կողմից՝ փրփրաբաշ ալիքների շառաչն ու միո-  
րինակ թշողը:

Բանվորական ավանի հարյուրավոր բնակիչները  
սովորել, մտերմացել են այդ ձայներին: Յերբ նրանցից  
չեկը զուրս է զնում ավանից, առես ինչ վար մի բան

սպակաս և զդում—ակտնչներն ել չեն լսում ջրերի ու  
մեքենաների յերդը:

Յերկաթուղու աչ կողմը՝ բարձրություն և ձորի  
յերկարությամբ, վորին աչքը հաղիվ և կարում: Դենը,  
բարձրությունից ել են կողմը, ցերեկով զու կտևնես  
լայն դաշտերում չորսըսկզ հասկե՞ր, հասկե՞ր և հաս-  
կեր... իսկ գիշերը, հեռվից, ջրերի վրայով միայն  
կլսես չների տիուր վոռնոցն ու գայլահաշը: Հասկե-  
րիցն ել գիշերը՝ սարեր՝ ստորոտները փաթաթված խո-  
անտառների գոտիով: Զորում, զործարանի չուրջը,  
այգիներ կան շատ, ծառերը բերքից տնօրում են, ճյու-  
զերը չոքում մինչև զետին:

Յերկաթուղու ձախ կողմը՝ զործարանն և վաված:  
Կան շարքով կանգնած հանրակացարաններ, չենքեր,  
իրենց բնակիչների հատուկ կենցազով ու սովորու-  
թյուններով: Վեց նոր չենքեր կան, շարքով: Նրանց  
բազմաթիվ պատուհաններից յերեսում են տառ  
յույսեր: Լույսերը վառ են և բազմերանդ,—կանաչ,  
կարմիր, կապույտ... Ասես գիշերվա խավարում վեց  
չենքերում հրդեհ և մխում և տարբեր զույնի լեզուները  
զուրս են մեկնվել պատուհաններից: Յեթե ցերեկով,  
արեի լույսի տակ գիտես չենքերը, կնկատես, վոր պա-  
տերը նոր են բարձրացել և զեռ թարմ են քարերի տո-  
շած տեղերը ու արել զեռ չի կիղել տանիքների թիթեղ-  
ների մուգ կարմիր զույնը:

Նոր չենքերի արանքում, պատերի տակ հոգե ցածը  
տներ կան պազած: Նրանց բնակիչները բողոքում են,  
վոր այլիս ներսն արեի չողեր չեն ընկնում, խոնավ և...

Ասում են, վոր արդ հոգե տները չինել ևն հույ-  
ները, այն ժամանակ, յերբ տուղին ոնդամ ձորում հոգը

արանջացել և բահերի ու քլունդների հարվածից և ձին  
քաշիլ և պղնձառնանքի առաջին ըեռը :

Հանրակացարաններից և գործարանից ևն կողմ ,  
հետպատ , պղնձառնանքի սարեր կան զորչ ու կարմրա-  
գուն քարերով :

Նրանք չեն յերեսում զիշերվա թանձր խավարի մեջ :

Դիշերը յերկու անգամ փոխվում են հերթերը :  
Սուլիչի առաջին կոնչին բացվում են հանրակացարան-  
ների զոները և բանվորները քարքարոտ արահետներով  
շատապատմ են զետի ցեխերը : Աւշացողը պիչակի մի թիր  
հաղնելով և անից զուբու զալի , աչքերը տրոբելով ճամ-  
րում :

Մի յերխասարդ սուլիչի վերջին կանչին իջակ  
հանրակացարանի յերրորդ հարկից և արագ ու թըմփ-  
թմփացող քայլվածքով անցավ հին , հողե տնակի մո-  
սավ : Տնակի խարխուլ պատերն զգացին ամուր վաղքը ,  
և առաստաղը հող մաղեց :

— Ա՛յ թաղեմ քու արել հա՞... Տեհառ ո՞վ եր ,—  
ներսից քառհարամ թոնթորաց մի ողառավ ձայն :

### ԱՂԱԿԻ ՍՊԱՌԵՄ Ե

Զորի արդիներում գեռ առաջին մոշահավը թեղին  
չեր խմել ծառերի արանքում , յերբ բացվեց մեխանի-  
կական ցեխի գարպասը :

Հետզհու հավաքվում են ցեխի վարպետներն ու ա-  
շուկերաները ,—ծիծաղավ , կատակով :

— Ես որի ել շուտ անց կացնենք ,—հորանջեց ծե-  
րուկ վարպետ Միտն ,—ե՛ւ , ծերոցա , ջահելությանս  
որերից մի բան չհասկանալով :

— Ախար ծերուկ , եղ միբուքու վո՞ր աշխարհում ես  
ողիստակեցրել , վոր կարգին որ քաշէյիր ...

— Յես և Հ հենց եղ եմ ասում, վորդիս: ՄԵՆՔ, ՃԵ  
ՐԵՐԱ Ի Հ հաշվի մեջ չենք. հիմա հերթը ձերն ա...

— Միտ ջան,—թուվուալով մեջ մտավ կոմյերիս  
Մուլկուչը,—վո՞նց ա, քո կարծիքով յիս «հաշվի» մեջ  
եմ, թե չե...

— Տո, ախմախ, —կատակեց աչքը վել Գարսի, —  
վոր կիմոն «հաշվի» մեջ ա, բա դու զո՞ւրսն ես...

— Հա՛... Հա՛... Հա՛... —բրբջացին բոլորը, —  
ինչ անում տվիր ե՛:

Դեռ հնչում ե սուլիչը, ու բանվորներին կանչում  
կարոտով... և նրանք վազում են ճեպավ:

Սկսվում ե մեծ առորյան:

Մեքենաները, փոկերն ու անիվները նրանց ձեռ-  
քերի տակ չունչ ու թարմ ող տալի ներսը: Իսկ մոտիկ ցե-  
խում, կոմպլեսորները համերգ են սարքել...

Վաղ առավոտից մինչեւ յերեկո դուռում ե վեհ-  
տիլյատորն ու թարմ ող տալի ներսը: Իսկ մոտիկ ցե-  
խում, կոմպլեսորները համերգ են սարքել...

Մեխանիքական ցեխի վարպետ վանոն մի քանի  
անգամ աչքն ածեց արհեստանոցը և տեսնելով, վոր  
կիմոն բացակայում է, զլուին որորեց... Այդ լսողե-  
յին վարպետին ուշադիր նայողը կնկատեր, թե ինչորու-  
նրա աչքերում խազում է մի անհանդատություն և ճո-  
կատի կնճիռները մի պահ շարվում են կողք-կողքի:

— Տեսնո՞ւմ եք ընկերներ, —մռայլված իսուց  
վարպետ Վանոն, —շուտով նախաճաշի սուլիչը կհնչի,  
բայց դեռ կիմոն չի յեկել: Ըսե՞նց ենք դործը տանե-  
լու:

— Ախր մենակ կիմոն չի: Մյուս ցեխերում ել կան  
լոդրեր: Յես ասում եմ, դրանց հարցը կարականակե-

զնենք յեկող արտապրական նիստում . թե չե ըսհենց բլիլ չի : Պահի հուղ տանք դրանց , — վողելորված խոռոշ և Ալոկուզը :

— Կիմոն հենց գիտի , — գլխարկը հետ դնելով վրա բերեց աշակերտ Արտափոնը , — թե եսաեղ գյուղն ո , վոր կամի վրա ննջալով խուբձր կալոի : Եհե՛յ . . .

— Կարիք չկա իզուր խոսել . Կիմոն հեշ , հաշից դուքս ո , — ասեց Միտն :

Յերկու վոաքեր ներս յեկան թույլ , գետինը քըս- քուելով : Կիմոն եր , — ոնդվա յերեսով , գլխարկը հետ և ծուռ ծածկած , ծխախտար բերանին , ու մի փունջ խճճված մաղեր՝ կողիրսկի տակից կախ ընկած : Ամեն որվա ողես ելի արձակած են ըրուզի կոճակները , ու տակից յերեվում և կեզառու շապիկի վիզը . . .

Իսկ մինչև նրա ներս զալը , մեքենաները քանի՛- քանի՛ պատրիտ ելին զործել : Դանդաղ քայլերով մոտե- ցավ վարպետ Ալեքսանին .

— Ե՛յ , բան ու ման կա՞ անելու , առւր :

— Զե՛ «չըկա» , բոշքուղաղ : Փոխանակ ուշ դաշուդ մասին վարիչին բացատրություն տալու , ծաղրանքով ևս շրան ու ման» խնդրում :

— Դե՛ լավ զու յել : Յույց մի տուր , վոր մեծ ես . եսաեղ խաղայինության տեղ չի :

— Յե՛ս եմ խաղեյինի նման , թե զու : Ախր դու յել զիսես , վոր զործ շատ կա անելու , համա ելի հար- ցնում ես : Կոնվերտարի համար շինվող վինտիկները կի- սում ո , վերջացրե՞լ ես :

— Վո՞չ :

— Դե վերցրու և աշխատի :

Կիմոն արհամարհական հայացք ձգեց Ալեքսանի

վրա և դանդաղ շարժվեց, ասես «զիշերը կարձ դարի լիներ հնձած»:

— Անունդ ել կոմսոմոլ ես դրել, ու մեծածեծ բըրդ դում ես ժողովներում: Միոյն խոսելը չե բանը, — Կիմոյի հետեւից ձայն տվեց Ալեքսանը:

Արհեստանոցի վարիչ Վանոն հանկարծ հեռվից նրա կատեց Կիմոյին, վոր գողնոցով բերում է վիճակիները:

— Նոր այելել շան վարդին, — մասածեց նա, — մտիկ վոնց աման գալի, վոնց վոր շան բերանից խլած խալաս լինի:

Ապա վարպետ Վանոն մասեցավ Կիմոյին, սպառեց, մինչեւ վոր դատարկի գողնոցը... Լանգնեց ուղիղ, անշարժ, ձեռքերը հետեւ դրած: Նայում եր այսպես, վոնց վոր դեմքի վրա դառն ծիծառի հետքեր լինելին սառած: Աչքերը կկոցեց, — ասես դիմացից արելը ծակում եր, — ու անթարթ հայացքը մեխեց Կիմոյի աչքերին. նաև ասում եր մտքում.

— Խեղձ ես, նաև հպարտ, զոռոզ: Միթե վորոշել ես դիտավորյալ ուշանալ: Քեզ ցույց կտանք մեր ուժը, վոր աշխատես, լինես մեղ հետ, յեթե վոչ, կըթողնես դորձարանը...

Սուր, ուղղակի խայթող եր վարպետի հայացքը Կիմոյի վրա: Ազելի լավ չե՞ր, խոսքով նախատեր, հայհոյեր, միայն թե իրեն չնայեր այդ նշտարի պես ծակող հայացքով:

— Կիմո, միերջապես խոսեց վարպետ Վանոն, — բան բազե ուշացել ես ու համարյա միշտ ուշանում ես (ու ձկութը ծալեց): Քանի որ ա, վիճակիները չես պատրաստում, ծղձում ես. զա յել առաջի դեսքը չե (ծովեց յերկրորդ մատը): Զգիտեմ ել վորն ասեմ: Զի

կարելի այլողիս : Զե՞ վոր յիս ել դործի պատասխանաւուն մեմ : Յես ել ձեզանով եմ գործ անելու , ձեզանով պատասխան տալու : Մեկն-յերկուոք լավ աշխատելով՝ հեջ , բան չի դուրս գտ , պետք ա բոլորս ել լավ աշխատենք : Ախր դու կոմյերիս ես , քո վրա ավելի մեծ որարտք կտ դրած : Համա դու՝ հեջ : Թե քեզ ասած , թե մի իս քարի : Մի բավ թամաշտ արա քեզ , տես վոնց ևս հարցնված , վոնց ևս ժամ զայի արհեստանոցում , տառի թմբած լինես :

Այս խոսակցությունը կոտարվեամ եր վարպեաների և աշխատեց արդարանալ Կիմոն , վսուքի մի ծայրում քանդելով հողը , մեկ-մեկ դյուզ աշխատել այդ ճնշող խոսակցությունից :

— Դե , ինչ անեմ , — աշխատեց արդարանալ Կիմոն , վսուքի մի ծայրուի քանդելով հողը , մեկ-մեկ դյուզ աշխատել աշխատել այդ ճնշող խոսակցությունից :

— Ե՞նչ ... միթե մյուսներո ժողով չենք դնում : Բոլորը բազոքում են , պահանջում , վոր յեթե այդուն չարանակես , քեզ պետք ա ուզարկել «բազնի» կամ մի արիչ ցեխ :

Կիմոն խոկույն պատկերացրեց «բազնի» ցեխի աշխատանքները : Այնտեղ բանվորներն ամբողջ որը քար , հող , ցեխ ու կիր են կրում , ձեռքերը չանգովում , ջարդվում , արյունուավում , քրտինքի մեջ լողում են . . . «Չէ» , չէ . . .» մտածեց Կիմոն ու սարսափ զդաց «բազնի» ցեխը գնալու մտքից :

Վարովետ Վահոն նորից պնդեց :

— Լոս մ ես , ել գործից չպետք ա ուշանաս : Պետք ա յեռանդով աշխատես , վոնց վոր սեփական գործի վրա ; Զալետք ա հետ մնաս քո ընկերներից :

— Ընկերներս, հա՞—շրթունքները սղմեց կիմոն, —  
յես դիտեմ, թե նրանք ինչպիս նախանձն են... Դու յիշ  
ես նախանձ, բյուրոկրատ, ու ել զգիտեմ թե ինչ, —  
վճռականություն գործողի պիս տաեց կիմոն, —բոլորէ  
ուղում եք ինձ վոտի տակ տալ:

— Հը', —դառնորեն ժպատաց վարպետ Վանոն, —  
իմ մասին յես վոչինչ չեմ պատասխանի, բայց դու  
ստում ես ընկերներիդ մասին: Նրանք աղջիկ տղիքք  
են, իսկական բանվորներ: Յեթե դու լոդր ես, սիմուլ-  
յանտ, բոլորն ել իրավունք ունեն վրադ բողոքել:

— Հեքիաթներ մի պատմի և քարողներդ նրանց  
ասա...

— Ե՛, —հառաջեց Վանոն, —դեռ ջահել ես, կը դա-  
տիարակենք. դու վոչ առաջինն ես, վոչ ել վերջինը  
կլինես:

— Ինձ պետք չե, նրանց դաստիարակեք:

— Քե՛զ ել, նրանց ել, բայց դու դրա կարիքն ո-  
վելի շատ ես զգում...

### ՀԱՅԱՑՔՆԵՐԸ ԽՈՒԶԱՐԿՈՒՄ ԵՆ

— Լսի՛ր, կիմո, —շարունակեց վարպետ Վանոն, —  
դիտե՞ս, վոր մենք սոցիալիստական մրցման մեջ ենք  
մտել պլավկայի ցեխի հետ: Մեր ցեխում ել պետք և  
ներքին մրցակցություն լինի: Մեր մեջ ով հետ մնա,  
վայ նրա մեղքը հա՞: Նամուսի խնդիր ա, ինչո՞ւ  
չպետք ա մենք պատվով դուրս դանք: Պետք ա դու յիշ  
քեզ մի լավ թափ տաս, ել լողբություն չանես:

— Յես լոդր չեմ, կարգին խոսա, —վիրավորվեց  
կիմոն, —յես քո յերեխան չեմ. դու իրավունք չունես  
բանվորին վիրավորելու:

— Ե՞նչ չուտ ես նեղանում : Իսկ դու իրավունք ունի ու այսուղ, զործարանում ավելորդ տեղ բռնել ե շաշխատել այսպես, ինչպես մյուսները, քո բնիկուներ :

Դիմոն միայն տուց :

Լավ . . .

Երտ ներքին շրթունքը ողջվեց առամների արանքում :

— Տղերք, — բարձրաձայն գուչեց Մուկուչը, — զուգուկր վար խօփի, զնանք զործարկում, տսենք Կիմոյին առև տախտակք-ում մի լավ «մաշտիճ» , զուցե խելքը զլուխը դա : Թե չե զա՞ . . .

Կիմոն մի ծուռ հայացք ձղեց Մուկուչի կողմը և ինքն իրեն վնթվնթաց :

— Շուն շան վորդի, հորդ բահը զործարանի հիմքը փորելիս կոտրվեց ո՞յլ . . .

— Ե՞ւ, — հասաշեց տոկար Աերդոն, յերկաթը զորիսի տակ կտրելիս, — վո՞նց ել «կիվ»-ը խմիել ակրծքին :



— Կիմոն, այսոր վինտիկները պետք առ պատրաստես, ինչ զնով ել լինի, — ցածր, բայց խրոխտ տոնով դիմեց Աերդոն :

— Այսոր չեմ կարող վերջացնել, — համառորեն թսնթորաց Կիմոն :

— Լսիր, — գիմեց Աերդոն, — Ե՞նչ ես վալաս զարձել : Տեսնում ես ընկերներդ արդեն բողոքում են, ծաղրում, վագն ել հարցգու կղնեն : — Քշե՞լ . . . Մեկն ել յես՝ կհամաձայնին : Ինչո՞ւ յես համարյա ամեն որ ուշանում : Այնողես ես աշխատեմ, վսնց վոր թշնամու զործ լինի :

— ևս' վ , լս' վ , զու յել նրանց նման վեշտ մի բռնի ,  
ու քարոզ կարգա : Դու յել ես սկսում հալածել ինձ :  
— Հալածել... Ե՞ղ վարսեղից հնարեցիր : Մենք  
բոլորս ել խսուում ենք զործարանի շահերից : Հառկա-  
ցիր , վոր մրցման մեջ ենք մտել պլավկայի ցեխի հետ-  
այժմ ամեն մեկս ավելի՝ լարված և հողատար պետք տ-  
աշխատենք : Կիրակի օրը պարմանագիր ենք ստորագրել-  
լու : Դե՛ , չուտ անցի վիճատիկների գործին :

— Այդաեղ թողեք քարոզը , ազերք , եղ հետո , չո-  
տով սոցմբցում ու դալու , — նկատեց մեկը :



Աշխատում ե կիմոն , բայց ինչ վոր վաս և զգում  
իրեն , ինչպես զրեթե միշտ : Տրամադրություն չկա աշ-  
խատելու : Կոտնալիս , առես ճարձատում , կրաբավում  
և վողնաշարը : Վերջապես ինչո՞ւ յեն ստիալում իրեն ա-  
րագ , չարխի պես շարժվել... Թամամ շան կյանք և  
քաշում :

Ափաս'ս չեր դյուզը : Խողա՛զ , հանդի՛սու : Որը  
ճաշ եր գտանում , վոր արթինուում եր... Ի՞նչ արժեքը  
կանաչ սարերում ման դալ , սառը չրով սիրս հո-  
վացնել : Իսկ այսաեղ , (սղմվում են առամները) սա-  
տանի պես հուպ են տալի չորս կողմից : Ո՞չ , այսաեղ  
դժվար է , չա՛տ ե դժվար :

Մտածմունքներից սթավիվեց կիմոն : Ծխնելու լոից  
բարձրացող ծուխն իջել , անդամ մտել ե արհեստանոց  
և նու չհչում ե ծծմբախառն ոդր : Իսկ արել ներս և ըն-  
կել լայն պատուհաններից ու լընից և ներսն ամեն  
ինչ , — մեքենաները , ոդը , ստութիկ տաքացել են : Մի-  
այն վիճատիլյատորն ե դողուում և փոքր ինչ մաքրում  
ոդը : Շուրջը նորից փոկերն են պտավում խելապար

թափով, իսկ «պրեսը» հանդարտ ու հաղթական թափով իշխում և և կտրում բերանում զրած յերկաթը, ոելով հասառությամբ:

Ժամը յերկուսին սույիչը ճշաց Կիմոն իսկույն վեր թռափ, ուղից վայր ձգել ձեռքի զործիքը և զուրս գնալ, բայց հանդիպեց աշքը չի Գարույի նախառինքով աղպած հայտաքին, վոր առում եր.

— Կը մեռնե՞ս, յեթե մինչեւ վերջ տշխառես . . .

Եիմոն մի քանի բովեւ ևս աշխառեց ու բոլորի հետ ժխտին զուրս յեկավ արհեստանոցից :

Դրսում պլատիկան և մօնչում, ճշում և իր թափի կիմաց մրցման կանչում անխիններին ու փոկերին:

Յերբ քարքարոտ արահեաով Կիմոն բարձրանում եր գեղի հանրակացարանները, նա այնտեղից նայեց իրենց զյուղի կողմը, անոափ մանկությունն անցկացրած սարերը, հիշեց անհող պատաննեկությունը . . . Հրեն, հեռվում, «Սառնազրյուր»-ի կանաչուտներում յերեւմ են բինաները . . . Հիմա այնուեղ տաշտեը լի յին մածոնվ, կաթով, արաժանով . . . Այս Կիմոն մի խոր հոգոց բաշեց, քթի ծակերից բաց թողնելով ծխախտի առողջութը:



Հետեւալ տուալուա, բնողմիջումին, զործարկոմի զրասենյակի տառաջ բանվորները խոնվել եյին:

Պատից կախված եր «ու տախառկը», վորի մեջ պախարակվում եյին հինդ բանվոր: Դրանց մեջ յերկրորդ տեղը բանել եր Կիմոն:

— Կիմո Պեպանյան, կոմյերիտ, ունի անհաշից պրոդուկտ, սիմուլյացիա, զեղի զործն անփույթ վերա-

բերժունք՝ արվում և վերջին նկատողություն՝ կրկնվելու գիտքում վանդել զործարանից :

Կիսագրագետները տառետառ, դբազեաներն եւ վարժ կարգում են, վորը ծիծաղում, հայհոյում, վորն եւ խղճում եւ :

— Ե՞ւ, ջահել ա, կրգբառովի, վոր վանդես, բարիչով կ կապրի . . .

Նույնիսկ նա իր սեփական կարծիքն ուներ քաղաքական խոշոր գեղքերի մասին, վորովհետեւ յերբեմն ազատ ժամերին «կազեթ» եր կտրդում: «Իրեք կազեթ» ստանում եր իրա անունով, խանութի համար, վոր հաճախորդները հերթի սպասելիս մի վորեւե բանով զբաղվն: Գուցե և իրոք ստանում եր, զարմանալու ի՞նչ կա, բայց վոչ-վոք չեր յերաշխավորում: Իբեն ասելով, ինչը «պերվոկլասնի» մադաղին ուներ: Յեզ իսկապես, նրան խանութիները այդ թաղում ճանաչում եյին վորպիս «Բիայ» պարիկմախերսկի խանութի տեր: Վերջապես վո՛չ-վո՛ք այդպես չեր ճանաչի նրա փոքրիկ խանութը, յեթե ինքն իր «մադաղինն» այդպես չանվաներ:

Նա մտադիր եր շուտով տեղափոխվել քաղաքի կենտրոնական մասերից մեկը:

Քիչ հետո ուրիշ հաճախորդներ եյին գալիս, ուրիշների հետ գալիս եր դռնապան Կուղբաթը: Տրախտիրի ճենճի հոտին ավելանում եր՝ քրտինքի, հողի, կրի և ելի ուրիշ հոտեր: Այդ հոտերը նրանք բերում եյին իրենց հին շորերի ու հողոտ ձեռքերի հետ:

Պարիկմախերն ու իմերելն ընդհատում եյին խռակցությունը: Խլիկոն տեղից վեր եր կենում, հողոտ մարդկանց համար՝ խաչ ու ողի տալու:

Այդտեղից ոկավում եր «Յեթիմ Գյուրջի» տրախտիրի առողջան:

—

Յեկավ Վասիլ Մառանջովը: Վարօավիրա Դարչոն

խորը բարեկց . նրա դլիմի թեթև շարժումից գոհ չմնաց ու կամաց փսխաց իլիկոյի ականջին .

— Եսոր ելի թթված ա' , բա'ս , դիմանում չի : Ի՞նչ : Բա'ս , դուքանը լիկվիդացիա յա անում : Ամեն որ դուքանը կողպելիս ասում ա . «Եսոր ելի մթնեց» . չունքի քիչ ա առուտուր անում : Մի որ ել չհամբերեցի ու ասի . «Հը' , դարդդ ի՞նչ ա , առուտուր չունես , թե նալողդ կարում չես տալ» : Զե' , ասում ա , միթամ՝ Դարչո չան , կյանքիցս մի որ ել կորավ» :

Վասիլը նստեց արախտիրի ամենախորքի սեղաններից մեկի առջև . նախ՝ լավ թիքեք ջոկել տալու ու հետո մարդ չտեսնի , թե քանի «զորցիա» յե ուտում :

— Տնածակները թիքա յեն համբարում , — ասում եր ինքն իրեն :

Ներսից դնացին , դրսից յեկան ուրիշները : Յեկան՝ կոշկակար Սպիրիդոնը , զերձակ Արրահամ Բալաթյանը , «ձեռքի» առեստուր անող Մաքարեն , տրեխ կարող ուստա Ունանը :

Իլիկոն շտապ պտտիկց յերկար սեղանների առջև : Ձրի ծորակի մոտ կավե պնակները լվացող տղայի ճակատից քրտինքի մի յերիդ եր կախվել :

Ունանը ճեռքը տարավ շալվարի դրպանը . յեթե մի քանի սխալտակ վող հաներ , կնստեր յերկար սեղաններից մեկի առջև , իսկ յեթե բախտը , այսինքն վողը սե դուրս գար , կթքեր հատակին և ողի կուզեր իլիկոյից : Այն որը բախտը սե եր :

— Սրա գործերն ել վատ են : Սոված մեռնում ա , ասում ա' , «Հմի փեշակում ու դուքնում խեր չի մնացել , — ասում ա' . — չարչություն կանեմ , ինչ ա ազատվեմ յես ես նալոլգներից» : Բա'ս : Խի՛-հի՛-հը՛ ածիծազեց Դարչոն , — միթամ փեշաքար ա ու հլա դուքան ել :

ումին, պարհենում ու նի՞ւ-էի՞ւ-հը՞... յնո իմ ժի հալի-  
լեն վոր ծախսմ, իրան ել, դուքանն ել հետը կառնեմ.  
բա՛ս, ամեն մի հալիլիս, վոր իրեն ուռ արծաթ աան՝  
շեմ տա, քո արևը, բա՛ս:

— Վա՛հ, — իմերելն աչքերը լայնացրեց զարմանքից:

— Բա՛ս, հմի ո՞ւր ե ետ թավուր ապրանք, զադու-  
նիցից եմ բերել տվել՝ ասորի ինձ համար:

Դերձակ Արրամն ու Մաքարեն միշտ իրար հետ եցին  
լինում, կարծես քորոցով կազցրած եյին մե՛կ-մեկո՛ւ:  
Նրանք ում տեսնեյին, պիտի նրա կարողության, բնա-  
վորության մասին խոսեյին ու հետո վիճեյին:

— Հլա մի մտիկ, պարիկմախերը վո՞նց ա լեզվին  
տալի, — ասաց Մաքարեն ու սեղանի տակը յերկու-  
տարրեր կոչիկ իրար զարնվեցին:

— Իլիկո՛:

— Իս սահաթիսո, բատոնո՛:

Իմիրելը հեռացավ, իր յետեից տանելով պարիկմա-  
խեր Դարչոյի ապուշ ու բութ աչքերի հայացքը:

Ամեն որ, յերբ Ունանը մտնում եր տրախտիր, յեթե  
վասիլը վերջացրած չեր լինում իր առջեկի պնակի միջի  
խաշը, կըոր մեջքը շրջում եր նրան: Իսկ յեթե վեր-  
ջացրած եր լինում, մատներով շիում եր բեղերը, հա-  
շի փշրանքները մաքրելով:

Այն որը.

— Ուստա Ունան, եսոր ընչի՞ ուշացար, քիչ ելա-  
գաղ չես գալիս, վոր մի-մի արաղով թաթախվենք:

— Սաղ ըլի քո ջանը, վնաս չունի. եսոր քեփս խա-  
րար ա, մի ուրիշ որ թող մնա, — ասաց ուստա Ունանը:

— Վա՛հ, Ունան, քո հերեն իմ հորը շատ ա լավու-  
թյուն արել, գանա յես պտիմ, մոռանա: Իլո՛, չեմ ձմիս

քվիս կայ խաշի դատասի, — հետոն ել նրան աչքերով ա-  
բեց, վորը նշանակում եր՝ «Ենց ենակն ասի, չսխալ-  
մեա» :

Աւնանց համառեց, հետո ուղեց հիշել, թէ իր հերը  
յի՞րը և նրա հորը լավություն արել: Զւիշեց: Իսկ Վա-  
սիլը մտածեց. «ուստատ Աւնանից մաղ պոկիելը՝ հեշտ ա»:

— Վասիլ, եսոր շարաթ ա, պնանք մաղաղին բաց  
անեմ, մի իրեսով թրաշնմ:

— Վասիլը պահա մի՞ իրես ունի, երկուան ա, — ա-  
սաց ուստատ Աւնանը:

«Լավ ուստացը հա՛» , — մտածեց նա:

Վարսավիրան կեղծ ծիծաղեց: Ծիծաղեցին և մյուս-  
ները:

Վասիլը վիրավորվածի պես յեղավ: Իսկ զերձակն  
ու Մաքաբեն իրար հետ վիճում եյին ինչ վոր բանի  
մտան:

Վասիլը պատմեց, թէ ինչպես մի անդամ հինգ ըն-  
կերով ուղեցնել են կտոք նստել, սակայն բժախնդիր կա-  
ռապանը յերկար սակարկելուց հետո հարցրել եւ. «թէ  
փեշաքասովոր եք, կտանեմ, թէ չե՞ չե» :

Վասիլը ժաղաց աչքերով, հետո նրանցից յուրա-  
քանչյուրը զնոց իր խանութը բանալու, յերբ մյուս-  
ներն արդեն բացվում եյին իրար հետեւից:

—————

Ամեն որ սմենավերջին հաճախորդը լինում եր ու  
ատամներով վոսկերիչ Սեղբակը: Նա միշտ խաղաղ ու  
լուս եր լինում: Նա ուշ եր դալիս միայն այն պատճա-  
ռով, վոր արախտիրում մարդ չլինի: Յերբ յերկու ըն-  
կեր վիճում եյին իրար հետ, Սեղբակը հեռանում եր  
նրանց շառից:

Յերբ դատարկվում եր տրախտիրը, իմերելը նըս-  
տում եր մի սեղանի առջև, նրա վրա դնում եր պլուխը  
և մտածում այն մասին, թե իրեն ի՞նչքան և փող հար-  
կավոր, վոր տրախտիրը մեծացնի, դարձնի միկիտան,  
ու մի «արգան» բերի, հետո ել ըղուզ ու զուռնա»:

Նա մտածում եր ու մտքերի հետ քնում:

Տրախտիրի սև պատերի մեկի վրայից Շոթա  
Խոռոչավելու յուղու նկարը, փետուրի դրիչը վասփա-  
խի ծայրը խրած, փոշու միջից ժպտացող դեմքով նա-  
յում եր սեղանի ամիսին քնած իմերելին:

### ՏՈՒՐՔԻ

Այն որը կարծես մի մեծ թիթնոց ընկած շուկայի  
խանութների վրա ու զբնօպաց ուժեղ: Կարծես փոքրիկ  
խանութներն որորվեցին:

Հետո հենվեցին իրար կողի՝ չթափվելու համար:  
Ու այդպես թեք ել մնացին: Շուկան խառնվեց իրար,  
փոքրիկ խանութները դժվարեցին ու մութ խոռոչների  
պես տիրուր նայեցին այն մեծ խանութի լայն դռներին,  
վիտրինաներին ու անթիվ հաճախորդներին:

Դա վասիլ Մառանջովի խանութի դիմացի նոր  
կոռպերաաիցն եր:

Մյուս որը Վասիլ պլուխը սովորականից յետ թե-  
քեց, ձեռքի փոքրիկ թուղթն ավելի հեռու բռնեց և վոչ-  
վոք չիմացավ՝ վախից արեց, զարմանքից, թե կարդա-  
լու համար: Թղթի վրայի տառերն ու թվերն ասեղների  
պես ծակեցին Վասիլի աշքերի թիբերը: Նրանք աստի-  
ճանաբար մեծացան-մեծացան ու հետո՝ կարծես կազմ-

վեցին բոտնցք և սպառնացան Վասիլին — Նալուշ : Նրա  
ուղեղի անըռոյն կտավի վրա մի վայրկյանում հաղար  
ժագնը անցան, թվերը խառնվեցին իրար . թվաց, թե  
խանութի պատերը փրկեցին ուսերին : Նրա աչքերում  
իրար խառնվեցին՝ փոքրիկ խանութները, մարդիկ,  
մայթերը : Դիմացից անցնող գյուղացու փափախը քա-  
ռասուատկվեց, մեծացավ; Հետո փոքրացավ : Խոկ այդ բո-  
լորի միջից պարզ ու վորոշ հսկա անխմների պիս մատե-  
նում և մեծանում եր զիմացի խանութը : Թվաց, թե ա-  
նիվները յեկան ու ծանր, շատ ծանր կանգնեցին խա-  
նութի և իր ուսերի վրա : Ու նրա ձեռքի ջղաճիկ մատ-  
ները ողի մեջ կարկառվելով իջան և քսվեցին հողին :

Վասիլին դդաց, վոր վաղն իրեն խանութի դռնից,  
մյոււների պիս, մի մեծ կողավեց պիտի կախվի, առա-  
վոտից մինչև գիշեր, դիշերից մինչև առավոտ : Վասիլը  
թավ հոնքերը դարսեց իրար վրա, դեմքը դժուհեց ու  
մաքում հայհոյեց ինչ վոր մեկին :

Խոկ Ռւնանը, նույն որը, թուղթը մատեցրեց մինչև  
քիթը և նրանով տողեր գծեց :

Ռւնանը խանութի շեմքում ձեռքերը կրծքին խա-  
չած, անորոշ հայացքով նայեց գյուղացոց վոտքերին .  
նա նրանց ծակ տրեխներում իր փրկության վոսկե դան-  
ծը կորցրեց : Գյուղացոց տրեխները տրորեցին փողոցի  
փոշոտ մայթերի վրա ընկած՝ Ռւնանի փշրված սիրաը :

Հետո հարևանները հուսահատ քայլերով մոտեցան  
միմյանց խանութին, տիսուր աչքերով նայեցին իրար ու  
իրենց վիշտը հայտնեցին մեկ-մեկոււ :

Այն որը վարսավիրա Դարչոն հաճախորդներ չու-  
ներ, ուստի չըջում եր խանութներն ու նոր լուրեր հա-  
վաքում :

Եկվ յերեկոյան խանութները փակելիս Դարչոն-

տեսավ նրանց՝ թե ինչպես յերկուսը իրար հետ տուրքի մասին դլխահակ խռով պնացին իրենց թաղի կողմը:

Հետեւյալ որը, վազ առավոտյան, սովորականի պես Դարչոն գնաց «Յեթիմ Գյուրջի» տրախտիրն ու իմերելին հայտնեց.

— Իմացել ե՞ս, Վասիլն ու Աւանը նալողներին գիմանում չեն, դուքանները կողպում են, իրենց թաղում հնդերովի յեն բաց անում—պուճուրը:

Իլիկոն չզարմացավ, վորովհետեւ նախ՝ նման մի դեպքն այդ խանութների թաղում սովորական դարձած յերնվույթ եր, իսկ յերկրորդ՝ ժամանակ չունեցավ զարմանալու, վորովհետեւ հաճախորդները սպասում էին իրեն:

— Ե՛, կացո՛, մի որ ել միր գլխին ա դալու, ասաց նա Դարչոյին ու շտապ հեռացալ:

Իլիկոն ցավեց՝ վոչ նրանց համար, այլ իրեն՝ վոր գլխավորն եր, իրենից յերկու մոտիկ «մուշտարի» պակսեց:

Յերբ հաճախորդները գնացին, իլիկոն նորից հարցընց Դարչոյին.

— Կացո՛, բայ չի՞ս իմանում եսո ինչի յինդիր դարձին:

— Վա՛, տեսիյա, կացո՛, կացո՛, կացո՛,—դիմի խոժ ետ դիտես, — Դարչոն կատակով տնազեց իլիկոյին: — Վոնց չեմ իմանում, Վասիլի խառյաթը դու խո դի՞տաս. Ունանի դլխին մի ոյին կրերի, բա՛ս:

— Հա՛, մաշ, դբուստիսո ասում:

Վարսավիրան դնաց, բացեց իր «մագտիմը», մաքրեց հայելու փոշին, հատակին ջուր ցանեց, հետո պարապությունից չձանձրանալու համար՝ թառ նվազեց.

նրա պազազուն սաղագիներին, բայց մաքում շարունակ մտածեց.

— Ա՛խը, Վասիլին ու Ռւնանը վո՞նց հն յալո գնալու:

Այո, այդպես եր մտածում, Վասիլ Մառանջովի տերմինով ասած՝ «տուտուց պարիկմախերը»: Սակայն Վասիլն ինչքան ել «տուտուց» անվաներ նրան, բայց և այնպես, «պերվոկառնի», «մայ» «պարիկմախերը» տեր Դարչոն, «Յեթիմ Դյուրջու» տըրախտիքիկ, ամեն ինչով հետաքրքրվող և ամեն յերեւոյթ իրեն շերեփով չափող իմերել իլիկոյի համար շատ հետաքրքիր մարդ եր, վարովհետեւ նրան ամեն որ նոր լուրեր եր հազորզում:

### „БЕДНЫЙ ЛАВОЧКА“

Թաղն արտասովոր անսքի մեջ եր:

Նրանց փոքրիկ խանութին իր մանր և բազմազան իրերով «ասիական կրապակի» նմուշ եր կենտրոնական տյու մեծ քաղաքի փոքրիկ թաղում:

Մի անուշ թթինի իր դիմիկոր կատարն եր հանել թաղի գորշ կտուրների արանքից ու թեքին նրանց խանութի վրա:

Անգործ մարդկանց խոսելու հետաքրքիր գեղաք եր դարձել Վասիլի և Ռւնանի «մարդադինը», ինչպես ասում եր նույն թաղի բնակիչ կոչկակար Սպիրիդոնը: Նրա խանութը Վասիլի և Ռւնանի «մարդապինի» փողոցի անկյունում եր գտնվում: Նրա փոքրիկ-փոքրիկ խանութը մի մեծ ցուցանակ ուներ — «Կոշկակարի արհեստանոց»: «Եիկ»: «Սպիրիդոն Յաղջյան»:

Բայց ավելի յեր զարմացրել կոշկակարին ու մի քանի ուրիշներին նրանց անշուք խանութի պատկառելի ցուցանակը: ո՞վ կարող եր յերեակայցել. Վասիլ:

իրա ձեռքով եր դրել թիթեղի քառակուսի կտորի կա-  
նաչ փոնի վրա սպիտակ տառերով «Бедный лавочник»  
„Բ. Մարանջօն“ և „Ս. Մեկինանց“.

Առաջին որվա առաջին հաճախորդը Սպիրիդոնը  
յեղավ, վորը դեռ խանութ չմտած՝ հարցրեց.

— Եղ ժեշտի կտորն ը՞նչացու յե :

Վասիլը հասկացավ նրան ու իրը թե լլսեց. իսկ  
Ունանը շատ զարմացավ, թե ի՞նչպես հարևան կոշկա-  
կարը գաղափար չունի ցուցանակի մասին։ Ունանը  
պարծեցավ, վոր ինքն անհամեմատ ավելի շատ բան  
դիմե, աշխարհ ու կյանք տեսած մարդ ե, քան թե  
Սպիրիդոնը և մոտավոր կերպով բացառքնց ցուցանա-  
կի նշանակությունը։

— Յես իտիկ գիտեմ, հարցնեմ կը անումն ի՞նչ ե :

— Վկիվիսկա :

— Եղա՞վ :

— Յա, վի վիս կտ' :

Սպիրիդոնն Ունանին ցույց տալու համար, թե  
ինքը նրանից լավ գիտե, բացատրեց, վոր «վիվիսկա»  
բառը հայկական ծագում ունի, բայց ընդունված ձևով  
կրօնատված ե, այսինքն նշանակում ե. «Վի՞վիսկա»  
կա։ Սպիրիդոնն Ունանին հավատացրեց, վոր այդպես  
է սովորել հայոց լեզվի ոռւսախոս ակնոցավոր վարժա-  
պետից, յերբ դեռ ինքը գավառական փոքրիկ քաղաքի  
ծխական գլուխոցի աշակերտ եր։

Ունանը հավատաց թե վոչ, Սպիրիդոնը չհասկա-  
ցավ։ Սակայն նկատեց, վոր Վասիլը շրթունքի ծերով  
ժպտաց։ Սպիրիդոնը քիչ լոեց, հետո հարցրեց Վասի-  
լին.

— Վիզիսկի վրա ը՞նչի յետ դրել ուսովը չկառ։  
իսթիկ պիտես ի՞նչ ըսել ե, յանի՝ «լավը չկա՛»։ Ե՛, ել  
ը՞նչի նեղենաս կը, չես հավատա, հարցու Ունանին։  
Իսկ Ունանը մտածում եր — ինչո՞ւ, ինչո՞ւ յե  
շնկերն իր աղջանունը ցուցանակի վրա դրել աղելի  
մանր տառերով։ Թեալետ այդ մեկն այնքան անհշան  
համարեց նա, վոր իր գժդոհությունը չհայանեց վա-  
սիլին։ Այդ մասին նա ասաց միայն կոչկակարին։

Սպիրիդոնը փոքրիկ իրանը յետ թեքած, ժամա-  
ցույցի հաստ շղթան ձախ կրծքից կախած, խոսում եր  
բարձր ու բարակ ձայնով, խանութի մեջտեղում հոլի  
պես ֆոռալով։

Շատախոս կոչկակարի հետ Ունանը ծանոթ եր վա-  
ղուց, իսկ ինքը շատ խոսել չեր սիրում։

— Եկել ես, մի բան ա՛ո, խերդ ու փողիդ ոանդը  
աենանք, սիփթեն դուն ես։ դատարի դուրս տալդ ի՞նչ-  
ներիո ա պետք։

— Վա՛հ, տնաշեններ, , տեսնիք կը հլը շնորհավո-  
րեմ կը, մեմ կեցեք, տեսնիմ ի՞նչ ունիք։ Մաղարիչը  
ձեր վրեն ե։ Վասիլ, թե բան դուրս գա, ելի քեզնեն,  
որթաղդ հորթի կաշի յե, — կատակի ձեռվ ասաց նա,  
ժպտալով Ունանի կողմը։ Ունանը թթված յերեսը  
ըրջեց, կշեռքի նժարների վրայի փոշին մաքրելով։  
Վասիլը, հարևան կոչկակարին հյուրասիրելու համար,  
դախլի տակից ողու շիշը հանեց, լցրեց առաջին ոյում-  
կան, մեկնեց Սպիրիդոնին, նա յել ճկույթ մատի ծայ-  
րով թեթև խփեց նրա բութից քիչ վերև։

— Սաղ եղնիք, առուտուր ու փող շատ ունենաք,  
դարդ ու նալոդ քիչ։

Սպիրիդոնն աչքերը խուփ, ձեռքը յերկարեց մի

մեն պանրի կտորի, Վասիլի ոչքերի հարցուկան հայցը ձեռքի պանրի հետ բարձրացավ մինչև նրա մղվող շրթերը:

— Սպասիր, Վասիլին իրա բանը լավ ա իմանում ես դիմու քթիցդ ու պնչիցդ կհանեմ, — մտքում խոսեց ինքն իրեն հետ:

Հետո լցրեց մյուսը՝ իրեն, յերրորդը՝ իրեն, նայեց ողու շին, խցանը սեղմեց, տարավ դրեց այնտեղ, վորակեղից վերցրել եր:

Ունանը զարմացավ, իրը թե չնկատեց, իրը թե զրաղված եր խանութի իրերը կարգի բերելով. բայց առաջին որը հենց նրա մեջ խոսեց ատելու նման մի բան դեսլի իր ընկերը:

— Վախեցավ խմեյի, վախեցավ պակսի: Են վելիսկեն մեկ, եղ ել երկու հլա. — այնուհետեւ Ունանը նման բաներ այնքան հաշվեց մատներով, վոր յերր յերկու ձեռքինն ել լրացան՝ հաշիվը կորցրեց:

Յերբ Վասիլին ողու շիշը սկահեց, Սպիրիդոնը հարցրեց.

— Ուստա Ունան, փեշակիդ վերջ տվիր, հլը ըսենք լա՛վ, հասկնամ կը, հըրը ես որ չես խմե, շատ կզարմանամ:

— Զարմացի՛ր, զարմացիր, Սպիրիդոն, քեզ ո՞վ ո բան ասում, համա յես ել վոր շատ եմ զարմանում մեր Վասիլի արարմունքի վրա, դրանում ի՞նչ կասեմ:

— Փի՛:

— Հը՛մ:

— Վայ, Ունան ջան, իմ արևը, քո արևը, Մարուշիս, Վավիկիս արևը վկա, վոր սրտումս փիս բան չկա: Ես մի «պոլը» դոխտուրն ասեց, առել եմ ռեմա-

արդմիս համար : Գանձա բաւեց բաներ ել ետ մատծո՞ւմ , վեկալ , կուզես գիփի խմիր :

— Եա՛վ , լավ , ջանըմ , խոռք եղածն ի՞նչ ե ոք , թարդ տվեք , որթազ եք , յուշ զնացեք , առևտուրներդ թող լավ եղնի , ետ մեկը հեչ ե : Մենակ իմ առածո ձեր երկուսի տունը կպահե :

Կոշկակտրն ասաց , վոր որական առար ոռուրլու «պրովիվյա» յե իր խանութի փոքրիկ աշակերտի ձեռքով ուղարկում տուն :

Ճի՞շտ եր . բայց յեթե աշակերտն իմանար , պիտի ամոթով ժպատի ուստի յերեսին :

— Վասիլ , կաշեմ որ չեքմեքդ հնցել են , ջուխոմ հնպես կարեմ , վոր վոտքերուդ վրա թափած եղնի :

— Հալա յուշ կտանեն , — նայեց սազողներին :

— Ծը' , թե փողի հմար մտածես կը՝ ամոթ ե , քիչ-քիչ կուտաս , յա թե չե՝ մանգր-մունդր բան տանիմ կը ու քվիթ կեղնինք : Որթպիդ որ մնա , քեզի չարուխ կհաղցնե . խա՛ , խա՛ , խի՛ , խի՛ . . . . ժպտացող աշքերից մեկը խվեց :

Վասիլը նորից նայեց վոտքերին ու մտածեց :

Սպիրիդոնի աշակերտը յեկավ :

— Ուստա՛ , մուշտարի յեկավ :

Սպիրիդոնն ընդհատեց չեքմոց խոսակցությունը .

— Ծո՛ , լազիրակ , թիքանն ո՞ւմ թողիր :

Աշակերտն ուստի հին , մեծ ուսերով , կասկայա ու կարկատած խալաթը հագին , մաշված վոտնաման ները վոտքերին , խոշոր քայլերով վաղեց մայթի վրա :

Սպիրիդոնը գնաց մինչև դուռը , նորից յետ դարձավ .

— Կայրաստի կիլոն ի՞նչը ե :

Ունանը պատասխանեց :

— Կարտքի՞նը :

— Յա՛ր, Սպիրիդոն, տա՛ր, մեր առաջի ու թագածուշտարին ես, սիփիթեղ տեսնանք :

— Հը՛մ :

— Համ եժան ա՛, համ թաղա՛, համ լավը :

— Գիտեմ. պանրի կիլոն քա՞նիս ե :

Գինը լսեց :

— Հը՛մ, առմուշկեմ կշռես, աշենք : Յա՛, թուղթիում չեմ առնի, տակը բարակ դի :

Պանիրը վերցրեց :

— Քովս խուրդա չունիմ, աշկերտի ձեռքով մե քիչմ յետե զրկեմ կը : Յա՛, կուղես, իստեղ դրե չեք-մոց հաշվին :

Գնալիս զարմացած նայեց խանութի շեմքին :

— Վա՛յ կը կը կը կը կը կը կը կը կը :

Վասիլն ու Ռւնանը փողոց յելան, կարծելով թե մեկը հարվածեց կոչկակարին :

— Ա՛յ մարդիկ, դուք խամ խո չե՞ք, հբը չիդի՞ք, որ շեմքի վրա նալ պիտի մխեք :

— Քո տունը ծակվի, ե՞տ եր, — զարմացավ Ռւնանը :

— Մոռացել ենք. առա խե՞լք ա մնուժ, ետ մինը վոչինչ, դուն չեքմոց բանը չմոռանաս :

— Զե՛, չե՛, — ասելով հեռացավ Սպիրիդոնն ու ձանապարհին մտածեց .

— Լավ կըեղիս բացի, թահո՛ւ, մեռնի, չեքմեքը նոր կուտամ, որ վերին աշխարհ երթլուս ճամբեն թաղա-թաղա հաղնի :

Խանութ հասնելուն պես հանկարծակիի յեկավ, յերբ «մուշտարին» դնաց, հայհոյեց մեկին.

— Ենքան դործ չումինք՝ ինչքան նալոք :

Ու կոչկակարը սրտի մաղձը թափեց վոքքիկ աշակերտի վրա :

### Ո Դ. Ի

— Բարի լուս, ուստա կուպեց :

Ունանը բեղերի տակ ո՞ւմ հայհոյեց, Ապիրիդոնը չլսեց :

— Հը՛, թայդ ո՞ւր ե՛ : Ապրանքի թե՛ առաւառուրի յի գնացել : Լավ նպատակ ե՛ :

Ապիրիդոնը վրդովվեց .

— Մարդ եղքան ել ժա՞տ եղնի . են որվա ըախին ի՞նչ եր որ, մեծ բանմ եր, վախեցավ խմեյինք . պակ-սեր՝ կառնեյինք :

— Նավս ա, համա դրուստ խոսող ա, քեվս գալիս ա :

Ապիրիդոնը պատմեց, վոր ինքը «լոթի ողամարդ ե» . չի սիրում եղպես «զիզիլ-պիզիլ բաներ» : Հետո զանազան անուններ թվեց, թե հարցրեք նրանց, վոր ինքը մասնակցել ու թամադա յե յեղել «այսինչ-այնինչ նշանավոր քեֆերին» : Ասաց, վոր «տասերկու ֆայթոնով ե քեֆ արել» . վողոցից անցնող մարդիկ նկատել ու զարմացել են, թե ինչպես դլխարկը մի կառքում ե զրել, չեքմեքը՝ մյուսում, յերրորդում արծաթե վուկեջրած գոտիկը, չորրորդում «բաղդադի խաս մարմեն», մյուսում մի ուրիշ իր : Իհարկե, այդ քոլորը վոչ-վոք չեր տեսել :

Սիալված չեյին այն ծանոթ մարդիկ, վորոնց թը-վում և Վասէլն ու Ունանը, վոր այդ «սապոժնիկը» «փթերով փշող ե», ինչպես ասում եր վերջինը :

— Եսոր քիչմ պահմելյա յեմ, երեկ քեփս Հնդըւ-  
տանի ծովեն կուզար:

Դրպանից հանեց ողու փոքրիկ շիշը, փխեց բռին,  
խցանը դուրս թռավ:

— Կաշե՞ս, Ունա՞ն, ես կառավարոթյունն ել որս  
կա, մե որմ խոր պես... հըս...

Ցույց տվեց ողու շիշը:

— Եսո խոր հոգին կրծեմ, խիկ որա կա, խիլը  
մեռոն ե: Վերցրու խմենք՝ դիտես ո՞ւմ կենացը,--  
շրթերը մոտեցրեց Ունանի ականջին, շատ ցածր ձայ-  
նով. — Տրոցկո՛ւ, ենիկ որա կար՝ մեր թարաֆն եր,--  
հետո գլուխը բարձրացրեց, լրեց, նայեց շատ հեռուն:

Խմեցին, մի-մի բաժակ ել լցրեց:

— Ունա՞ն, Փայթոնն որա կա', Փայթոն ե, չորս  
հատ թաքյառ ունի, ամեն մե թաքյառը Փոռա կը, ա-  
մեն մե Փոռալը նպատակ ունի. ես ել խմենք՝ եղ  
Փայթոնի թաքյառի Փոռալու նպատակի կենացը:

Շատերը պատմում եյին, վոր կոշկակար Սպիրի-  
դոնը մեծ վարպետ եր անեկդոտների, նրա հետ վոչ-  
վոք չեր կարող մրցել և մեծ համբավ եր վայելում քա-  
ղաքի արհեստավորների շրջաններում ու ամեն մի սր-  
բամիտ դարձվածք նրան եյին վերագրում:

Յերբ ողին վերջացավ, Սպիրիդոնը նորից աչքն  
ընկած ուտելիքների կիլոյի գինը հարցրեց:

Ունանը պատասխանեց:

— Ախապեր, ձեզնեն հեջ առուտուք ենել չի եղնի,  
հոգի խո չե՞ք ծախե. ելի քու խաթրիդ հմար ե, որտ  
քուքամ իստեղ:

— Ախը հմի նալոգը մարդ ա խեղղում. հոցը թամ-  
դացել ա; նավթը թանգ ա, շաքարը չի...

— Յա , լնչի՞ , յես չխղե՞մ . զորթ ե , խոստեկեր չեմ :  
Հացակեր եմ . խոսքը կըսէ՝ գորեն հաց չեմ կերե , բըմ  
ամբարը խո պառկել եմ : Հմը ձեղնեն , հե՞լ . . .

— Նալոդը հրես պայտ . . .

— Յավա՞շ :

— Միրնի ռեժիմի վախտը ըսենց ե՞ր . . . հեյ դիդի  
հա՞ , ի՞նչ ժամանակ կորավ :

— Յավա՞շ , կըսեմ :

Սպիրիդոնը ձեռքը տարավ ծոցի դրականը , հանեց  
մի յերկար թերթ ու կարգաց , վորի վրա դրված ելին  
կարեւը և յերկրորդական իրերի դները՝ համեմատոն  
տուաջ ու հիմա :

Խմերել , վո՞րտեղ Եյիր , ականջդ լսեր :

Սպիրիդոնն սկսեց վիճել : Ամեն տեղ նա իր դըմ-  
պանից ոզնության եր կանչում այն ցուցակին , վորի  
թվերը վորտեղից եր հայաքել , սատանան դիտեր  
ժիայն :

Նորից մի ասմուշկա պանիր ուզեց :

Ունանը կշուց զգուշությամբ , փաթաթեց «զագե-  
թի» թղթի մեջ , նորից կշուց :

— Թող հալալ ըլի :

Նորից վերցրեց , նորից կշուց :

— Ծը՞ , լավ , ուստա Ունան , վնաս չունի , թող մե-  
րանմ ել թեթե եղնի . իսոր եղածն ի՞նչ ե որ , ամոթ ե :

Վերցրեց , մեջքը լրջեց Ունանին :

Նրա ձեռքը պանիրը տալուց հետո ողում յերկա-  
րած մնաց : Յերկարած ձեռքը դիտեր , վոր մատներն  
ինչ վոր բան են շփելու , բայց քանի վոր չշփեցին , Ու-  
նանն ամոթով հարցրեց .

— Ուստա Սպիրիդոն , բա փո՞րդը :

Սպիրիոնի քայլերը կիսատ մնացին :

— Դրե Վասիլի չեքմոց հաշվին :

— Կոնց կըլի, դուքանը թաղա յենք բաց տրել, նիս-  
յեն նալողի պես մարդու մեջք ա կոտրում : Վասիլին ա-  
ռեց նիսյա չտաս, չեմ իմանում, նա գիղա՛ ...

— Դե՛, յես ել ինոր հետ եմ դործ բռնել, քեզի  
հետ բան չունիմ, ախաղեր ջան, ինքը լավ դիտե :

— Ի՞նչ դործ :

— Չեքմեք կարեմ կը :

— Իմ ի՞նչ բանն ու :

Նու նայեց Ունանի կոշիկներին :

— Քեզի հմար ել կկարեմ :

Սպիրիոնը զիաց :

Ունանն մտքում վորոշում եր խանութից Սպիրի-  
ոնին «ապրանք» ել բաց չթողնել : Սակայն Սպիրիոն-  
ից ձեւը գիտեր, ամեն գալում ծոցի գրպանից անձա-  
ռամսի պես հանում եր ողու շիշն ու մի քիչ հյուրասի-  
րում Ունանին :

Ունանն ամեն որ Սպիրիոնի ատրած պանրի հաշի-  
վը չկորցնելու համար, դանակի ծայրով՝ մի խաղ եր  
քաշում դռան վրա : Խաղերն ինչքան շատուցան, այն-  
քան Ունանի կրունեները բարձրացան գետնից : Որեղի  
ինչքա՞ն անցան ու խաղի հետքեր թողին դռան վրա :

— Ես ի՞նչ ցավ ե . երկու քարի արևն ընկա :  
Վո՞յց անեմ, Վասիլը չիմանա :

Կիբովք, ՈՒՆԱՆԻ ԴԱՆԱԿԸ ՅԵՎ ՍՊԻՐԻՈՆԻ ՅԵՐԳԸ

Վասիլը չգիտեր, վոր կոշկակար Սպիրիոնն իրեն  
համար «չեքմեք ի կարում» : Ամեն որ նա Ունանի հետ-  
քաց եր անում « Եօնակա » խանութի փեղկե-

րը, մնում եր մի քիչ ու զնում շուկա՝ իր «Ճեռքի առևտուրն» անելու։ Յերբ Վասիլը զնում եր շուկա, զալիս եր նրա կինը— Մարտուշը : Կոշկակարն առում եր, վոր դա անվատահության նշան ե :

Մի որ, յերբ Մարտուշը յեկավ, Սպիրիդոնն շատապ դորս յելավ խանութից :

— Ի՞նչ եր ուզում, — կատկածոտ հարցրեց Մարտուշը և վորովհետեւ կոված եր նրա կնոջ հետ, այդ պատճառով չեր հարգում և Սպիրիդոնին : Իսկ այդ բոլորը Սպիրիդոնը դիտեր :

Ունանին թվաց թե՛ Մարտուշն ամեն ինչ տեսավ ու հասկացավ : Նա ամոթի պես բան դդաց, ուզեց զոր բոլեներն արագ-արագ անցնեն :

Հանկարծ ինքն ել չխմացավ՝ թե ինչու .

— Վոչի՞նչ. նիսյա տարավ :

— Քա վո՞նց, ը՞նչի ավիր :

— Վասիլի հմար չեքմեք ա կարում :

— Վասիլի հմար չեքմեք ա կարո՞ւմ, բաս նա դի՞-  
գա :

— Վոնց չե :

Մարտուշն Ունանի ձեռքի դանակը տեսավ :

— Բա մուշտարու վրա դանակ ը՞նչի եցիր քա-  
շում, չլի իռիվ ըլավ :

— Զե՞ւ. ես հենց ընենց, նիսյեն եմ նշան անում :

Հետո խաղերը տեսավ :

— Եա՛, ես դիմի նիսյա՞յ յա :

Ունանը վոչինչ չասաց :

— Վասիլն իմանո՞ւմ ա, վոր նա նիսյա յա տա-  
նում :

— Վասիլը :

Աւնանը ոլուկին որորեց .

— Բա ը՞նչի յես տալիս , իժում վո՞նց կըլի : Ամեն ժեկը վոր դա ու ասի , դու խո չպիտի բոլ-բոլ ապրանք բաց թողաս , քա՞ . դուքանը կոտր խո չե՞ս դցելու :

Լոռություն :

Մարուշը նստեց դախլի հետեւը , իսկ Ունանը խանութի շեմքին ու պարապությունից չձանձրանալու համար արևածաղկի հունտը ճոճուացրեց շրթերին :

Մարուշը միշտ նայում եր խազերին , ուզում եր հաշվել , բայց խառնվում եյին :

— Խալիսին նիսյա ապրանք ա բաց թողնում հերիք չի , ծանր ել կըռում ա ու հլա ետքան ել ուտում , — մասածում եր Մարուշը :

Զհամբերեց :

— Ունան , ընենց ես ժաժ գալիս , վո՞նց վոր մենակ քո հոր դուքանն ըլի . կարդը ըտենց չի :

— Մարուշ , հերիք ա խոսես , համբերությունից դուրս եմ գալիս : Յես գդակս քո առջև գնող ու վրայից թռչողը չեմ , լավ դիտենաս :

— Քա , սրան մի . ասածդ ի՞նչ ա :

— Են ա , վոր դու քո տեղում կաց . ավել-պակաս մի խոսա . դեմդ տղամարդ ու կանզնած :

Մարուշը յերադի նման հիշեց իր հին , շատ հին կոփվը Ունանի կնոջ հետ :

— Մի հլա մտի՛կ , կնիկարմատի հետ վոնց ա խոսում , կասենաս խարշենում ըլի . ը՞նչի , յես իմ տեղումը չե՞մ , ուզում եյիր . վոր քո կնկա պես լիրբ ըլեյի , սիրեկաններ սլահեյի , հա՞ :

— Լիրբը դուն ես :

— Քա՞ , լիրբն ել ես ու գողն ել . մեկն ըլեր սրան տեսար , թե վոնց ա կնիկարմատին անպատճում :

Աւանակը վոչինչ չտաաց , միտյն դոզացող բեմերի  
առկից թքեց ու ասլա ջղայնորեն մատերը կեկեց :

Մի յերեխտ յեկավ :

— Մարուշ տոտա , Վասիլիկին տղերքը ծեծել են ,  
գուշում լաց ու ըլում :

— Ո՞վ ծեծեց խեղճ երեխիս , խփող , ձեռքդ կո-  
տըրվեր :

Մարուշը դուրս յեկավ դախլի հետեւից և պարկի  
մեջ քիշմիջ , կանֆետ ու միլու լցընց — տանեմ տամ  
լացը կտրի : Մարուշը մի անշամ ել իր մանր կկոցվող  
աչքերով նայեց Ռւնանին ու դնաց : Ռւնանը վորոշնց ,  
յերբ Վասիլը գտ , ամեն ինչ , այս՝ ամեն ինչ վեր-  
ջացնի :

Վասիլը յեկավ , Ռւնանը դեռ վոչինչ չտաավ , հո-  
կառակը , մի տեսակ կարծես մոռացավ :

Ռւնանը դնաց ճաշելու :

Նա տանն իրեն կնոջ պառկած տեսավ , մի թաց  
կտոր ճակատին ու թմրած աչքերից մեկի տակը կտպ-  
տած : Հարեան կանայք դեռ հավաքված եյին նրա մահ-  
ճակալի շուրջը :

Կինը պատմեց , վոր Մարուշը պատի վերևից կեղ-  
սոտ ջուր և թափել իրենց դուռը . դրս համար ինքն  
խռոնել ե...

Ռւնանն ել չլսեց , լուռ դուրս յեկավ ու դուռը նրա  
հետեւից հիվանդ կնոջ պես ճուաց :

---

Մարուշը նորից խանութ յեկավ . լուռ նատեց դախ-  
ավ հետեւը :

Վասիլը տխուր թր :

Մարուշն հանկարծ բացեց :

Վասիլը զարժացավ :

Ու Մարուշն ամեն ինչ պատմեց :

Ծույց տվեց գոռան վրայի խաղեցը : Հեռա քթէ  
ծայրի քերծվածը :

— Հրես, ես ել նրա բաց բերան կնիկը թամամեց :

Աակայն փոքրիկ հայելին տեսավ, վոր Մարուշն  
ինքն իր քթի ծայրը քերծեց կատվի սուր մագիլի ծայ-  
րով :

Վասիլը մինչեւ վերջ լուռ լսեց ու վոչինչ չասաց,  
և իայն զարժացավ ...

Ունանը յեկավ, կանգնեց խանութի շեմքին :

— Մի հլա ներս համեցիր, Ուստա Ունան :

— Ի՞նչ կա, ասա, ըսինց ել լավ ա, — ու խեթ-  
խեթ նայեց Մարուշին :

— Ես ընչեր եմ իմանում :

— Խալիը թող ասի :

— Վնց թե ...

Յերկուաը վիճեցին յերկար :

Նրանց վեճն ավելի տաքացավ և յեթե Մարուշի  
հղոտոցի վրա հարևանները չհավաքվեցին միջամտե-  
լու, Վասիլին Ունանի գլուխը ճմերուկի պես պիտի կի-  
սեր :

Այդպես եր ասում նա հավաքվածներին :

Այն յերեկո նրանք խանութից ուշ տուն գնացին :  
Խանութի միայն փեղկերն եյին փակել, իսկ ներսում  
բաժանվում եյին իրարից : Խանութում Վասիլից ու  
Ունանից ջոկ ուրիշ ո՞վ կար՝ չիմացվեց, վորովհետեւ  
փեղկերը փակված եյին :

Մարուշը գիշերվա տեսան յերազը կապում եր օլա-

առահած գեղարքի հետ : Յեզ այն գիշեր ել, վոր նա յերադ չեր տեսել, ինչ վոր բան եր Հարինում՝ կապելով այն խանութիւն դեղքի հետ :

Վասիլը մահճակալին մեջքի վրա պառկած, աչքերն անորոշ մի կետի՝ մտածում եր ինչ վոր բանի ժամկին :

Մարտուչն անմիերջ խոսում եր : Յել շատ խոսելուց՝ թմրել եր ու քնել :

Մարտուչը խոսում եր ելի, բայց արդեն քնի մեջ .

— Դուքսնը կողացեցի՞ր . . . դախլիցը փողերը վերցրի՞ր . . . կուխնու դուռը բաց մի թողա . . . շկաֆը պինդ ծածկիր, կատուն չմտնի . . . Ունան, ծանր ա, թեթև կշռիր . . . ավելը դուռն հետեւից շտանեն . . . մարդիս չեթմեքը կարեցի՞ր . . . սեմիչկա քիչ կեր . . .

— Մարուչ, համա ինչ ըրավ, իմ սրտովն ա . խոսքն ասում ա թե՝ սոված գելից թեկուղ մի մաղ, ետ ել մհերան ա, լավ գիտենաս : Յես հենց պրիչնաս եյի ման գալիս : Զե՞, լավ ըլավ : Զերը դատարկ, աչքը կապի՝ ճամբու գրի : Հմի ընենց եալուսա յա, վոր փող ըլած տեղը՝ տերտերի միրուքը ժամի միջին կթրաշես :

Յերբ Վասիլն իր մի այտի վրա զդաց Մարտուչի տաք շնչառությունը, հանկարծակիի յեկավ : Երջվեց մյուս կողքին ու քնեց շատ խորը և հանգիստ :

Ունանը քայլում եր ~~և~~ քի հետին ու քնած թաղի փողոցներից մեկով : Քայլում եր. նրա վոտքերի որոշվում եյին, մտքերը տատանվում : Ունանը Վասիլի վոխը պահեց սրտումն ու իր վրեժն ուղեց լուծել Ապիքիդոնից :

Լուսինը բարձրանում եր տանիքների ուսերից : Մի

ասսոյ ընկավ տանիքների հետեւ։ Հետո մի ռումեն  
շարժվեց փողոցի փոշոտ ու մաշված քարերի վրա։

Սպիրիդոնի ստվերն եր։

Յեվ Ունանը տեսավ, թե ինչպես Սպիրիդոնն ո-  
րորվում եր մայթերի վրա, ուսը հենում պատերին,  
փաթաթվում ծառերին։

Սպիրիդոնն Ունանին չեր տեսել ու յերդում եր։

Լուսին ջա՞ն, դեմքդ ը՞նչի յես բացել,

Դուն ել ես հարբել, այ զու անամոթ։

Մարդկանցը խափիր, հեռացիր դուն ել,

Ամանչիր ընձննեն, վաղուցվան ծանոթ։

Սպիրիդոնը մտածում եր Ունանի մասին։ Ունանը  
կանդնեց, նայեց Սպիրիդոնի հետեւց։ Ունանի բե-  
տերը գողացին, առելու պես մի բան խոսեց։ սիրու  
թալրտաց կրծքի տակ ու նորից նա լսեց։

Թող վոր ըսեն, թե ուրախ եմ ապրել,

Թող վոր ըսեն, թե շատ եմ չարշարվել,

Շատերին սիրել, շատերին ատել,

Բայց գինուց բնավ չեմ հրաժարվել։

Ունանը դրապանները խառնեց, հետո նրա դանակի  
որածայր լեզուն պապղաց լուսնի տակ։ Ունանն արագ  
քայլերով մտեցավ Սպիրիդոնին, բայց նա դարբասից  
ներս մտավ։ Սպիրիդոնը փակեց գարբասն ու մտածեց  
Ունանի մասին։ Ունանը կանչնեց փակված դարբասի  
առջեւ։ լսեց նրա հեռացող քայլերի ճայնի ու մեղմա-  
ցող յերդը։

... Շատերին սիրել, շատերին ատել...

Հայաթի ներսը մի դուռ ճոռաց, իսկ Ունանը փակ-  
ված դարբասի առջեւ կանդնած մնաց։

## ՄԵՆԱՎՈՐ ԹԹԵՆԻՆ

Հետեւյալ որը, Վասիլը խանութիւ ցուցանակին Շւնանի աղղանունի վրա կազբեց սպիտակ ու մաքուր թղթի մի կտոր :

Ու ամեն որ, ամեն որիս ոկտ առավոտ կանուխ, Վասիլը բաց եր անում խանութիւ փեղկերը, ջրում հատակին ու մայթը, մաքրում փոշին ու իրերը կարդի բերում : Հանում եր ողու «պոլու», «մի քիչ թաթախվում», ինչպես ինքն եր տառմ :

Վասիլը շուկա ել չեր զնում՝ առեւրի . նստում եր գտիլի հետեւ, ծույլ-ծույլ նայում մայթերի վրայով անցնող-դարձող մարդկանց քայլերին, կոշիկներին և կարծես մտքում գրադեր բռնում —ա'յ, ես մեկն անցավ, համա են մյուսն անողայման կդա:

Յեվ յեթե չելին դալիս, նա նորից հանում եր միուց դավթարը» և նրա խամբած ու կարմիր զժերով յերեսների վրա մատիտի ծայրը կրծելով, ինչ վոր բան եր զըրում . անհարթ թվերը կըրացնում, մեծացնում, հետո շատ զգուշ լուցկու ամեն մի տուփից զողանում եր չորսական ձողիկ, ծխախոտից մի-մի հատ, լցնում ուրիշ տուփերի մեջ ու մյուսների հետ դարսում թարեքում : Դե՞, հետո՝ ո՞վ պիտի իմանար, վոր ասեղից, գնդասեղից մի հատ պակաս եր : Իսկ կանաչու դաստանների կիսելն ավելի հաջող եր : Չե՞ վոր Վասիլի ասելով «խալիսը զալբացել ե» : Չե՞ վոր իրեն «ըտենց են տալիս, Վլաստի սարքածն ա» : Վասիլի ասելով, այդ «Վլաստը» մինչեւ իսկ այրելու մոմը կիսում եր մեջտեղից :

Մարուշը թեյի փոքրիկ ամանները ձեռին և թաշկինակում հաց ու պանիր կտպած, յերեխայի հետ գտ-

Այս եր խանութիւնը յել նորից երերը կարգի յեր բերում :

Ու ամեն որ, հենց վոր Մարուշը և յերեխան դասիս եյին խանութիւն, Վասիլը դնում եր կոշկակար Սպիրիդոնի մոտ հնիսյոց, ան չեքմոց հաշիմը մաքրելուց Բայց նախքան դնալը Մարուշին ասում եր .

— Դուքնին լավ նայիր :

Մարուշը նստում եր դախիլի հետեւ ու պարապ չմնալու համար, դուշպա յեր գործում թելի կլոր կծիկը դուքը դրած, բարակ, չոր մատներով մալթուլե ձողերն արագ խաղացնելով : Հետո նա շուտ-շուտ քիչի վրայի ակնոցի սուշերն ամրացնում եր ականջների հետեւը :

Մարուշն որվա մեծ մասը լինում եր դախիլի հետեւ նստած . խանութիւնի մի անկյունում թմրեցուցիչ ճայինով դռուում եր «Աղբիմուսը», վորի վրա յեփկում եր ճաշը, իսկ հետո՝ յերեկոյան թեյը :

Գալիս եր մի հաճախորդ ու ցանկացած իրն եր հարցնում .

— Վո՞ւյ, քա՞ , վոնց չունենք, մենք ել վոր չունենանք, բա ել ո՞վ ա ունենալու, — նստած տեղը վիզը ծուած, մի ապակին ճեղքված ակնոցի վրայից նույիլով, ասում եր նա:

— Ի՞նչ արժե :

Պատասխանում եր :

— Ես վոնց ե ; քո դներն ուրիշ ե , Վասիլին՝ ուրիշ, — դժգոհում եր դնորդը :

— Զե՞ , քա՞ , չարդ տանեմ, մեզ մոտ ափթեցի հանդի յա, դները հալալ են . հակառակ ել չեմ, եղերա ամել ուղեցի, կնիկարմատ եմ, յես հմի վո՞ր մինը միտու

պահեմ : Դինը դուն կղիղենաս , տառ , քեղանից խոհ  
ավել չենք վեր ունի :

Վասիլը դնում եր կոշկակար Սպիրիունի մոտ ,  
բայց նրա «Շիկ» խանութը փակ եր լինում : Նա կար-  
ծում եր , թե Սպիրիունը հիվանդ կլինի , վորոշում եր  
գնալ ու կանգնել հիվանդի գլխի վերե , հիշեցնել  
որաբոքի մասին , վոր կոշկակարը մնունելիս նիսյեզը՝  
«Հանգերձյալ աշխարհ» շտանի : Բայց Վասիլն ինքն էլ  
չդիտեր , թե ինչո՞ւ հետաձգում եր միշտ :

Մի որ ել Վասիլը շատ զարմացավ , յերբ տեսավ ,  
վոր «Շիկ» խանութի ցուցանակը չկա : Կարծեց , թե  
կոշկակարն արդեն մեռել է , բայց շատ զարմացավ .  
Ի՞նչպես մեռավ նա , վոր վոչավոք չիմացավ :

Հարցրեց դանապան Կուլքրաթին , իմացավ , վոր  
Սպիրիունը տուրքերին չըկնմանալով , փակել և խա-  
նութն ու աշխատում և տանը :

Սպիրիունը հանկարծ ծովից անկյունից : Նա մի  
քանի խոշոր կապոց ուներ ձեռքին ու ուսին : Յերբ նա  
Վասիլի հետ իրենց տան կողմն ողում պարզված կուղ-  
րաթի ձեռքը տեսավ , ամեն ինչ հառկացավ , արագ յիտ  
շրջվեց :

Սպիրիունի ուսի թեռը նեղում եր ու մազոտ քթի  
ծայրեց քրտինք եր կաթում փողոցի քարերի վրա ,  
բայց նա զնում եր արագ , փախչող քայլերով :

Վասիլը շտեսավ Սպիրիունին ու գնաց նրանց  
առանձ :

Դուռը բացվեց , Վասիլն իր յուղուա զեմքին զդաց  
ներքնահարկի փոքրիկ ու քրտնած սենյակի ներսից միը-  
շող խօնավ , տաք գուլորշու և ճենճի անախարժ հոտը ,

վորոնք իրեն հետ դուրս բերեց գունատ, դեղին աչքերով և սապնոտ ձեռքերով՝ Սպիրիոնի կինը:

Վասիլը հիշեցրեց չեքմոց ու պարտքի մասին:

— Ետիկ իմ գործը չե, մարդու գիտե, — ասաց կինը:

Սպիրիոնը տանը կարած կոչիկները կիրակի որեւը տանում եր շուկա վաճառելու և հեռու գյուղերը՝ զանազան մթերքների հետ փոխանակելու:

— Հա՛, վայ թե շատ ուշ դա, — ասաց կինը, յերբ Վասիլը դայրացած հեռացավ հայաթից:

Երբ արեի լիմոնադույն ճառագայթներն ընկնում եյին խանութի շեմքին, Վասիլը նստում եր փողոցի մայթի ափին:

Մարուշը յերեխայի ձեռքից բռնած գնում եր «հարեւան կանանց հետ մասլահաթի»:

Թաղի փոքրիկ յերեխաները հավաքվում եյին Վասիլի խանութի շուրջը, կամ շարացնում եյին նրան, կամ թե մեկը հեռվից հելլինել դալիս եր ու վախեցնում.

— Վասիլ ձիյա, մի պորտֆելով մարդ ձեր տուն գընաց, տուեն կանչում ե:

— Վասիլ ձիյա, երեխեղ բալկոնից վեր ընկայ...

— Հա՞... յե՞րբ... հմի... ոքուստ... ընչի հմար...

Թաղի յերեխաները, լավ, շատ լավ գիտեյին, թե ի՞նչպես ենա շփոթվում, յերբ լսում ե պորտֆելի անունը և վորքա՞ն հոգատար ե դեպի իր փոքրիկ տղան:

Մի ուրիշ յերեխա խանութից միրդ եր «թոցնում» ժյուսները ծիծաղելով վազում եյին նրա հետեւից և

պահվում եյին ծուռումում փողոցների աների դար-  
բասներից մեկում :

Վասիլն զգում եր, վոր իրեն խարեցին, հայտնում  
եր յերեխաներին ու քարեր շարտում նրանց հետեւից :

— Տո՛, յես ձեր հն... մեղտ քնդ, մեղա, յես ձեր  
տոլն ե՞մ, լածիրակնե՛ր :

Յերբ արեւ նեղ փողոցներից բարձրանում եր տը-  
ների բարձր սղատերին ու կտուրներին, Վասիլի խա-  
նութիւն հաճախորդները շատանում եյին :

Թթենու ծայրից ու կտուրներից հեռանում եր ու-  
ղեւը, թանձր մթնշաղը փովում եր թաղի տների ու փո-  
ղոցների վրա : Թթենին մոխրագույն զղեստ եր հազ-  
նում և խանութին իջած սվավում կամաց : Կուղրաթը  
սանդուխն ուսին դրած, ստվերի նման որորվում եր  
փողոցում : Հետո Մարուշը վերադառնում եր հարեան  
կանանց մոտից ու Վասիլը փակում եր խանութը, սր-  
վա վաստակից դժուհ և յերեխան առաջներն առած,  
նրանք կողք-կողքի քայլերով գնում եյին տուն :

Կուղրաթն ուսի սանդուխը հենում եր պատին,  
բարձրանում վեր, վառում փոքրիկ, սևացած տաղակի-  
ներով ֆանարը, և նրա կողքից լույսի մի աղոտ շերտ  
ընկնում եր փոքրիկ ու կանաչ ցուցանակին, վորի վրա-  
յի տառերը կարծես հոգնածությունից խառնվել եյին  
երար ու թեք ընկել, հորանջում՝ այն հին թաղի, փոք-  
րիկ խանութի վրա :

Ամեն յերեկո այլողես փակվում եր այն թաղի «Եօ-  
զան լավուց» մանրավաճառի խանութը, վորի առոր-  
յան նույն եր ամեն որ, յեթե չհիշվեր վերջին մի  
գեազը :

Վասիլն ամեն մի վայրկյան, իր ամեն մի քայլաւ-  
փոխումին նույնն եր մտածում ու տեսնում աչքերի  
առջեւ և մահասարսուր յերկյուղ դում։ Նա գիտեր  
հաստատ, վոր գալու յե նա, սպանալու իրեն և փոք-  
րիկ խանութին։ Աւ Վասիլն ամեն որ սպասում եր նրա  
մոտենալուն։

Յեվ նա Վասիլի սպասածի ունս՝ յեկավ մի առա-  
վուտ, յերբ ինքը թերթում եր նիսյոց դավթարը։

Յերեկոյան Մարուշը տուն շուտ գնաց, Վասիլը  
խանութը փակեց։

Կուդրաթը յեկավ, խանութի ֆանարը վառեց։

Վասիլը ձեռքերը մեջքին դարսած, կանդնել ու  
տառած աչքերով նայում եր նրան։

Կուդրաթը սանդուխքն ուսեց, վոր գնա։ Վասիլը,  
ցուցամատը շրթերին դրած, նայեց նրա հետեւից։

Յերբ Կուդրաթը պիտի ծովեր անկյունից, Վասի-  
լը կանչեց։

— Կուդրաթ։

Նա շրջվեց մարմնով։

— Հինչա՞ , խաղե՛յ։

— Կուդրաթ, ըստի արի, — վիզն առաջ թեքած,  
մատի նշանով, մտերմական, բայց ցածր տոնով կան-  
չեց Վասիլը։

— Եկաս եմ, խա՛ղեյ։

— Քեզ հետ գործ ունեմ, հենց բանդ վերջացրու-  
աւ տուն արի։

— Կքասեմ։

Վասիլն արագ շրջվեց։ Կուդրաթը նայեց նրա հե-  
տեւից։ Հետո յերկուսն ել քայլեցին վողոցի հակառակ

ուղղությամբ, մեջքերն իրար շրջած, մեկը սանդուխքն ուսած լույսերը վառելու, մյուսն իր գլխում արդեն վառած կայծի լույսի հուսով՝ դեպի տուն :

Վասիլը իրենց բակում յերկու հարևան ուներ. մեկը վոսկերիչ Սեղրակն եր, մյուսը «Միջի փողոցում» հայտնի դերձակ ամուրի Արքահամը :

Վասիլը դերձակին կանչեց իրենց տուն, թեյով հյուրասիրելու : Վասիլը նրան հայտնեց իր նողատակի մասին: Դերձակը հավանություն տվեց և խոստացավ աջակցել նրան: Դերձակն ասաց, վոր կըերի իր այրի քրոջը չորս յերեխաների հետ միասին, վորոնք ապրում են իր հովանավորության տակ: Գնալիս ել դերձակը շատ զժգուհեց նոր որենքներից ու կյանքից :

Քիչ հետո դուան սանդուխքների վրա կոպիտ վոանաձայն լովեց: Դուռը կամաց ճոռաց ու կուղրաթը շեմքից ներս մտավ:

Նրանք նստեցին փոքրիկ սենյակի սովորակ օվառոցով փոքրիկ սեղանի չուրջը, վորի ծայրին դեղին ինքնայեռը կարծես թե յերգում եր այնպես խորն ու խուլ. նրա ձայնը կամաց-կամաց հեռանալով, մեղմանում եր, բայց միևնույն ժամանակ խղում չորս փոքրիկ պատերով սենյակի անդորրը:

Կուղրաթը նայում եր դեղին ինքնայեռին, հետո դիմացի պատից կախված մեծ հայելուն, վորի մեջ իրեն թեք եր տեսնում ու շատ զարմանում:

Վասիլը կուղրաթի հետ խոսեց ուրիշուրիշ հարցերի շուրջը, հետո շեղվեց.

— Կուղրաթ, իմ նեղ որին՝ ախպոր պես մենակ դուն ես ոգնել ինձ. քո լավությունը գերեղմանումն ել չեմ մոռանա:

Վասիլը բաժակներում մուգ թեյ եր լցնում, իսկ  
Մարուշը՝ Կուղրաթի կեղտոտ ու կարկատած շորերի  
Հոտից զզվելով՝ սեղանի մյուս ծայրին, հեռու նստած  
դուլքա յեր դործում և մեկմեկ ել ակնոցի վրայով  
նայում յերկուսին:

— Կուղրաթ, մի բան ունեմ քեզմե աղաչելու, մի  
ճար արա:

— Ե՛, Կուղրաթ հնչի՞ շանե, խա՛զեյ:

— Ես գիղամ, վոր դուն լավ մարդ ես, — Վասիլը  
մուգ թեյով բաժակը տվեց նրան: Կուղրաթը յերկու  
ձեռքով բռնեց ու զրեց իր առջեվ: — Դուն կանես ու  
մարդու յել չես ասի: Հաց կեր. հրես պանիշը:

— Վալահ յես չի՞դեմ, Կուղրաթ կանես, իրա պան  
հն լավ գիտես:

Կուղրաթը մանր կտորներով ուտում եր հացը կա-  
մաց ծամելով, իսկ պանիրը մեծ կտորով եր զբած և  
նա չեր իմանում, թե ինչպես վերցնի: Բաժակի թեյը  
լցրել եր ափսեյի մեջ ու շաքարի փոքրիկ կտորի ծե-  
րից կրծելով՝ խամում եր մանրիկ կումերով և աթոռի  
ծայրին նստած, նայում պատի հայելուն:

— Տեսնում եմ, վոր դուն կանես, դրա համար յես  
քեղ կտամ շատ, հասկմնում ես, — բութամատն ու  
ցուցամատն իրար շփեց:

— Խա՛զեյ, վալահ ետ մեկ չուղա, ամոթ, հնչի՞,  
Կուղրաթ առանց դրան շանե՞», չե, կանչ, ասա՛:

Վասիլը ժպատց:

— Կուղրաթ, դուքւնիս շատ նալոգ ա յեկել, արի  
ոթախներս մե շաբթով փոխենք:

Կուղրաթի մանր աչքերը հանկարծ խոշորացան  
ու սպիտակուցները դուրս ընկան, նա նստած տեղից  
թեքվեց յետ:

Վասիլը թեթև ժողոաց :

Կուդրաթն այդ չեր սպասում Վասիլից, բոյց խոսք տվեց նրան, ամոթ համարեց յետ կանդնել մի կողմից, մյուս կողմից ել՝ աչքերի առջև բարձրացավ իր ցածը, նեղ «ոթախը», ծխախոտի տուփի վրայի աղջկա փոքրիկ նկարը սև պատճն : Հետո հիացմունքով նայեց Վասիլի սենյակի առաստաղին, իրեն ու հայելուն :

— Իմ ոթախ ես ա,—ձեռքերով ցույց տվեց փոքրիկ տարածություն .— Քեզ փիս ա, վո՞նց առգրես :

— Կուդրաթ, հմի ընենց վախտ ա, վոր մարդ դրւխով—վոտով սապոդի մեջ ել պիտի զոռով մտնի . վոր դուրսը մնաց, կզան հումկ կտան, կրունկով կճղմեն :

Կուդրաթի մտքերն ինքնայեռի դոլորշու պես կորչում եյին շատ կարճ տարածության մեջ :

— Լա՛վ, — խղվող ձայնով ասաց Կուդրաթը, բայց չուղեց ցույց տալ դժողոհությունը :

Ինքնայեռի պես ուրախ վայլեցին Վասիլի աչքերն ու նա բաժակներում նորից մուգ թեյ լցրեց : Կուդրաթը նայում եր ինքնայեռին ու մտածում, վոր յեթե իրենը լիներ, կուղարկեր գյուղ : Նա դյուղից յեկել եր քաշաք դեղին ինքնայեռի և ելի ուրիշ բաների կարոտով : Խսկ Մարուշը ըրթներն իրար ամուր սղմած, դըլուխն որորելով, սեղանի ծայրին նստած՝ ակնոցների վրայից նայում եր դժողոհ :

Վասիլը խոսեց ուրիշ հարցերի մասին և նորից նյութի ծայրերը կապեց իրար :

Կուդրաթը կմախքի պես դունաա յելավ գնալու, յերբ ինքնայեռը սեղանի ծայրին իր յերդն եր դադարեցրել :

Վասիլը Կուդրաթի հետ սենյակից դուրս յեկավ ու

ոտնդուխքների ծերին կանդնած, նայթի փոքրիկ ճրա-  
դը ձեռքով առաջ բռնած, նայում եր հետեւից նրա հե-  
ռացող ու դանդաղ քայլերին:

Վասիլը ներս մտավ, յերբ Մարուշը դուրս տարավ  
թեյի մի ափսե, վորի մեջ պառկեցրած եղ բաժակն ու  
նրա կողքին ել կըծած շաքարի մի փոքրիկ կտոր:

Թե Մարուշն ինչո՞ւ յեր լուռ, Վասիլն այդ հետո  
իմացավ:

### ԴԼՈՒԽՆ ԱՆԱՆՈՒԽՆ

— Թող քան, վեր գրեն՝ մի կուշետկա, մի լամ-  
պա ու կոտրված արեղնի: Ել դիմանում չեմ, չունեմ,  
բաս չեք հավատո՞ւմ, վոր տունս ծախեցի, նալոդ-  
ավի՞ո, — կասեմ:

Եեվ նախ քան ցածի հարկը տեղափոխվելը, Մա-  
րուշը կասկածելով կուդրաթի վրա, հավաքեց խոհա-  
նոցի բոլոր մանր իրերը և տարավ ներսի սենյակը:  
Վասիլը խանութի կարևոր ասլրանքի մեծ մասը տուն  
բերեց և մեխած արկղներով տեղափորեց պուճախնե-  
րում:

Իսկ կուդրաթը մաքրում եր իր փոքրիկ սենյակը:

— Խաղեյ եկաս ես, թամուղ տեսա, — ասում եր  
նա:

Հետո կուդրաթը ձեռների ափերը ծնկների արան-  
քում դրած, նստեց թախտի ծայրին ու մտածեց. ի՞նչ-  
պես շարժվի Վասիլի մաքրուր սենյակներում, վոր  
չկեղտոտի, կարմիր փայլուն հատակի վրա վոտքնի  
սպիտակ հետքեր չթողնի: Կուդրաթի մաքերն ավելի  
առաջ անցան. նա մտածեց, վոր եղ բոլորն իրենց տեղ-  
կոմը կիմանա: Ի՞նչ աներ, գնա՞ր, թե՞ չզնար...

Բայց Վասիլը յեկավ ու Կուգրաթին համողելով, տարած :

— Կուդրաթ, ա՛յ, տեսնում ե՞ս կուշետիեն . որա վըս կքնես, — ասաց Վասիլն իրենց խոհանոցում . — ես ել հրես լամպեն, քնելիս կմարես, նազթը թանդ ա, ափսոս ա . չես ամաչի, քո տան ակս կտպրես, — ձեռքը խփեց ուսին :

— Խա՛ղեյ, իմ տունը լավ տուն ա, յես նրան խավանես, ըստեղ Կուդրաթ չուղես, — ամաչելով ասաց նա, աչքերի հայացքը հատակին թափած :

Զարմանքից Վասիլի հոնքերը, աչքերն ու դլխարկը յետ զնացին :

Կուդրաթը դուռը կամաց բացեց :

Վասիլն ամուր բռնեց նրա ձեռքից :

— Դեղին սամավար կառնեմ, վոր գեղ դրիես, — ասաց Վասիլ :

Կուդրաթի վոշոտ ուղեղի ծալքերը բացվեցին, մշուշի մեջից յելավ իրենց դյուղի պատկերը, հիշեց՝ քանդված, հողի մեջ իրված աները, հանդերը, արտերը, սարերը, գունավոր շորերով իր սիրուն Զալխոելին ու տկանջում ելի շրջվեց խոսքերը նրա .

— «Քաղաքեն վոսկու պես գեղին սաշավար ու արծաթե լեն զոտի բե՛ր» :

Կուդրաթը տխուր նայեց խոհանոցի պատուհանի կոտրած ապակու վրա ցանցված վոստայնին :

Վասիլը շատ խոսեց, համողեց, աղաչեց նրան, վորը տարիներ առաջ իրեն հետ խոսելիս դողում եր ու դլխարկը սղմում փորին և քանի-քանի անդամ ինքը թքել եր նրա յերեսին, հայհոյել, աշխատավարձը կտրել և ուշացրել :

— Փո՛ւչ, փո՛ւչ աշխարհ, — Վասիլը ռատղողների  
ծայրերը թքոտելով, զնաց :

Կուղբաթը մնաց և առաջին գիշերը ընծա շատ ան-  
հանդիսաւ :

Աև պատի վբայից, վշրված ապակու միջից՝ դրդում  
եր նալիքի ճրադի փոքրիկ յերկսայրանի լեզուն, աղոտ  
յուսավորելով միայն իր շուրջը :

Կուղբաթը վերմակը քաշել եր դիխին, շոշ եր, տոթ  
ու նցա ուղեղում ճիճվի նման մի միտք եր շարժվում .

— Կուղբա՛թ, ախր ոթախ ընչի՞ տվեց :

— Մեղ տար Մառանջովի սենյակները :

Կուղբաթը վախեցավ, հետո դարմացած նայեց, թե  
իս մարդիկ վո՞րտեղից իմացան :

Պատասխանն ուշացրեց : Վասիլը հեռու կանգնած,  
ոչքով ողնեց իրեն : Յեկ յեթե Վասին իր մը աչքը քիշ  
ուշ վակեց ու Կուղբաթն ել չնկատեց, նա մարդկանց  
պիտի տաներ յերկրորդ հարկը : Կուղբաթը մի քիչ ել  
զարմացած նայեց, մաածեց՝ «իմ սիրո թամուզ, ես պան  
չվերցնա, տա՞նե շանց տա, չտա՞նե, Կուղբաթ վո՞ր մեկ  
անե» :

Վասիլը ցուցամատն ու բութամատը, ելի ժպտալով,  
շփեց իրար :

— Յես չհասկանաս դու ի՞նչ կուղե, մեր խաղեյ ո-  
թախ ես, ուրիշ չկա՞ , հո՞ւստից ...

Վասիլը խորն ու հանդիսաւ շնչեց :

— Զե՞ , Կուղբաթ սուտ չասե, ես չե՞ , են ա, մեր  
խաղեյ ոթախ, յես չուղի, հեթասենք շանց տա :

Երեն ծայնից արթնացավ կուղբամթը : Վերմանին  
ընկել եր հատակին : Պատէ վրայի կոտրած ապակու,  
լույսը թռել եր փշրված վանդակից :

Հուսինն աղուշ յերեսով նայում եր զիմացի կղմին-  
քըրա կոտուքներին ու փոքրիկ լուսամուտի աղակուց  
փայլում չայնիկի ծռված արծաթն կողերի վրա : Առհա-  
նոցի ու սենյակի միջև վակած գոան յետեմից լովեց  
փայտյա որորոցի չխելչխելոց, փոքրիկ յերեխայի լացի  
հետ միասին . հետո՝ մի աղամարդու խոր հաղ . Կուշ-  
րաթը հարեվան դերձակի ձայնը ճանաչեց : Որորոցն  
որորում եր գերձակի այրի քույրը, վորն յեկել եր իր  
յերեխաներով :

Հեռու փողոցներում դիշերային մի ուշացած կառքի  
անիշներ գլրդացին, իրենց հետ աննելով խուլ աղմուկի :

Կուղբաթն անհօնդիստ շրջվեց մյուս կողին :

Իսկ մյուս որը, առավոտ կանուխ, յերք կուշրաթը  
մաքրում եր փողոցը, նա տեսավ հարեվան դերձակին,  
վորը անային դրսույկը կռան տակը դրած՝ դնում որ  
խաչվող փողոցով :

Դերձակը գնում եր իր քրոջն ու նրա յերեխաներին  
անային գրքույկում դրել տալու :

### ԲՈՒԽԱՐԻԿԸ ՎԱՐԴԱՒՄ Ե

Վասիլը բուխարու մխացող փայտերը խառնեց ի-  
րար, նստեց կրակի առջև ու գլուխը ձեռքերի ափերի  
մեջ առած՝ մտածեց ինչ վոր բանի մասին :

Նա նստած տեղից մոտեցավ դռանն ու փակեց, ի-  
շեցրեց նրա վարագույրները :

(Վասիլը վաճառեց իր հորից հիշատակ մնացած  
վերջին սեփական հին տունը, վորի մեջ ապրում եր ին-

Քը : Վաճառեց շատ դժողով, և դերձակը գիտեր, վոր նա հայրական տնից բաժանվեց միայն հարկերի համար) :

Վասիլը ծախված տնից ստացած փողերը դարսեց սեղանի վրա, կարդի բերելու, վոր հետ պահանջական կարիքների համար :

Մեկն անհանդիստ թակեց դուռը :

Վասիլն զգաց, վոր Մարուշի թակոցը չե : Նա ձեռքերը վախսեցած փոնց փողերի վրա, քունքերը զարնվեցին իրար : Փողերը շտապով հավաքեց սեղանի յերեսից :

Դուռը նորից թակեցին : Յերնիսան կրակի հետ խաղալը թողեց, նայեց շփոթված հորը : Դուռը խոսեց յերեսիւ հատ, հետո ճոռաց, Վասիլը դուրս յելավ :

Խորն ու աշնան անձրեւվախառը քամին սուրալով շրջում եր թաղի բոլոր փողոցներում, բակերում ու կտուրների վրա : Առ անձրեւվաշրի խողովակները լալիս եյին այնպես ձանձրալի, տաղտուկ ու միանման : Կանգնած եր կուղրաթը թրջված ուսերով, ու նրա մաշված շորերի ծանրները սառը քամու բերանն ընկած՝ դուրում եյին :

Վասիլը սուր հայացով կուղրաթին նայեց, իսկ նա յել՝ ամոթով դետին :

— Աա՛ղեյ, կուղրաթ չուզա, արի ոթախ փոխա :

Վասիլն ի՞նչ խոսեց, ի՞նչպես համողեց կուղրաթին, ոյդ վոչ վոք չիմացավ : Ի՞նչքան ժամանակ անցավ՝ նույնպես, բայց հետաքրասյան լույսերը վառվեցին, անձրեւվախառն քամին մեղմացավ ու կուղրաթն ուշացած քայլերով դնաց մնացած լույսերը վառելու :

Մարուշը Վասիլի սապողների համար գնաց Սպիրիդոննց տուն, բայց ինչո՞ւ ուշացավ, յերեվի վեճի բռնվեց կոչկակարի գումարտ կնոջ հետ :

Վասիլին ուսերի յեռե ծածկեց դուռը, մոտեցավ  
փողոցին... մոտեցավ, բայց նրանք չկային:

— Պա՛-պա՛, մտիկ, ինչ լավ և վաշլո՞ւմ — Վազի-  
կը, Վասիլի յերեք տարեկան յերեխան, վերջին չերիո-  
նեցը կրակը դցեց, ձեռները տաքացրեց, հնառ ծափ  
սալով թռչկոտաց բուխարու առջե...

Վասիլը դուրս ընկած աչքերով նայեց յերեխային:  
Վասիլը գամվեց տեղում, նրան թվաց, թե բուխարու  
կրակը սենյակը լափեց, հետո բարձրացավ գունքերին:  
Թվաց, թե բուխարին իր լիզուն հանած ծաղրեց իրեն  
ու պատի վրա խամրելով՝ որորվեց արագ: Վասիլը սըր-  
ուռալով ուսերը թափ տվեց, զգում եր ճիշտ այնպես,  
յերբ ձեր կոտրած յեղունդի սուր ծայրն ալակու վրա  
չանքովում և բարակ խղոցով: Նա ստամները սեղմեց  
իրար.

— Շան վորդի... յիս քո են...

Վասիլին թվաց, թե պատերն արձականք ավին,  
յետ-յետ զնալով: Յերեխան չորացավ պատին:

Վասիլը ձեռքերը կոխնց բուխարիկը, այրված փո-  
ղերը խշխացին ծաղրելով ու վերջին փոքրիկ կայծն ել  
թռավ նրանց վրայից:

Յերբ Վասիլը պղտորված աչքերը բացեց, յերեխա-  
յի այրված վոտնամանը տեսավ ու նրա ձեռքի մատների  
ծայրի վուկորները բուխարու շիկացած ափի վրա չո-  
րացած... Տեսավ իր մատների արանքին իր գլխի մա-  
զերից մի փունջ ու գունքերի վրա ստուծ արյուն...

Այդ մասին իմացան ու խոսեցին քաղաքի մանր ար-

Հետոտավլորների ու առևտրականների փոքրիկ խանութ-ների շուկայում, թաղնրում: Առսեցին քաղաքի մեծ ու փոքր այլիների կանաչ նստարանների սնանկ հաճախորդները, վորոնք իրենց ամենորյա նստարաններն ու տեղն ունեցին:

Պարիկմախեր Դարչոն հենց նույն որն ամենայն մանրամասնությամբ ուղարկը պատմեց իր հարեվաններին ու իմերել Իլիկոցին:

Դատարանի մեծ դահլիճն ու սրահները լիքն ելին բազմությամբ:

Վասիլի դատար լսելու եյին յեկել: Յեկել եյին քաղաքի մանր արհեստավլորները, վաճառականները: Յեկել եյին՝ նաև պաշիկմախեր Դարչոն, ուերձակ Աբրահամը, Մաքարեն, վոսկերիչ Սեղրակը և մինչև իսկ ուստա Ռւնանը յեկել եր նրանց թաղը:

Իմերելին ու վոսկերիչը նստել եյին ամենավերջին աթոռների վրա: Նայում եյին դատավլորներին, զինվորներին, Վասիլին ու յերկուուն ել վախենում եյին, թի հանկարծ իրենց վկա չկանչեն:

Եերբ դատը վերջացավ, նրանք ցըվեցին, մի քանի-որ սպասեցին գուների առջև, վոր Վասիլին վերջին անդամ ել տանելու ըսովեցին տեսնեն:

Հանկարծ մարդիկ նորից ներս լցվեցին դահլիճ, հավաքվեցին ինչ վոր աեղ:

Մարուշն ուշաթափվել եր:

Վասիլը Մարուշին չտեսավ, նա վակված եր դըռների յետև: Քիչ հետո յեկավ բաց դեղնավուն մի ավտոմեքենա ու Մարուշին տարավ: Իսկ Վասիլը լսեց հեռացող ավտոյի ձայն:

— Մաշինով ման եք ըստի՞ր, մեր կաշին քերթում . . .  
Գնա, Վասիլ, քեղ ա՛րժան ա . . . խեղճ իմ երեխա, ո՞ւր  
կորար, հմի քո պապին են երելու . . . փողեր, փողեր  
իմ . . .

Վասիլին տարան :

Կուդրաթի ուշացել եր, դնում եր մեծ քայլերով :  
Նա Ունանին տեսավ իրենց տան մոտ :

— Ունա՞ն, Ունա՞ն, կաց, խաղեց ո՞ւր ե :

Ունանը կանգնեց, թեք հայացքով նայեց Կուդրաթին :

— Տարա՞ն :

Ինքնազոհ առաց նա ու նորից քայլեց :

— Ո՞ւր, — յետեկից հարցրեց Կուդրաթը :

Ունանը դարրասից ներս մտավ :

Կուդրաթը հարցականի պես կանգնեց փողոցի անկյունում, նայեց Ունանի յետեկից ու զարժացած մտածեց .

— Բա ոթա՞խ . . . Զե, փիս ա, փիս ա

### ՈՒԽՐ ԳՆԱՑ

Յերբ Ունանը Վասիլից բաժանվեց՝ անդործ մնաց :

Յերբ Ունանը ծախոեց իր փողերը, շուկայից թաղը  
տեղափոխվելուց հետո, առաջին անգամ նորից, վերջին  
հույսով շուկա գնաց : Թափառեց փողոցները, մտավ  
ամեն ծանոթ ու հին խանութ, գործ փնտուեց, չգտայլ, ա-  
մեն տեղ մերժեցին :

Շուկայում շատ-շատ նորություններ եյին պատռ-  
հել. այդ շատերից մեկն ել այն եր, վոր Ունանի խա-  
նութը չկար, այս՝, պարզապես չկար, կարծես ողն եր

ցնդել, կոտրծես մի անհայտ ձեռք վերցրել եր նրան շուշայի մեջտեղից : Ձեռքը, փոքրիկ խանութները հարթող բռունցքն ո՞վ եր, Ունանը գիտեր : Նրա փոքրիկ խանութի հետ միևնույն ժամանակ չկային և մյուսները : Մւրեյին, այդ մասին նույնալես գիտեյին պարիկմախերը, խմերելը, հարևանները և Ունանն ել իմացավ : Կար մեկ ուրիշը, նորը, այն փոքրիկ խանութների տեղում, ավելի շքեղը :

Ունանն այնպես մոտեցավ խանութին, այնպես նայեց ներս, վոր չնկատեցին : Խանութում հավաքվել եյին շուկայի բոլոր տրեխ կարողները . աշխատանքն ինչքան յեռուն եր, մարդ ու գործ կար ներսը : Ունանը գլուխը թեքեց թիկունքին, կմկմալով ցուցանակը կարդաց : Ցուցանակի խոշոր տառերը կարծես թափվեցին նրա գլխին, հարվածից ուղեղն որորվեց : Մայթերի վրա մարդկանց կպչելով ու քավելով պատերին՝ հեռացավ ախուր :

Պարիկմախեր Դարչոն դիմացի մայթից տեսավ Ունանին, ժամանակ ու շտապ մտավ «Յեթիմ Գյուրջին արախտիրը :

—Բաս ըսենց ելի՛, «արտել» սարքեցին, ակսո՛ս իմ հայրական հին դուքան :

---

«Որ մթնացնելու» և «մի կտոր հաց ճարելու» հույսով Ունանն իր խանութից մնացած գործիքները հանեց իրենց փողոցի անկյունն ու մի տուփի առջեւ նստած սկսեց կարկատել գեռ իր կնոջ չուստերը, հետո յել ուրիշները բերեցին : Իսկ կինը կողքին նստած՝ ողնում եր նրան, հետն ել թաղի յերեխոց համար վաճառում «իրիս» ու «սեմիշկա» :

Որեւը ավելիցին ձանձրալիք, մանր հոգեսերով:

Ունանն աշխատեց փողոցի անկյունի շարժական իր խանութում, վորը յերեկոներն ուսն առած տանում եր տում, առավոտները նորից բերում:

Պատահում եր շատ հաճախ, ամառային խաղաղ փողոցի ծայրին, մի վրլած պատշվամբի տակ, իր շարժական խանութում տուփի առջև նոտած, մեղմ հոքանդում եր Ունանն ու ծուլորեն քում ճանճերին: Նիրհում եյին կժախքների պես մերկ, բութ զործիքներն իրեն և շուրջը թոփված հին, մաշված չուտոերն ու կոշիկները:

Հետո յեղանակները փոխվեցին: Արեի սուստ շոշերի տեղ բարակ-բարակ անձրեւ թափվեց թաղի կտուրների ու խոնավ մայթերի վրա: Ունանի զործերը վատացան: Փողոցներում մարդիկ շրջեցին սակավ: Առաջվառ ողես չուստ չբերեցին կարկատելու:

Մի որ ել Ունանն իր զործիքներն ու տուփը չտարավ փողոց: Նա իր վերջին փողերով դնեց մի կողով կմոն, գնաց քաղաքի մի բանուկ փողոց, ապրելու վերջին հույսով: Նրա կինն ել հետը գնաց՝ ձեռին մի քանի հասարակ սանրեր ու մանկական տիկնիկներ:

Ունանը շատ փոխվեց, դեմքը մռայլվեց ու ակոսվեց ավելի: մազերի բորբոսի դույնը շատացավ: Նրա մաքերը տնից ու փողոցից այն կողմը չանցան:

Լիմոնի կողովը թևն անցկացրած՝ նա շրջեց այն բանուկ փողոցը, վորը կենտրոնական հրապարակից իջնում եր դեպի քաղաքի մյուս շուկան:

Մի շատ սովորական որ յեղավ այն, վորին չեցին սպասում նրանցից վոչ մեկը:

Սպիրիդոնը, մի մեծ ոռոսական հաց գրկած ու նոր

սապողներ հազար, ծովից իրենց տան փողոցի անկյունից, յերբ Աւանը ձեռքերը ծնկները կարկատած շաբարի դրալանները խրած՝ կուան տակի հին կոչիկները տանում եր վաճառելու:

Մատեյան իրար:

Սպիրիդոնի կրծքին ծովնրություն իջավ:

— Ունա՞ն...

Նա գլուխը բարձրացրեց, հայացքը մայթերեց վեր հանեց ու թալ հոնքերի տակից խորը նայեց Սպիրիդոնի ժապացող աչքերին:

— Ունա՞ն:

Լոռւթյուն:

— Եղածը եղագ, հմը վնաս չունի, ախալոր պես, բայ ունեմ քեզի ըսելու:

Ունանը մի քայլ յետ զնաց:

— Փորումդ սատանա խոմ չի մտել, քեզ ի՞նչա ըլե, ո՞վ առ որթնել:

Սպիրիդոնը ժապաց: Նա ձեռքը դրեց Ունանի ուսին:

— Երթանք տուն, պատիվ ենեմ:

Ունանն ելի սառը նայեց նրան:

— Զե՛ ախալեր, իմ ընչի՞ն ես զոնաղ անում. ձեռդ վեկալ անցի ճամբեղ:

— Յա՛, Ունա՞ն...

Մնացածն Ունանը չլսեց. նա գրալաններում մատներով յերկու փոքրիկ պղնձե փող խփեց իրար, լսեց նրանց խուլ ձայնը, նայեց Սպիրիդոնի դրկած մեծ սպիտակ հացին, վորի տաք ու ախորժելի հոտից քերվեցին մաղուտ քթածակերն ու բերանի անկյուններից մեկի մոտի բեղերի ծայրերը թրջվեցին:

Հետո նրանք քոյլեցին ու դնացին իրար հնատ :

Սպիրիդոնի ձեռքը Ունանի ուսից թեթև քաշեց դարբասից ներս :

Ա՛խ, վորքան հաճելի յնք սպիտակ ու առք հացի հոտը :

Սպիրիդոնի կինն ինքնայեռը դուրս տարավ տաքոցնելու :

Նրանք նստեցին փոքրիկ սեղանի շուրջն ու խմեցին ողի : Ծիշը դատարկվեց : Ունանը յելավ գնալու, Սպիրիդոնը նորից նստեցրեց նրան, հետո արթնացրեց իր քնած փոքրիկ տղային, շիշը տվեց նրան .

— Գնա՛, ինի վարի չյանդի ողաղվալն ըստ աղարտոյ Արրահամը դրկեց, նիսյա բախի կուղե, իմացա՞ր :

Սպիրիդոնի փոքրիկ տղան լալով գնաց :

Նրանք խոսեցին „Բեդայի լաօչկա“ խանութից, Վասիլից : Սպիրիդոնը պատմեց, վոր ինքը յերբեք ուրիշի պարտքի ու լավության տակը մնացող չե : Պատմեց և այն, վոր ինքն իրեն հողին կտա են մարդուն, վորըն իրեն լավություն անելու համար տուժել ե : Հետո յել՝

— Հբը, Ունա՛ն, եղակես ե, որա կըսեմ, հիմի ամեն բան Փայթոնի թաքյառի պես Փռուա կը :

Սպիրիդոնն Ունանին պատմեց, վոր ինքը աշխատում ե կոչկակարների արտելում : Ունանը զարմացավ, իսկ Սպիրիդոնը ժպտաց :

— Առուտուրիդ պիտի վերջ տառ հիմի, հասկնա՞ս կը :

— Ինձ վոր արտել չեն վեր ունո՞ւմ :

— Եղոր ճարն ել կա . դու հլը շիղես, եղոր հմար պիտի , ձեռքով կիսաշրջան քաշեց հասկնաս կը ելի :

Դաստի վլրայից կախված «բուշիլնիկը» տաղառուկ ու  
համաչափի յերդով իր շղթան եր գործում :

Ունանը մտածում եր, վոր Սպիրիդոնը լավ մարդ և  
յեղել, բայց ինքը չի ճանաչել նրան :

Փոքրիկ տղան ողու շիշը գրկած ներս մտավ :

Նրանք խմեցին, խոսեցին ելի : Ողին վերջացավ,  
Ունանը բարի գիշեր մաղթեց ու գնաց :

---

Ունանը գնաց գրվեց Աշխատանքի բորսայում ու  
գործ պահանջեց : Սպասեց յերկար-յերկար որեր, շու-  
կա չզնաց իր առետուրն անելու, իսկ ի՞նչպես եր ապ-  
րում՝ հայտնի չեր : Նրա ցանցառ միրուքը յերկարեց ու  
թելերի ավելցուկ ծայրերի պնս՝ կեղտու մաղեր կախ-  
վեցին հատ-հատ :

Մի որ կաշու դործարանից մի գրություն գնաց Աշ-  
խատանքի բորսա ու պահանջվեց «շորնիկ» վարպետ :

Հիշո՞ւմ ես, Ունան, այն վո՞ր որն եր, վոր Աշխ-  
բորսայից դրություն ստացար ներկայանալու ու մյուս  
որը, յերբ գիշերը բարձրացավ արթնացող քաղաքի  
շենքերի ուսերից, դու դնացիր այն դործարանների  
կանչող շշակների կողմը : Ու դնալիս, յերբ դարբասի  
դռնից ներս մտար, մտքումդ ասացիր .

— Ես ել մի բան չի :

### ՀԱԿԱՌԱԿԱ ԿՈՂՄԻՑ

Կարմիր, ուռած քթով, սաղափե կոճակների ողես  
փայլուն աչքերով և շեկ, բարակ ու կարճ բեղերով  
գերձակ Աքրահամն աշխարհ եր յեկել, կարծես, ուրիշ-  
ներին ողնելու համար : Նա միշտ լուռ եր, մտազբաղ-  
խոսում եր քիչ, ուտում՝ շատ : Աքրահամն իրեն խա-

նութի ու տան ճանապարհը չեր կարողանում վորոշել։  
Միշտ՝ խանութից-տուն կամ տնից-խանութ գնալիս՝  
նա քայլում եր ուրիշ-ուրիշ փողոցներով, մտքում հաշ-  
վում քայլերը, կորցնում յերեկվա անցած ճանապարհի  
թիվը և այդպես շարունակում եր միշտ։ Վոչնչի վրա  
խեթ-խեթ չեր նայում այն ախուր ու լուռ մարդը՝  
բացի տուրքից։ Սակայն նա կարմիր խալաթ հակած  
դահիճ եր դառնում իրեն պարտքառերի առջեւ։

Զար լեզուներն ասում եյին, վոր դիշերները, յերբ  
թաղի վերջին տան դուռը փակվում եր ներսից, նա յե-  
րադ տեսած ու վախսցածի պես միշտ արթնանում եր  
քնից, բաց անում մենյակի սպասերից մեկի միջի յեր-  
կաթե դռներով փոքրիկ խորհրդավոր սղահարանը, վո-  
րը դրսից յեկող անձանոթը չեր նկատի, հանում եր  
վոսկե փողերի փոքրիկ քսակը, հաշվում ճրագի լույսի  
տակ, հետո տանում պահում և նոր միայն քնում հան-  
գիստ։

Յառամ եյին, վոր տարիներ առաջ դերձակը յեղել  
եր մուսասամի հեռու խորքերը, ունեցել առաջնա-  
կարգ հյուրանոց, պահել «դիշերային հուրի-փերիներ»։  
Բայց կուլյների խառն տարիներին վերադարձել եր «յիր-  
կիր», հետը բերելով վոսկե փողերի քսակը։ Նա ճիշտ  
այն ճանապարհով եր վերադարձել, վորով գնացել եր  
մեծ կովի ճակատից փախած հաշտարխանցի իր մի ըն-  
կերով, հետը տանելով իրեն մկրատն ու ասեղները։  
Լուղներ յեղել են, վոր մի դիշեր հյուրանոցի ներքնա-  
հարկում կորչում ե Աբրահամի հաշտարխանցի ընկե-  
րը, վորի մահվան մասին հիշելիս՝ դերձակի մարմինը  
որսում, աչքերն արյունով լցվում եյին։

Համոզվածներ կային, թե ուրած, կարմիր քթով

Հիմանդ դերձակը կենակցում եր խնլազար Քալոյի  
հետ, վորը գլուզված մաղերով ու շորերով շրջում եր  
թաղում :

Նա մտնում եր աղբէ տակառները, հավաքում  
ճմերուկի, սեխի կճեալներ ու լաթիր: Նա նստում  
եր արեի տակ, թաղի քանդրտված տների պատերի յե-  
տել, յեղունդներով քերում մարմնի վերքերը, ժպտում  
անիմաստ, հետո բարձր քրջում, խոսում մատների  
հետ: Հավաքած հին լաթերով նա զարդարվում եր,  
նայում ճեռքերի տիմերում ամուր բռնած կեղտոտ ապա-  
կու փոքրիկ կտորին: Հետո նա մատներով փորում եր  
հողը, յերբ հիշում եր, վոր ինքը մեռնելու յե ու իրեն  
պիտի հողում թաղեն: Նա ապակու կտորը զարկում եր  
դետին, դեմքը ծոմուում եր, կարծես չնշվում ատամնե-  
րը սեղմած յելնում եր քարերի միջից ու քարեր շպըր-  
տում անցորդների վրա:

Նա այն դերձակ Աբրահամն եր, վորը տարիներ ա-  
ռաջ սիրել եր խոնարհ ու խելոք Քալոյին, համբուրել  
նրան, բայց հետո, նուսաստանի առաջնակարդ «Պա-  
րիզ» հյուրանոցում, ուրիշ սեր եր բարձրացել նրա  
ծուռ ուսերի յետելից: Սակայն «արտի կարոտից եր-  
ված» դերձակը նամակ եր դրել ու Քալոյին կանչել  
«Խուսեթ»: Աբրահամը կանչել եր ու հյուրանոցում  
վաճառել Քալոյի սե աշքերն ու ճկուն մարմինը ուսւու-  
շեկ աֆիցերներին և Դոնի կաղակներին:

Եերբ Քալոն տնից փախավ «Խուսեթ» իր սիրեկանի  
մոտ, են որվանից հայրը թքեց նրա յետելից ու իր դրո-  
ները փակեց անառակ աղջկա համար:

Դերձակ Աբրահամի նուսաստանից վերադառնա-  
լուց շատ հետո, նոր միայն Քալոն յեկավ զզզզված  
մաղերով ու վերքերով:

Դերձակ Արքահամբ, դուն այն Արքահամբն եյիք,  
վոր հյուրանոցն այրվելու վերջին գիշերն ուղեցար  
խեղղել Քալոյին:

Եերբ Վասիլին տարան, նոր տնատերը յեկալ,  
Կուգրաթը մոռացավ դանդատն ու զնաց ելի իր ռո-  
թախը:

Դերձակ Արքահամբ Մարուշին տարավ իրեն քը-  
րոջ բնակարանը:

Վասիլին ո՞ւր եյին տարել, Մարուշը չպիտեր. Հե-  
տո միայն իմացավ ուղղիչ տան հասցեն:

Մարուշը դերձակի միջնորդությամբ ծախեց ամ-  
բողջ իանութը. ծախեց ու փողերը կերավ կամաց-կա-  
մաց: Ու մինչև վերջին կոպեկը տնտեսելով, Մարուշը  
կերավ ու հիշեց Վասիլին և զնաց տղայի գերեզմանն  
որհնելու: Մարուշը գիշերները յերազներ տեսավ ու  
ցերեկը պատմեց հարեան կանանց:

Դերձակն ամեն որ, յերեկոները խանութը փա-  
կելուց հետո, գնում եր Մարուշին տեսնելու: Նա Մա-  
րուշի համար հետը միշտ տանում եր միս ու կանաչի:  
Դերձակը նստում եր շատ քիչ, խոսում եր կարճ,  
դժգոհում կյանքից, ափսոսում յերեխին ու Վասիլին:

— Յեօ եսոր զնացի ընդի, ասում են, վոր շուտով  
Վասիլին բաց կթողան, շատ ել աղաչանք արի:

Դերձակն իսկապես եր գնում «ընդի»: բայց մի՞նթե  
դա այն Արքահամբ չեր, վոր մաքսանենգության համար  
իր կյանքից որեր հաշվեց այն շենքում, ուր տարան  
Վասիլին: Հետո, յերբ աղատվեց, նույնիսկ գործով,  
նա չեր անցնում այն «զաման» շենքի մոտի մյուս փո-  
ղոցներով:

Գնալիս դերձակը Մարուշին փող եր ուռլիս մանր  
ժախսերի համար :

Արրահամը մտածում եր, վոր Վասիլից ինքն այդ  
բոլորը կրկնակի կառնի ու կավելացնի իր վոսկե փո-  
ղերի քսակին :

Ու շարունակ մի խուլ միտք ճիճվի նման կրծում  
եր նրա վերքոտ ուղեղը :

Որիրն ինչքան շատանում եյին ու մաշվում, Արրա-  
համն այնքան շատ եր մնում Մարուշի մոտ ու խոսում  
յերկար... սկզբում սակավ, բայց հետո միշտ յերեկո-  
ները նա թեյում եր այնտեղ :

Մի յերեկո յել, յերբ նրանք նստած եյին սեղանի  
շուրջը, թեյով յի բաժակներն իրար դեմ եյին դրված:  
Դերձակը լուռ եր, իսկ Մարուշը նայում եր նրան:  
Արրահամը մտածում եր... դուցե Վասիլն ուշ աղատ-  
վի, մի որ պիտի սկսել՝ համա վո՞նց : Նու հանկարծ  
իր դեմքն այնպես այլանդակ տեսավ շուքարամանի փայ-  
լուն ու կոր կողերում : Փալտաց :

— Ի՞նչ ըլավ, Արրահամ, — հարցրեց Մարուշ,  
ծանր լուռթյունը խախտելու համար :

Դերձակը նորից ժալտաց :

— Ասում եմ, ըսնոց չի ըլի, ողիտի ուսակվեմ :

— Կնիկ առնե՞լ ես ուղում :

— Հա, Մարուշ, կարա՞ս մի լավ կնիկ ճարես ինձ  
համար :

— Հմի՛ կնդանից շատ ուրիշ ինչ կա : Բա, են հարեւա-  
նի շունն ել ինչ փիս ավունում, լավ նշան չի : Ինչ որե-  
րի ուստ յեկանք : Բա Վասիլն ըլեր, վոտեամաններա  
ծակ կթողա՞ր :

— Զե՛, համա...

— Զայը կսառչի՛, խմի : Եղուցն ի՞նչ որ ...

Մարուշը մոռացավ, վոր դերձակի Արքահամն ա-  
մուսնանալու մասին խոսք բացից :

Ցերեկոն սահեց, լուսինն արծաթի ոռութիանոցի  
ոկտ պատուհանից ներս նայեց :

Դերձակը զնալիս սովորականից ավելի շատ փող  
թողեց ու ամուք սեղմեց Մարուշի ձեռքը։ Մարուշը  
զարմացավ միայն շատ փող թողնելու վրա և վոչ թե  
նրա ծանր շնչառության ու իր ձեռքի ամուք սեղմելուն։

Արքահամը ժպատց մինչեւ փողոց յելնելը։

Մարուշը հաշվեց դերձակի թողած փողերը։ Նա  
նստեց լայն թախտի վրա ու խաղակարտից վիճակ բա-  
ցեց հորանջելով։

Արքահամը թքեց կոստաված մայթի նեղ ափին,  
թեքվեց դեպի տուն ու հիշեց Մաքարելին։ Նա իրենց  
տանը սեղանի վրա թեյի յերկու բաժակ տեսավՀայ-  
հոյեց իրեն այրի քրոջ, թքեց ու փնչաց նրա յերեսին,  
հետո պառկեց քնելու...

Դերձակի այրի քույրը սենյակի դուռը կամաց  
ճռացրեց յերկու անդամ։ Միջանցքում շունչն ամուք  
պահել եր Մաքարեն...

Թեվ այն գիշեր սկավառակի պես լուսինը ժպատցող  
յերեսով ինչե՛ր տեսավ, հետո ամաչեց ու մտավ ամողերի  
փեշերի տակը։ Իսկ դերձակը դռան ներսը, վարի մը-  
ռութը թույլ կախած, խառնում եր քիթը։

Դերձակը յերեկոներն ելի դնում եր Մարուշի մոտ։  
Նա թեյի չեր մնում, նստում եր շատ քիչ։ Մարուշը  
տեսնում եր, վոր դերձակը տիպուք և ու չի խոսում,  
պարտատերի պես շարունակ նայում ե իրեն։ Մարուշը  
կարծում եր, թե դերձակն ել չի ուզում իրեն ողնել,  
դրս համար նո, առանց յերկար մտածելու, իր վոսկե

մատանիներից ամենահասարակը, վորպես արժեքավոր զարդ, նվիրեց Արքահամբին: Դերձակն սկզբում քիչ համարեց, հետո մատանին վերցրեց, ժպատաց և ուրիշ բան հասկացավ:

Դերձակը Մարուշի մաշված կոչվելեց կարկատել տալու տարավ:

Այդ որվանից հետո դերձակ Արքահամբը միշտ ուրսին եր ղնում Մարուշի մոտ, յերեկոները մնում եր յերկար, ցինիկ կատակներ անում:

Իսկ Մարուշը զարդ նվիրելուց հետո շատ շուտով վլոցմաննեց, վորովհետեւ դերձակը մատանին մատին եր ունենում միշտ, դանրան այնքան ել հաճելի չեր. չար լեզուները կարող ելին բամբասել, և յեթե Վասիլին իմանար, ի՞նչ պիտի առեր: Մի որ Մարուշը մատանու մասին եր մտածում բաժակներում թեյ լցնելով, իսկ Արքահամբը հայելու առջև կանգնած, ժպտալով բեղերն եր որում, յերբ հայելու մեջ եր ուսերի յնուև կանգնած տնօտք Վասիլի՝ պատից կախած նկարը: Նրա ուսերն ամուր ցնցվեցին, հոնքերը դարավեցին իրար վրա:

Թեյամանը Մարուշի ձեռքից ողում կախված մնաց:

— Ի՞նչ ըլլավ, Արքահամ:

— Վո՛չինչ: Մարուշ, ե՞ն եմ ասում, Վասիլը վոր չդա դուն ի՞նչ ես անելու:

Աւ դերձակը տեսավ, թե ինչպես Մարուշի մանր աչքերը կամաց-կամաց խոշորացան և քիչ մնաց, վոր թեյամանը ձեռքից ընկներ:

— Ընչի՞ յես հարցնում:

— Հենց ըննեց:

— Զըլի՞ բան դիմա՞:

— Զե, համա լսել եմ, Վասիլի բողոքը հասնէ ու դիմումքից մեծին, նա վոտքը խփել ա դետին, ձեռքը

սեղանին, առկադ ա արել ու պըիկազ ավել, վոր երեխա  
սպանողին քշն Սիբիրի խորքերը:

Մարուչն որորվեց, ընկավ սեղանին ու հեկեկաց:  
Դերձակը Մարուշի դլուխը դրկեց.

— Լաց մի ըլի, Մարուչ, յես ըստի չե՞մ, յես քեզ  
կպահեմ, դանա իմ դլուխն ել խոմ մեռած չե՞...

— Աստո՞ծ, ինձ եռ որն ընչի՞ դցեցիր. մեղքու վո՞րի  
եր:

— Մարուչ, դու խո գիդաս, յեռ քեզ...

— Ի՞նչ ա, Արրահամ:

Դերձակը ծանր շնչառությամբ ամուր դրկեց Մա-  
րուշի մեջքն ու ձեռքն այնպես բռնեց, վոր նա մասս-  
նին տեսնի...

— Արրահամ...

Մարուշը ցնցվեց: Դերձակն ամեն ինչ մոռացավ:  
Մարուչն ամուր կծեց նրա մատը, մատանին ուզեց ա-  
տամներով հանել: Դերձակը ցավից ճշաց: Որորվող  
սեղանի վրայից մի բաժակ ընկավ գնարին ու փշրվեց...

Մարուշը պատուիած զղնստներն ուղղելով, կար-  
մըրած ու կապտած դեմքով լուռ հավաքեց թեյի բա-  
ժակները: Իսկ դերձակը ձեռները խաչած ու դլուխը  
թեքած կրծքին, կոտրված ֆիդուրայով հենվել եր  
դրանը: Նրանցից վոչովք չեր խոսում:

Դուրսն անձրևախառն քամին զարնվում եր կտուր-  
ներին, մայթերին ու պատուհանների առակիններին:

Լություն...

Հետեւյալ որը դերձակը առմբրւած յերեսով զնաց  
առվորականից շատ վաղ:

Մարուշը թախտին նստած՝ խաղակաբարից նորից

վիճակ եր բաց անում : Նա սովորականի պես՝ նոտան  
տեղից չելավ : Դերձակը լուռ կանգնեց Մարուշի ուսե-  
րի յետեւը : Նրա աչքերի վաղող հայացքն ընկավ Մա-  
րուշի սոլիտակ շապիկի ուսերից ներս ու կանգ առավ  
խմորածե զույդ գնդերի վրա :

— Մարո՞ւշ...

Մարուշի ղողացող, վայր իջնող ձեռն ողում մնաց :  
Նա դլուխը յետ շրջեց ուսի կողմը, դիպավ Արրահամի  
դեմքին : Մարուշը քթածակերը կծկեց Արրահամի բե-  
րանից փշող դառն ողու հոտից . նա իր ուսերին ծան-  
րություն զգաց ու խորը շնչառություն :

— Կորի՛, ոլիանից :

— Ընչլ՛ յես ջղրվում, Մարուշ, լավություն-  
եա ա՞ ...

Դերձակը նավթի փոքրիկ լամպի լույսը հանգցրեց :  
Յերբ դռւնատ լույսը սենյակից թռավ, նրան թը-  
զաց, թե Վասիլի՛ պատից կախված նկարն արագ շարժ-  
վեց ու թարթեց աչքերը :

Մթության մեջ ներսում աղմուկ յելավ, շոգ շշուկ-  
ներ ու կանացի ճիչ : Քիչ հետո մի սև ստվեր արագ  
փախավ սանդուխքների վրայով : Հարեւանները հա-  
վաքվեցին, լցվեցին սենյակը, բոլորից առաջ ներս  
մտավ Մաքարեն : Խավարում լուցկիները լիզուներ հա-  
նեցին : Մարուշը կոտրած աթոռի վոտքը ձեռքին, հե-  
կեկում եր թախտի վրա :

— Յերազ աեսա խիստ ստատիկ, ասաց Մարուշը :

Մաքարեն թախտի մոտ, իր վոտքերի տակ ինչ վոր  
բան զդաց, նայեց ու վերցրեց :

— Ես խս Արրահամի գլխարկն ա՞ :

Դերձակի մաշված գլխարկը փայլեց բոլորի ոչքի  
բիբերի վրա ու հարևանները կամաց-կամաց հեռացան:

Դերձակ Աղքահամը չկար: Նա ամեն ինչ թողել ու  
զիշերով թաքուն հեռացել եր քաղաքից:

### ԿԱՏՎԻ ԲԻԲԵՐԸ

Մարուշը շաբաթական մի որ դնում եր Վասիլին  
տեսնելու: Վասիլը գերձակի փախուստի մասին վոչինչ  
չդիտեր, իսկ Մարուշը նրան վոչինչ չեր ասում:

Մարուշն աղբելու համար սկսեց իր զարդերը վա-  
ճառել իրենց հին հարևան վոսկերիչ Սեղբակին:

Վոսկերիչը նեղ ուսերով, բարակ ու ցածրահասակ  
մարդ եր. խոսելիս աչքերը կիսով չափ փակում եր:  
Նրա վարի բարակ շրթունքը հեծել եր վնարինին: Վոս-  
կերիչը միայն շաբաթ յերեկոներն եր դնում զպեր-  
վոկլասնի» «Ռայա պարիկմախերսկում սափրվելու, իսկ  
կիրակի որերը փայնեցնում եր ցարական տարագով  
կարված՝ մաշված կոշիկներն ու մաջրում հին շորերը,  
փոխում՝ եր փողկապը, բայց ցիլինդրը մնում եր ելի  
ճաղատ դլխի մի քանի արծաթե մաղերի վրա՝ յուղոտ,  
խունացած շրջանակի տակ առնելով արագ՝ թարթվող  
աչքերը և ծնոտի ծայրից կախված փոքրիկ միրուշը:  
Վոսկերիչ Սեղբակը շատ եր դանդատվում բալորին իր  
թույլ հիշողության համար: Բայլում եր դանդաղ, նո-  
միշտ իր հետ խոսում եր առողյա մանր հոգենը մա-  
սին: Վոսկերիչ Սեղբակը ծնվել ու ծերացել եր ճաղա-  
րաձեւ հովտում ընկած քաղաքի այն հին թաղում, ուր  
ընակմում եր տարիներ շարունակ: Նա իր կյանքի ըն-  
թացքում քաղաքից դուրս չեր գնացել, յերեակայո՞ւմ  
եք, նույնիսկ պնացք չեր նստել, հիացմունքով եր խո-  
սում շողեկառքի մասին: Սեղբակը միայն իր մոր կեն-

դամաստից յան ժամանակ փուրդը ուղարկել եր մոտիկ մի  
ուխտատեղի և այդ յեղակի հանապարհորդությունն  
անջնջելի հիշողություն եր թողել նրա մեջ։ Նա ամեն  
առավլու վաղ գնում եր շուկա, իր ձեռքով տռնելու  
արվա պարենը։

Զամբյուղը ձեռքին ըրջում եր ամբողջ շուկան, սա-  
կարկում յերկար, մինչև տերը բարկանար, հետո  
ձեռքի ափի մեջ մի քանի անգամ հաշվում եր փողը։  
Ու մի քանի բան առնելուց հետո, նրան թվում եր, ին  
իրեն խարեցին։

Վոսկերիչը տարիներ շարունակ քայլել եր իրենց  
տան մայթի վրայով, բայց դիմացի շնչի խարխու  
պատշգամբը չեր նկատել, իսկ մի որ հանկարծ նկա-  
տելուց հետո, ամբողջ յերեք որ զարմացել եր։ Զար-  
մացել եր նա ու որերով մտածել այն մասին, թև լնչո՞ւ  
փոտած պատշգամբը չեն քանդում, չե՞ վոր մի որ կարող  
է փլվել մի անցորդի գլխին։ Զգուշանում եր ինքը, որ-  
քա մեջ մի քանի անգամ զգուշացնում եր իր կնոջը, վոր  
պատշգամբի տակով չանցնի։

Վոսկերիչ Սեղբակը մի սովորություն ուներ. յերբ  
կպչում եր գաղղահաճի ափին աշխատելու, խոսում եր,  
վիճում գործիքների հետ, հետո, յեթե դործիքը հա-  
կառակվեր, այսինքն փշանար, նա նրան խոսում եր  
դետին, ջարդում և ինքնագոհ խոսում ջարդված մասի  
հետ։

Ամեն ամիս, յերբ վոսկերիչն իր խանութի առոքք  
եր տալիս, «Հարբուխով» եր հիվանդանում։

Կազմի պետ կեղեսում նստած վոսկերիչը, իրեն ա-  
սելով, ինքը յեղել եր Հնչակյան կուսակցության մի  
փոքր խմբակի պարտգլուխներից և անձմբ հանացել  
նշանավոր դարներին ու դրավոր ներքին կապեր եր

անեցել կենարոնի հետ : Նա մի մեծ կարոտ ուներ, անասելի ու անհուն մի վիշտ, ցանկություն, տեսնել Հայրենի Մասիսը, «Սուրբ Ծիմիածինը» և նոր միայն հողի գիրկը մտնել : Վասկերիչ Սեղբակը վաղուց իր սենյակի պատի վրայից իջնցրել եր «Մայր Հայաստանի վիշտն» ու նրա փոշոտ շրջանակում դրել Անինի գունատիպ նկարը, իսկ աղաւած ժամերին կտրդում եր յուղուված թերթերով «Հնչակ», «Կոռունի հայոց աշխարհի» և «Արծիվ Վասպուրակոնի» : Այս՝ «Հայադես» Սեղբակ, զու հնոջդ ասում եցիր հաճախ . օթախորդ որերը կուրան ու կերթանք և հույս ունեցիր, վոր սնդուի միջից մի որ պիտի հանես քո այնքան սիրան «Վողը Հայաստանին» ու նորից դնես իր հին, փոշոտ շրջանակում, առանց իմանալու այն նույն կոչկակար Սպիրիդոն Յաղթանի նշանավոր տերթինը, թե՝ առմեն բան Փայթոնի թաքյառի ոյնս ֆուռ կր ու անցածը մեա կը անվերագարձ» :

—————

Մարուչն անեն մի զարդ, յերբ տանում եր վոսկերիչ Սեղբակի մոտ, նրան թվում եր, թե զրանից հետո մյուսն ել չի բնի ու Վասիլին անօպայման, այս՝ անպայման ուղղիչ տնից կվերագառնա :

Նա շաբաթ յերեկոները ժամի լացող զանդերի հետ բաց եր անում սննդակի զռները, խունկ եր ծիռում, սրբի խոնացած ու բրոնդե զույն պատկերի առջև վառում եր զույգ զեղին, վտիտ մոմ : Մարուչը շոքում եր անկյունում, աղոտ լույսի տակ, հորանջում եր ու աղոթում Վասիլի և յերեխայի համար, մինչև վոր կհանգչեցին դույդ մեղբամոմի կերոնները նիրհող պառավի ու մոռացված սրբի պես, իսկ կատուն մոռում եր նրա վոտքերի մոտ :

Կատու, զու հիշո՞ւմ ես, չու կանաչ աչքերի բիբերի  
մեն ինչքան դանդաղ եյիր փոխում Մարուշի համար,  
իսկ Վասիլի սապոդների կրունկները չքոթքոթացին սան-  
դուխների վրա: Յեզ Մարուշը Սեղրակի մոտ ելի մի  
ուրիշ զարդ տարավ: Կատու, Մարուշը քեզ իսկի ա-  
սո՞ւմ եր, վոր վոսկերիչը քիչ եր գնահատում զաբդը,  
փողերը մաս-մաս եր տալիս ու միշտ վերջին մնացածը  
մոռանում եր, հետո վեճ եր լինում: Սեղրակի, դու իտ-  
կապես եյիր մոռանում, բայց մի՞թե չեյիր պրում քո  
ծոցի մաշված տետրակի քրտնած թերթերի վրա: Յեզ  
յերևկոները՝ քո որվա ծախսերը հաշվելուց հետո՝ դու  
մատիտի ծայրը թքոտելով հաստ պիծ եյիր քաշում,  
բայց այն ո՞ւմ վրա:

Մարուշը վերջին զարդն ել ծախսեց. բոլորը բոլորը  
ծախսեց ու սպասեց Վասիլին:

### Ի Բ Ս Բ Է

«Յերօք» առևտուր անող Մաքարեցի խոշոր, սև աչ-  
քերը պահպէլ եյին փափախի տակ, վորը նստել եր նրա  
մեծ քթի ու ականջների վրա: Նա ձախ այտին սպի ու  
քթի տակ բարակ սրած քեղեր ուներ: Յերր ժամտում եր,  
բերանի սպիատակ շարքում յերկու վոսկե ատամ եյին  
փայլում: Յինվորական ներկած Փրենչ ու սապոդներ  
եր հաղնում Մաքարեն: Նա ձեռքում միշտ խաղացնում  
եր հոնի բարակ մի ճիպուտ, հետո, յնիր հոգնում, խը-  
րում եր ձախ սապոդի վիզը: Յեզ միշտ ինչ վոր բան  
ուտելով եր շրջում նա: Յերր ձնվեց Մաքարեն՝ տեսակ  
որին իդդիրի: Դերձակը դիտեր, վոր Մաքարեն յեղել  
եր կամավորական շարքերում, մերկացրած սուրն ար-  
դաւով պարզած, հասել մինչև Մուշ ու Այդեստան: Նա  
տեսել եր դինվորական եշելոններ, հրդեհ, ավերուծ,

ունեցել կենարոնի հետ : Նա մի ժեծ կարստ ուներ, անսանլի ու անհում մի վիշտ, ցանկություն, տեսնել շհայրենի Մասիսը, և Առուրբ Սլմիածինը և նոր միայն հողի գրիլը մանել : Վասկերիչ Սեղբակը վաղուց իր սենյակի պատի վրայից իջնցրել եր ԱՄայր Հայաստանի վիշտն ու նրա փոշոտ շրջանակում դբել Լենինի զունատիպ նկարը, իսկ աղոտ ժամերին կարդում եր յուղությած թերթերով «Հնչակ», «Կոռուկ» հայոց աշխարհին և «Արծիվ» Վասպուրակունիք : Այս՝ «Հայադես» Սեղբակ, զու կնոջը ասում եցիր հաճախ . օջախորդ որեց կուղան ու կերթանն և հույս ունեցիր, վոր սիզուկի միջից մի որ պիտի հանես քո այնքան սիրած «Վողը Հայաստանին» ու նորից դնես իր հին, փոշոտ շրջանակում, առանց իմանալու այն նույն կոշկակար Սպիրիդոն Յաղթյանի նշանավոր տերմինը, թե՝ զամեն բան Փայթոնի թաքյառի պես ֆուռ կր ու անցածը մնա կր անվերադարձ :

Մարուչն ամեն մի զարդ, յնրբ տանում եր վոսկերիչ Սեղբակի մոտ, նրան թվում եր, թե գրանից հետո մյուսն ել չի բերի ու Վասիլին անզայման, այս՝, անպայման ուղղիչ տնից կվերաբառնա:

Նա շաբաթ յնըեկոնները ժամի լացող զանդերի հետ բաց եր անում սկսյակի զռները, խունկ եր ծիսում, սրբի խունացած ու բրոնդի պույն պատկերի առջև վառում եր դույգ զեղին, վտիտ մոմ : Մարուշը շոքում եր անկյունում, աղոտ լույսի տակ, հորանջում եր ու աղոթում Վասիլի և յերեխայի համար, մինչև վոր կհանդչեցին դույգ մնղբամոմի կերպները նիրհող պառավի ու մոռացված սրբի պես, իսկ կատուն մոռում եր նրա վատքերի մոտ :

կատ'ու, զու հիշո՞մ ես, որ կանաչ աշքերի բիթերի  
մնն ինչքան դանդաղ եյիր փոխում Մարուշի համար,  
իսկ Վասիլի սապողների կրունկները չքոյթ քոթացին սան-  
դուխքների վրա: Յեկ Մարուշը Սեղրակի մոտ ելի մի  
ուրիշ զարդ տարավ: Կատու, Մարուշը քեզ իսկի ա-  
սո՞մ եր, վոր վոսկերիչը քիչ եր գնահատում զարդը,  
փողերը մաս-մաս եր տալիս ու միշտ վերջին մնացածը  
մոռանում եր, հետո վեճ եր լինում: Սեղրակի, որւ իս-  
կապես եյիր մոռանում, բայց մի՞թե չեյիր գրում քո  
ծոցի մաշված տետրակի քրտնած թերթերի վրա: Յեկ  
յերևկոնները՝ քո որվա ծախսերը հաշվելուց հետո՝ զու  
մատիտի ծայրը թքոտելով հաստ գիծ եյիր քաշում,  
բայց այն ո՞ւմ վրա:

Մարուշը վերջին զարդն ել ծախսց բոլորը-բոլորը  
ծախսց ու սպասեց Վասիլին:

### Ի Բ Ե Բ Ը

«Զեռքի» առնետուր անող Մաքարեցի խոչոր, ոև աշ-  
քերը պահպան եյին փափախի տակ, վորը նստել եր նրա  
ժեծ քթի ու ականջների վրա: Նա ձախ այտին սպի ու  
քթի տակ բարակ սրած քեղեր ուներ: Յերբ ժատում եր,  
բերանի սպիտակ շարքում յերկու վոսկե ատամ եյին  
փայլում: Զինվորական ներկած ֆրենչ ու սապողներ  
եր հայնում Մաքարեն: Նա ձեռքում միշտ խաղացնում  
եր հոնի բարակ մի ճիպուտ, հետո, յնոր հոգինում, իր-  
բում եր ձախ սապողի վիզը: Յեկ միշտ ինչ վոր բան  
ուտելով եր շրջում նա: Յերբ ձնվեց Մաքարեն՝ ակսակ  
որեն իդղիրի: Դերձակը դիտեր, վոր Մաքարեն յեղել  
եր կամավորական շարքերում, մերկացրած սուրն ար-  
յանով պարզած, հասել մինչև Մուշ ու Այղեստան: Նա  
տհուել եր դինվորական եշելոններ, հրդեհ, ավերած,

դազթ . Ինչե՞ր միայն չեր ուսուի Մաքորեն : Նու չերքի բռամք ամբոններից ճառեր եր քարտակել ոռվածահ ժազպրդին , կոկորդը շօրացրել և քանի-քանի անդամ կունչել «Կիլիկիա» ու «Վեց վիլայեթ» :

Բայց մի որ յերկրում յելավ դասակարգը , ուրիշութիւն որեր յեկան : Շատերն Արագն անցան արկերով , հիշեցին «Մայր Արագուը» . Բայց իրերի բերումով Մաքարեն մնաց : Այդ մի՞թե այն Մաքարեն չեր , վորն իր սենյակի դռներն ու պատուհանները փակում եր ու ինչ վոր խորհրդավոր բաներ եր կատարում ներսը : Վոսկերիչն առում եր , վոր այդ մասին դերձակ Արքահամը չղիտեր , չղիտեյին և այն մարդիկ վորոնք տարան Վասիլին . բայց թե ի՞նչպես կարող եր չիմանալ ինքը թեկուղ հենց այն , վոր Մաքարեն «Պրոիծ հետ կապեր ուներ : Յեվ այդ ամենը , վոսկերչի ասելով , «տղայություն եր» : Սակայն Մաքարեն իր սենյակում դիշերներ եր մաշում , հանուն «կործանվող հայրենիքի» , «անհետացող ազդի» համար : Նրա յերակներում կարծիր դինու պես հոսում եր «հայոց քաջերի»՝ Վարդան ու Տիգրան մեծերի արյունը :

---

Մարուշը ծանոթ խանութպանից ապառիկ եր վերցնում , փող եր վերցնում — ապրում ու սպասում Վասիլին :

Նորից տուքը յեկավ խանութպանին , նու հաշվեցիր փողերը , հետո ապառիկները :

Մյուս որը խանութպանը պատահեց Մարուշին , հիշեցրեց պարտքի ժամին , զժողոհեց ու ել ապառիկ չավեց նրան : Գորշ ու չոր զեմքով խանութպանն այնուհետև զալիս եր միշտ , նայում զժողոհ , սառն ու մաքամ պչքերով , Մարուշից պահանջում պարտքը , դան-

դատվում տուրքերից, հետո վիողի տեղ տանում ձեռքն  
ընկած մոտիկ իրը: Մարուշն ի՞նչ աներ, չեր ողնում  
լացը, աղաջանքը, իսկ մահու պես զունատ խանութ-  
պանն ի՞նչքան լավ-լավ իրեր տարավ:

---

Մեկը շատ կամաց դուռը թակեց: Թակողը չտեսավ  
ու չիմացավ, թե Մարուշը ներսն ի՞նչ եր անում: Քիչ  
կանգնեց. թակեց նորից: Մարուշը դուռը բացեց՝ ու-  
ռած, կարմրած քիթն ու աչքերը սրբելով:

Թակողը Մաքաբեն եր:

Նա շատ կիրթ ձեւերով ներս մտավ ու այնպես ժրալ-  
տաց, վոր բարակ բեղերի սակալից ցույց տվեց իրեն յեր-  
կու վոսկե ատամները: Մարուշն աթոռ առաջարկեց: Մա-  
քաբեն նստեց. խոսեց բեղերը սրելով ու սենյակի իրերի  
վրա աչք ման ածեց: Խոսեցին այնքան, վոր կատուն իր  
բիբերի ձեւ փոխեց: Մաքաբեն ինչ վոր բան առաջարկեց:  
Մարուշը լոեց ու մտածեց. նայեց իրերին: Իրերն այն-  
քան ամուր ու անհայտ թելերով կապվել էին Մարու-  
շին, նա ել՝ իրերին, բայց Մաքաբեն գնալիս փող թու-  
ղեց ու տարավ պատի վրայի ժամացուցը, արծաթի  
դդալներ տարավ, շորեր տարավ: Մի շարաթից հետո  
նա ելի յեկավ, ելի տարավ: Մի որ ել Մարուշը նայեց  
իրերին, տեսավ, վոր չկային շատ բաներ, կորած իրերը  
հիշեց ու լացեց նա:

---

Փախած դերձակ Արրահամի տսելով, քմութե տե-  
ղերը շատ սուր աչքեր ունեյին ու այն աչքերն արևի  
հատկություն ունեյին: Համովելու համար վերձակն ա-  
սում եր. փորձեցեք դիտե: հուրհուրան արևի վոսկե  
ասեղներին: Նա ասում եր և այն, վոր քմութե տեղի աջ-

Թերն ավելի տեղյակ եցին մարդկանց առորյացից, քան  
ինքը—այն «պերվոկլասնիշ» «Ծիայ» «զարիկմախերակու»  
տեր-Դարչոն։ Իմերել իլլիկո։ Եթշտ եր գերձակ Ար-  
քահամը։ —այո՛, վորովհետև այզ բանում հավատացած  
եր վոսկերիչ Սեղբակը, վճրջառիւս հնաց ինչը Մաքո-  
բեն, վորին Սիրիք տարան իր «մութ» գործերի համար։  
Յեզ Մաքաբեն զնալիս դերձակի այրի քրոջն առաց, վոր  
ինքը կասկածում և միայն Աքրահամի մը, ուրիշ վո՛չ  
վոքի։

Լացեց գերձակ Աքրահամի այրի քույրը, բայց նրա-  
նից շատ լացեց Մարուշը՝ վոչ թե Աքրահամի, կամ  
Մաքաբեյի համար, այլ իրեն իրերի, վորոնց փողերը  
հետը տարավ այն՝ «ձեռքի» առևտուր անող իդդիրցին։

---

Աշնան քամին ցրում եր չորացած ու դեղնավուն  
տերենների թումբերը, քշում իր թեփ հետ հողին քսե-  
լով։ Սառը քամին զարնվում եր սպատերին ու հոնդում  
թիթեղե, կղմինարյա կոտրված տանիքների վրա։ Որոր-  
վում եյին քաղաքային փոքրիկ ու մեծ այդինների մերկ  
ծառերը։

Մարուշը առնետի պես տանից ամեն որ մի իր եր  
շուկա հանում։ Ի՞նչքան իրեր ծախեց։ Այն որը, յերբ ել  
վոչինչ չմնաց, նա շուկա տարավ մի զույգ գեղին մո-  
մակալ, սրբի պատկեր, ապակու մեկը կոտրած իր ակ-  
նոցն ու ասեղնադործ մաշված վարագույրներ։

Հորանջում եյին շուկա հանիած փոշոտ իրերը Մա-  
րուշի։

Շուկայում Մարուշի իրերը վոչ վոք չեր պնում։  
Նա՝ խոմացած սե շորերով՝ յեկեղեցու պես նստում  
եր ու տիտուր նայում մոմակալներին և սրբի պատկերին։

Ամեն ուիշեր, յերբ ձադարածե հովտում ընկած քաղաքի փողոցները դատարկվում եյին, քարճը շնչերէ տակով քայլում եր դերձակի այրի, գեղեցիկ քույը։ Նա որորվում եր կարմիր գինով հարբած, ծխախոտի թանձր ծուխը փչում կախված լուսնի կիսված յերեսին։ Նա փխում եր մայթերի ափին, ծառերի տակ դրված կանաչ թքամանների կողերին, ցինիկ ժպտում անցնող ու զարձող մարդկանց։ Հետո մի վոտքի գուլպայի ծայրը յետ եր տանում, նայում ճմրթված փողերին...

Յերբ տուն եր զնում, վոչինչ չեր ասում փոքրիկ յերնխաններին, լալիս եր ու համբուրում նրանց։ Իսկ յոթը տարեկան, ամենամեծը, գիշերները ջնելուց առաջ մտածում եր, թե ինչո՞ւ, յերբ կռվեց ընկերոջ հետ, նա իր մոր մասին այնպիսի վատ խոսք ասաց։ Հետո մտածում եր Մաքարն քեռու մասին, ինչո՞ւ նա ել չի դալիս իրենց տուն, կանֆետներ չի բերում իրեն։ Ուր և Աբրահամ քեռին, յեթե նա իմանա, վոր մայրիկն այսպես ուշ և տուն դալիս ու լաց լինում, չի թողնի։ Չե՛, պետք ե բոլորը, բոլորը հայտնել Աբրահամ քեռուն։

## 9

### ԻՄԵՐԵԼԻ ԴԱԴԱՂՆ ՈՒ ՎԵՐՁԻՆ ՏՐԱՄՎԱՅՐԸ

Յերբ Վասիլն ուղղիչ տնից վերադարձավ՝ առաջինը սղարիկմախեր Դարչոն իմացավ։ Հետո նա շատ ուզեց հիշել, թե բուխարիկի դեպքից քանի՞ տարի անցավ։ Հիմացավ։ Սակայն պարիկմախերը գիտեր, վոր Մարուշի քունքերի մազերը սպիտակել եյին և հարթվել Վասիլի վզի ծալքերն ու սապոզները մաշվել։

Ուղղիչ տնից շատ հուշեր կապվեցին Վասիլի հետ։ Ամեն ինչ այլ ընթացք ստացավ ու նա հասկացավ, սովորեց սապետոկի ելեմենտ» դառնալու միակ ուղիղ

նանապարհը։ Այդ ճանապարհի վրա Վասիլը յերկար կանչնեց, նայեց հեռուն ու շյուղի պես որորմեց քամու զեմ։ Հմայվեց գալիք որսորի փառքով ու յերադներով վես։ Յեվ յերկնքին ննտված մի կառը լուսնի մահիկի ու մահու պես տիտուր՝ նայեց բացվող հրաշուշան արշալույսին։

Վասիլը դնաց այն մտածած ճանապարհով. դնաց, վորակավորվեց Աշխատանքի բորսայում, ու վորպես զապեց, խորհրդային մի ժեծ հիմնարկի շնմքերը մաշեց . . .

---

Պարիկմախեր Դարչոն պատմում եր, վոր փողոցով տարվող ամեն մի ծանօթ ու անծանոթ մեռելի յետելից գնում եր իմերելը, ուսերով բարձրացնում սպիտակ դադաղը, որհնում ճանապարհը նրա։ Պարիկմախեր Դարչոն համոզված դիտեր, վոր իմերել իլիկոն խանութի վերնահարկում պահում եր սեփական ձեռքերով դնած մի դադաղ ու սպիտակ սալան, յերևակայո՞ւմ եք, իրեն մահվան համար։ Ամեն յերեկո իմերելը խանութը փակնելուց հետո գնում եր դադաղի խուփը բարձրացնում, սակայն մահվան տիտուր յերկյուղով փակում նորից և նայում նրա թղթե գունավոր հրեշտակներին ու մտածում, վոր իրեն կյանքն այդ փոքրիկ դադաղումն է հանգչելու։ Նա իր հավիտյան մուտ ընկերոջը խնամում եր խանութի վերնահարկում, ինչպես վուկերիչ Սեղբակն «Արծիկ Վասպուրականին» իր հին սընդուկում։

---

Ու ամեն որ ձադարաձեւ հովտում ընկած քաղաքի բիշերային վերջին արամվայը առեւում եր զուզահետ

մալակի վրայով։ Տրամվայի աղեղը քավում եր լոբին, ողեղի ու լարի որանցից կտպույտ կայծեր եյին յեշ նում և վայր ընկնող տատղերի պես հորչում խավարում։

Վասիլը վերադառնում եր աշխատանքից, մայթերի վրա քայլելով, դլուխը քարշ, նայում վայր ընկնող կայծերին։ Իսկ գործարանների կողմից վերադարձող տրամվայում նստած՝ մտածում եր Ռւնանը։

— Նալոգներից պրծա՛ր, հմի ել արի ու սայուզի քրեհ տուրքա, լալ զյանքն նո ա՞...

Երբ Վասիլը քայլում եր, սասլողները սալահատուկների վրա քոթքոթացնելով, դիշերային վերջին տրամվայը պարկից ներս եր մտնում ու նրա յետնից փակվում եյին յերկաթե ծանր դռները...

---

Յեվ տարիներ չարունակ ձադարաձե քաղաքի միջով հոսեց գետը։ իր բավագույն ջրերի հետ կամուրջների տակով ի՞նչքան տիղմ քշեց ու տարալ...

Լուսինն ամպերի արանքից ծլավ կիսված լիմոնի պես, նայեց քաղաքին ու յեշինքի կապույտ ակսեցում շաղ տվեց իր արծաթե կուտերը։ Ի՞նչքան աստղեր կախվեցին։ Քաղաքը կարծես լուսե մի լիճ լիներ ու տատղերը ցոլացին նրա կապույտ ջրերում։

Արեւ միշտ յելավ, հալեց աստղերը, վոնց հուրուցներ, և գունատ լուսինը։

Ու յերկաթը դալիս եր, լայնացնում թաղի փողոցները նեղ։ Ռուսս եր ապրում թաղը դորշ ու մահի տագնապ։

Շիկացած դիմոկի պես արել թող յելնի միշտ ու  
գնտն ել հոսե քաղաքի միջով, սակայն մնացածը մի ու-  
րիշ անդամ, հիմա—մնաք բարե...

Դարման—աշուն

1929 թ.



## ՄԱՍՈՒՇ

Ամեն առավոտ, յերբ վաղորդյան մութուլուսին, փոքրիկ գավառաքաղաքի վրա տարածվում եր յեկեղեցու զանգակների ծլնդոցը, արթնանում եր Հաջի Սեթը: Զանդակների ծույլ ծլնդոցի հետ բաց եր անում տան դուռը, կանգնում շեմքին ու նայում քաղաքի փոքրիկ աներին, ազռավիլ պես կանգնած ու կտուրաներից զեպի վեր ցցված՝ վոսկե ծոված խաչը ծայրին՝ յեկեղեցուն, բարձրացող նոր շենքերին, հարևանի քանդվող տանն ու հողե պատերին:

Հետո Հաջին, ձեռնափայտին հենված, առավոտյան մշուշում, քաղաքի փոշոտ փողոցի մեջտեղով որոր վելով զնում եր լացող զանգակների կանչին:

Յածրահասակ մարդ եր Հաջի Սեթը: Նեղ ուսեր ու կարճ վոտքեր ուներ նա: Հաջու դեմքը հեռվից նման եր բորբոսնած հացի ու քիթը սուր զանակի պես խըրմել եր նրա վրա: Հաջի Սեթի գունատ ու չեչոտ դեմքին միբուքն ու բնդերն աճել եյին մամուռի նման: Տարիները կախվել եյին նրա դեմքի փոշոտ մազերից ու զրթերը շուլալել ներս: Տարիների ծանրությունից Հաջու բերանի անկյունները մանգաղի պես ծովել եյին փոքրիկ ու սրածայր ծնոտին, Հաջի Սեթի քթին նստած դեղին ակնոցների միջից նայում եյին մախաթի ծակերի նման նրա նեղ աչքերը: Ակնոցների վրա ձեռքի տփի պես նստել եր ճենճոտ դլխարկի մի ծայրը

պատռված՝ կիովիրոկը, զորի վրա Հաջին դըել եր իր ա-  
նունը, իսկ մայթուլներսով կարկատած կոշիկներում՝  
հաղած տարեթիվը։ Բռնութու պես խունացել եր Հաջու  
հին վերարկուն։ Արևը թեկուղ խանձող փոշի մաղեր,  
Հաջին ուսերից չեր հանի վերարկուն։

Հիշում եր Հաջին։ տարիներ առաջ դանդակներ լա-  
ցին մի որ, յերբ իր հայրը մահացավ։

Ու Հաջու հայրը, յեկեղեցու պես մոայլ, ամեն որ  
յելնում եր փողոցի վաղորդյան մշուշի միջից, նայում  
ինկի պես աչքերով։—

«Հիշում ես», — առում եր Սեթին։

Հաջու մայրը մեռնելիս կտակ արեց, վոր լավ նայի  
պապերից մնացած փոքրիկ տանը, ուր ապրում եր Սե-  
թը։ Նորոգել տա հողե կտուրն ու ճեղքված պատերը։  
Նայի, վոր հարևանը տունը շինելիս իրենից մի քար  
անդամ չգողանա։

Հիշում եր Հաջին, տան ջրհորի մոտ մի չինար  
տնկեց։ իր հիշատակը թոռներին թողնելու համար;  
Զինարին բարձրացավ տափակ տների արանքից ու ծեծ-  
վեց հողմերի դեմ։

Եերբ վաղորդյան մշուշը յելնում եր քաղաքի ու  
փողոցների վրայից և արթնանում եր որը, հեռանում  
եր Հաջու հայրը։ Նրա տեղը Հաջու աչքերի առջև մնում  
եր լոկ մի կամարակապ ու սառը հայացքով յեկեղեցի։

---

Եեխաշաղախ, ցածրիկ ու իինաշեն պատերով տներ  
կային, կտուրներ հողե, փողոցներ անհարթ։ Տները  
խառնվում, հենվում եյին իրար ու դեմ ընկնում մի  
ծուռ պատի։ Ցաք ու ցրիվ և անկանոն թափվել եյին  
դավառական քաղաքի տափակ տները։

Հաջի Սեթի տունը դրսից ցածրիկ պատեր ու դար-

բաս ուներ, ներսից վոքը կայաթ, հայտթը՝ մի ժենար ու խորը ջրեսր: Գալառական քաղաքի դորշ կտուրների հետեւից մի քանի սլածիոց շինարներ գունատ՝ նայում եյին ծովի պես խոր ու կապույտ յերկնքի ճերմակ, փրփուր ամպերին: Իսկ սապատավոր լեռներից ու հասուն, հոսուն արտերի բրոնզեփայլ դաշտերից՝ քաղաքի և շինարիների վրա փչում եր շնչուն քամին:

Այն քաղաքում քանդում եյին խճաշեն պատերը ցեխի, բաղվում եյին փողոցներ, հրապարակներ յերազմող. յերնում եյին շենքեր նորանոր՝ վուկեգույն տուֆից:

Այնպես համառ յելնում եր նոր՝ ուժը և յերկաթ, Հաղթական ձիու պես արշավում դոփելով ու վընջում Հողեղն դաշտերի վրա: Այնտեղ յերգում եր քարը, հողը, շարժվող մկանն ամեն մի. —

«Կըսնդենք մենք հինն ու մի նոր աշխարհ կկառուց ենք»:

Լուսինը յելնում եր խմորոտ յերեսով, նայում չինարներին, փողոցներում արծաթի պես թափվող կաթնահամ աղբյուրներին:

Աքաղաղը կանչում եր հեռվից:

Իսկ յերը լուսին չկար, թռչում եր չողիկը գաղաղողի:

Հաջին յելնում եր յեկեղեցուց, նստում գիմացի պատի տակ թափված քարերի վրա, նայում փողոցի փռշուն ու կարծես թե հիշում եր փոշու միջից:

Որը-որի նման մաշվեց: Ուրիշ որեր յեկան: Ուդապաղաղորն Հաջին ժպտաց քեղի ծայրով, յերը չորա-

ցած ժամկոչը հայտնեց, վոր պատերազմ ու մահ և լինելու մեջ :

Դաշտերում սուլեց արճինե քամին:

Մայմերում խոնավ ի՞նչքան վորբեր մեռան :

Դադաղադործը դեղին վոսկիներ հաշվեց, նայեց ժամի ծոված խաչին ու աղոթեց :

— Տե՛ր, պատերազմը թող լինի դեռ:

Ու հաշվնց, թե որական քանի դադաղ կշինի:

Դադաղագործը քնեց ու արթնացավ ելի. ուրիշ ուրեր յեկան նորից :

Յերկրում դասակարգը յելավ բոռնցքի պես ու Հաջի Սեթի «մունդիրներով» տղեն «ֆոանդների» յերկիրը հասավ :

---

Փոշու պես նստում եր մամուռը Սեթի տան պատերին, ջրհորի կլոր քարին ու դարբատին, և շունք հայաթում շինարի ծառից կապած վոռնաց ելի :

Տան կտուրից մի քար ընկավ, խրվեց հողի մեջ ամսաց անշարժ :

Գերեզմանի ոլես սառն ու թախծուտ հորանջում եր Սեթի տամը, ջրհորը, քարն ու հողն անդամ : Իսկ չենարին հին տան վրա փափսում եր մի մեղեղի. կարծես թե տան տերը լքնէ եր, ամեն ինչ մատնել անշարժության և հեռացել ընդմիշտ : Ու թվում եր, թե վոչ մի ձեռք Սեթի տանն ու հայաթում վոչինչ չեր շարժում, խանդարելով նրա անդորր նիրհը : Լոկ շունն եր չինարու ծառից կապած վոռնում դառնորեն :

Սեթի տան դարբասը փակված եր միշտ ու նրա շան ահից հարեւանն անդամ ներս չեր նայում : Յեկ մամոռա

զարեքով առն դարբասից կախված յերկաթե լեզվակն ել ժանդուավել եր լրելուց :

Մարդիկ յիկան, չափացին տնելը, փողոցները լաշ-  
հացնելու համար :

Քլունդը խրվեց Հաջու տան հողի պատին ու կացե-  
նը ջրհորի ափի շինարուն մահվան մեղեղի յերգել  
տվեց : Թվաց թե կացինն ու քլունդը խրվեցին Հաջու  
կողերին . նա Հայհոյնց, բոլի մեջ վերցրեց հողը, համ-  
րուքնց քարը, վախթաթվեց շինարին : Իսկ շունը Հա-  
ջու վոտքերի առջե շարժում եր պոչը, դունչը քսում  
հողին, կատաղած բռնում ոտարների շորերից :

—Անորդենե՞ր, ինչ եք անում, հիշատակս... ինձ  
ել սպանեցեք հենց հոտեղ, տանս վրա, վորի ամեն մի  
քարը կապված ե հետո :

Ու Հաջուն թվաց, թե վոտքերի տակի հողը թու-  
լացավ . քանդվեց և կարծես ընկնում եր ջրհորի հա-  
տակը, շունչը կարգում եր, ու շուրջը մթնեց ջրհորի  
ողիս :

—Ես գանգատ կերթամ, — ասաց Հաջին :

—Ա՛, բիձա, հերիք գանգատ երթաս, զերեղմանիդ  
հողն ել կտանք, քարն ել, — ասաց մի հասակավոր բան-  
դոր :

Անողոք և ուժեղ Եյին մարդիկ :

Ու Հաջին գանգատ զնաց՝ իր հավատարիմ բըր-  
դուտ գամփո շունը հետեւից :

Թնում ե Հաջին փողոցով . թվում եր շուտ կհամնի,  
յեթե նայի մոտիկ քարին, հասնի նրան ու անցնի, նորից  
նայի մյուսին :

Ու Հաջին հանկարծ քարի տեղ նայեց հեռազբաւ-  
սյանը : Կանգնեց : Նայեց վերեվ , և Հաջու միտքը թվաց  
թե հեռազբաօյտն ուսերի թելերի միջով քայլերից ել  
արագ դնաց ու հասավ դավառական քաղաքի փոքրիկ  
հեռազբատանը : Հետո փոստը հիշեց , նամակներ հի-  
շեց , իրեն տղային հիշեց Հաջին :

Եեվ հիշողության անոանձ ձիու նման շարժեց Հա-  
ջու թույլ քայլերն ու տարավ նրան :

Հաջին բարձրացավ դավառական քաղաքի փոստի  
սանդուխներով , մտավ ներս ու պարոքատերի պետ  
կանդնեց ցրիչի առջե , յերկար նայեց , ճպրուտ , խառ-  
նրված աչքերով :

— Ծոոր ել նամակ չեկա՞վ :

Հետո նա մոտեցավ մի անկյունում պատին փակ-  
ցըված սխալ ու անհասցե ծրարներով նամակների :  
Կանդնեց , յերկար նայեց :

— Զե՞ , յես գրեցի ! Հը՞ , գրեցի՞ : Ու Հաջի Սեթը  
նայում էր դեղին մի ծրարի , վորի վրա վոշի յեր նստել :

Զե՞ , Սեթը «գրեց» հասցեն ու գցեց այն «յաշիկը» ,  
վորտեղից գալիս եյին հավաքում նամակներն ու տա-  
նում կայարան :

Հաջին հիշեց փոքրիկ կայարանը հեռու ու յելակ  
փողոց :

— Պիտի շտապնել , հարցնել ենուեղ՝ նամակս տու-  
րե՞լ են տղիս :

Մութն ընկնում եր գետին :

Աշնանային անձրեւին եր մաղվում դաշտերի վրա :

Ու Հաջին շան հետ կայարան հասավ :

Հարցրեց առաջին պատահողին :

— Պոյե՞զդը . . .

— Աւշացար . գնա՞յ :

Հաջին շտապ յելավ «պերքոն» կանդնեց ու նայեց  
հեռացող գնացքի հետեվի կարմիր լույսերին :

Աշնանային բարակ անձրեւը թափվում եր Հաջու  
ուսերին : Իսկ նա նորից նայում եր հեռացող կարմիր  
լույսերին :

— Քանդեցին ... կորավ, հիշատակու ...

Եկրք Հաջին մի անդամ նև նայեց՝ լույսերը չկային :

Կայարանի լույսերը ցոլում եյին անձրեսից փայլով  
կավտպույն «պերքոն» վրա ու ռելսերի տակ լճացած  
ժազութուտ ջրերում :

Հաջին ընկավ «պերքոն» ու ռելսերի վրա :

---

Յեվ շունը լիզում եր գետնի վրա ընկած պագա-  
ղաղործ Հաջի Սեթի գոլը յերեսը, հետո պոչը ծալում  
հետեվի վոտների արեն ու դունչը կայարանի և քաղա-  
քի վրա տնկած՝ վունում գառնորեն :

Ու շունը շուտ-շուտ կրծում եր փայլուն ռելսե-  
րը, վորոնց վրայով սահեց գնացքն ու հեռացան կար-  
միր լույսերը : Իսկ դաշաղաղործ Հաջի Սեթի  
ճմրթված հին գլխարկին ու կոտրտված ակնոցներն  
ընկած եյին մազութուտ և խոնավ քարերի վրա :

1929. Ապրիլ.

## ԿԱՌԱՊԱՆ

1

Դավառական փոքրիկ քաղաքում շատերն եցին ճանաչում կառապան քեռի Արզումանին :

Դիշերները, յերբ քեռի Արզումանը պառկում եր քնելու, մտածում եր առորյա մանր հոգսների, կալոսնիկ Բարուամի փոքրիկ խանութի տուրքի ու ընտանիքի մասին : Հետո արթնացնում եր կնոջն ու հարցնում . կաշկաչի Մելքոնի կինը աղա յերել՝ թե՞ աղջիկ : Իսկ կինը չեր արթնանում, վորովհետեւ Քեռի Արզումանի բնդերի ու մորուքի միջից մէշտ վիչում եր դառնահամ ողու չոր հոռը : Քեռի Արզումանը մտածում եր և նորից հարցնում կնոջը, թե ի՞նչ պիտի անի պլխարկ կարող Յենոքը, յերբ նրա փոքրիկ տան կեսն ընկել և քաղաքի նոր պլանի մեջ, կամ թե Բախուլ Շատուրը խանութը վոր փակեց, ինչո՞վ պիտի ընտանիքը պահի : Քեռի Արզումանը մտածում եր, վոր լավ կանի Բախուլ Շատուրը, յեթե տեղավորվի ծառայության : Կառապանը մտածում եր և այն մասին, թե քաղաքի մի հին թաղը վոր քանդեցին այդի շինելու՝ ինչքա՞ն ու ի՞նչ ծոտ են տնկելու : Նա նորից արթնացնում եր կնոյն ու հարցնում, յերբ յերկրաշարժ ել լինում՝ վլվում և տունը, առաստաղում ապրող միներն ո՞ւր են փախչում :

Գոմում խրխնջում եր ձին ու Քեռի Արզումանը շրջվում եր մյօւս կողին :

Դավառական քաղաքի աշնան որերը տիտեր նյին  
լինում ու ձանձրալի, փոշեխառն քամին արշավում եր  
կտուրների ու փողոցների վրա։ Աշնանն անընդհատ  
բարակ անձրեն եր գալիս, հետո փողոցներում լճակներ  
և յին դոյանում ու ցեխը պառկում եր մայթերի վրա։  
Թուլ-թուլ կախվում եյին անձրենի տակ քաղաքային  
դատարկ այգու և տնակների հատ ու կենտ ու մերկ ծառ-  
ուերի թրջված ծվենները։ Մարդիկ շրջում եյին սակավ  
ու քչերն եյին կառք վարձում։ Իսկ Քեռի Արզումանը  
կայարանում յերկար սակարկում եր անձանոթ ուղևորի  
հետ ու հետո դժգոհում, վոր թանկացել ե գարին։

Քեռի Արզումանը հաճախ հին կառքի մասերը նո-  
րոգել տալու յեր տանում Կալոսնիկ Բարսամի մոտ,  
հետո նորից դժգոհում առորյա հոգսերից։

Փոքրիկ քաղաքում փոքրիկ լուրն անգամ տա-  
րածվում ե բնակիչների մեջ։ Յեվ Քեռի Արզումանն ել  
Կալոսնիկ Բարսամից լսեց, վոր շուտով քաղաքում  
ավտորուս են բերելու։

Կառապանը տիրեց, հետո Կալոսնիկը։

Քեռի Արզումանին թվաց, վոր յերկաթե մեքենան  
արդեն մտել ե փոքրիկ քաղաքը։ Վրնջում են լղարիկ  
ձիերն իրեն, հետո խրանում, իսկ ինքն ընկնում ե կառ-  
քից ու կնուտը կոտրվում։ Կառապանին թվաց, թե  
կառքի անիվները դլորվելով վշրմեցին, իսկ Կալոսնիկը  
մտածեց, վոր Քեռի Արզումանը «Ֆայտոնը» ել չի բերի  
նորոգել տալու։ Քեռի Արզումանը Կալոսնիկին և հա-  
վատաց, և չհավատաց. բայց հայհոյեց։ Հետո բար-  
ձրացրեց դլուխը, նայեց հեռու ու նրա բնղերը ժպտա-  
ցին։ Կառապանը պատմեց. քաղաքի «հարսարլաները»

տեղը «թայցնթայցնեա» ու լաշտէ կտպած յելնեն քաղմի-  
սից, պէտչ ավու նուտուն վերադառնան տուծ, կամ կի-  
րակի որերը, ինչպես ընդունված ե, լվացք տանեն հե-  
ռու գետը: Կառապանն ու կալոսնիկը ծիծաղեցին:

Ճիշտ ե՞ , վոր մաբդիկ խորն ուրախությունից լաց  
են լինում, յերբ դունում են իրենց կորած հարազատին:  
Փոքրիկ քաղաքը «լալիս եր», իսկ կառապանն ու կալոս-  
նիկը ծիծաղում:

Քեռի Արզումանն են դիշեր յերբ պառկեց քնելու,  
նա յել չմտածեց հարեվանների ու մկների մասին և վոչ  
ել արթնացրեց կնոջը: Նրա ուղեղի ծալքերում պարա-  
գում ելին իրեն հին կառքի անիվները:

### 3

Քեռի Արզումանը դիշերները հաճախ արթնացնում  
եր կնոջն ու պասմում բրդուտ յերեսով ու ցածրահասակ  
ծերունի կալոսնիկ Բարսամի մասին: Կառապանը պատ-  
մում եր, վոր կալոսնիկի փոքրիկ ու հին խանութը, վո-  
րը տախտակե կոտրտված փեղկեր ուներ, դժոնվում եր  
քաղաքի ամենածայրամասում, դերեզմանոցի ճանա-  
պարհի վրա: Կալոսնիկը տարիներ շարունակ խանութի  
դուռն մոտ պահում եր յերկու հատ հին աթոռ: Այդ  
խորհրդավոր աթոռների դոյցության մասին գիտեյին  
փոքրիկ քաղաքի կենդանի ու մեռած բնակիչները: Յերբ  
ասենք մի մեռել տարվում եր դերեզմանատուն, ճանա-  
պարհին վերջին անդամ դրվում եր հանգստանալու, այդ  
բոլորը կատարվում եր կալոսնիկ Բարսամի խանութի  
պլան մոտ, նրա հին աթոռների վրա: Կալոսնիկ Բար-  
սամի այդ հին ու խորհրդավոր աթոռները, վորոնք  
այնքան խնամքով պահվում ելին խանութօսմ, ճառա-

յում եյին հաստակ այդ միակ բանին, վորի համար ամեն անդամ նրա կոշտ ու սեվ բռան մեջ դրվում եյին սպիտակ-սպիտակ արծաթներ։ Հետո կալոսնիկը փակում եր խանութը և թափորի հետ հանդիսական քայլերով գնում դերեղմանատուն, հանապարհին պատահած ծանոթներին պատմելով հանգուցյալի մասին։

Քեռի Արզումանը կնոջը պատմում եր, յերբ կիրակի ու տոն որերին քաղաքի արհեստավորները խըմբերով հավաքվում եյին զայտավախանաների դուները, կամ գնում քաղաքային փոքրիկ այդում զբանելու և յերկար ու կանաչ նստարանների վրա նստել-խոսելու. Կալոսնիկ Բարսամը գնում եր դերեղմանատուն, շրջում մինչև կեսոր, փնտում ծանոթների գերեզմանները, հետո ինչ վոր տեղ հողի յերկարությունը չափում ձեռքի վայտով։ Իսկ ինչո՞ւ յեր այդպես անում ծերացած կալոսնիկ Բարսամը—դիտեյին շատ-շատերը։ «Իրեն տարուուների վրա—իրեն պառկելն ելի միտքն ե ընկել»—ասում եր գերեզմանոցի ծառան։

Քեռի Արզումանը յերբ կնոջը պատմում ել կալոսնիկի մասին, յերբեք չեր մոռանում այն դեպքը, թե ինչպես մի տարի նրա հետ իրեն կառքով գնացել են քաղաքից դուրս ման գալու և գետի կամուրջից անցնելիս Բարսամը կառքից իջել ու անցել է վոտքով։ Իսկ ինչո՞ւ յե այդպես արել կալոսնիկը, նա վոչ վոքի չի ասել։ Իհարկե, Քեռի Արզումանն այդ բոլորի պատճառը դիմեր։

#### 4

Շնոպասելին կատարվեց աշնանային մի որ։

